ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(79-րդ տարի) Թիվ-8 (1702) Օգոստոս 2025

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Խաղաղության միֆն ու իրարամերժ տրամաբանությունները (էջ 1-3)

2 - Քաղաքական

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
Թրամփ-Փաշինյան-Ալիև եռակողմ հանդիպման չհասցեագրված հարցերը (էջ 4-6)

Արտաշես Շահբազյան
Ինչպիսին կլինի մեր ապագան, եթե Նիկոլի իշխանությունը վերարտադրվի (էջ 7-10)

Սարգիս Սարգսյան
Հայաստանը «միջանցքների պատերազմի» թատերաբեմ (էջ 11-18)

3 - Հայ Դատ

Անի Մելքոնյան
Սևրի սինդրոմը կամ հայոց պահանջատիրության ուրացման փաշինյանական քաղաքականությունը (էջ 19-21)

4 - Աշխարհաքաղաքական

Կարէն Շահէ Ճինպաշեան
Ֆրանս-թրքական լարուածութիւն (էջ 22-24)

5 - Թարգմանություն

Առաջին Ռուսական
Մոսկվայի վրա Բաքվի հարձակումը նախապատրաստել են տարիներ շարունակ. բրիտանական հատուկ ծառայությունները գործում են. «քնած գործակալներն» արթնացել են (էջ 25-28)

6 - Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Պատասխանատվության բացակայության ավերիչ հետևանքները (էջ 29-31)

7 - Տեսակետ

Մովսէս Ճիրանի
«Է»-ն իբրեւ ազգային խորհրդանշան Ինչո՞ւ «Է»-ն եւ ոչ թէ ուրիշ մը...(էջ 32-35)

8 - Ընթերցումներ

Արմեն Կարապետյան
Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության արտացոլումը «Ճակատամարտում» (էջ 36-38)

9 - Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Աւելի արդիւնաւէտ քարոզչական կառոյցի մը ի խնդիր (էջ 39-40)

Խաղաղության միֆն ու իրարամերժ տրամաբանությունները

ԱՄՆ Նախագահի միջնորդությամբ Վաշինգտոնում կայացված համաձայնություններին անմիջապես հաջորդեց ՔՊ-ականների, նրանց արբանյակ ուժերի ու ֆեյք հասցեատերերի խանդավառ գրոհը: Վերևից նախապես թելադրված այս քարոզչական բեմադրությունը փորձ էր տպավորություն ստեղծելու, թե Նիկոլ Փաշինյանը մեծ հաջողության է հասել, նույնիսկ «պալատամերձ» արվեստագետներից մեկը վարչապետի «վաշինգտոնյան սխրանքը» հավասարեցրեց Նժդեհի կողմից Սյունիքը պահելու քաջագործության հետ: Մի քանի օր անց նույն տրամադրությունը խաղալով Նիկոլ Փաշինյանը փորձեց այդ մեծ «աչքալուսանքը» փոխանցել մամուլի ասուլիսի ճանապարհով, համոզելով իր ունկնդրին, որ հայ ժողովուրդը օգոստոսի 8-ից ապրում է բոլորովին այլ իրականության մեջ, այսպես կոչված, խաղաղության դարաշրջանում: Ակնհայտ է, որ 7 տարվա անփառունակ կառավարումից հետո Նիկոլն ու նիկոլականներն ավելի լավ բան չունեն ընտրական քվեի դիմաց ծախելու ժողովրդին, քան խաղաղության վերջնական հաստատման մասին պատրանքը: Ինչպես այս մասին Նիկոլն ակնարկեց նույն ասուլիսում, ինքը դեռ շատ կխոսի այդ մասին, և պարզ է, որ մինչև ընտրությունները ինքն ու իր սազանդարներն անընդհատ փորձելու են խլացնել ժողովրդի ականջները այս հանկերգով:

Եթե անգամ չխորանանք Վաշինգտոնում քննարկված հարցերի մեջ, ամենացցուն փաստն այն է, որ երկրների միջև Խաղաղության ոչ մի պայմանագիր էլ չի ստորագրվել, թեև, ըստ Ալիևի հրապարակային հայտարարությունների, առկա փաստաթղթերի բոլոր պայմանները թելադրված են եղել իրենց կողմից, և Հայաստանի ղեկավարն անվերապահորեն ընդունել է դրանք: Այնուամենայնիվ, Վաշինգտոնում ընդամենը նախաստորագրվել է Խաղաղության պայմանագրի նախագիծը, ինչը նշանակում է, որ այն մնում է իրավաբանական ոչ մի ուժ չունեցող և պարտավորություն չթելադրող թղթի կտոր: Հասկանալով, սակայն, որ մինչև Հայաստանում տեղի ունենալիք ընտրությունները այլևս ավելին չի կարող ակնկալել Ալիևից, Փաշինյանը փրփուրից կառչած խեղդվողի պես որոշել է հայ ժողովրդի վրա ծախել նախաստորագրված թղթի կտորը: Մեկը, ով պատերազմում խայտառակ ձախողվեց թշնամուն զիջելով նրա կողմից ոչ միայն զավթված, այլև չգրավված տարածքներ, սակայն շատերին համոզեց, թե այդ տարածքները նախկինները հանձնել էին իրենից առաջ, թերևս ակնկալում է, որ նույն մարդկանց վրա կկարողանա ծախել նաև գեբելյան այս մեծ սուտը:

Իսկ ի՞նչ հերոսական ձեռքբերման մասին է խոսքը, եթե անգամ ենթադրենք թե Նիկոլին հաջողվեր հասնելու հիշյալ պայմանագրի վավերացմանը:

Պատմությունը վկայում է, որ ավելի քան հարյուր տարի Սյունիքի ճանապարհին տիրանալու ձգտումը

եղել է պանթուրանիզմի և նրա թիկունքում կանգնած բրիտանացիների տարածաշրջանի աշխարհաքաղաքական գերնպատակներից մեկը:

1918 թվականին Առաջին հանրապետության հիմնադիր և Ներքին գործոց նախարար Արամ Մանուկյանը Երևանում բանակցում էր Խալիլ փաշայի հետ: Թուրք զորահրամանատարը նույնիսկ կատարում է Արամի որոշ ցանկությունները, օրինակ՝ Արամի թելադրանքով Բաշ Գառնիի ձորերից հեռացվում են զինված թաթար բաշիբոզուկները, որոնք նեղություն էին պատճառում տեղի բնակչությանը, կամ Խալիլը սովյալ Հայաստանին է թողնում 25.000 փութ ցորեն: Խալիլը հայտնում է, որ անգամ Ղարաբաղը պատրաստ են զիջելու, միայն թե հայերն իրենց տան Մեղրիի ճանապարհը: Այստեղ Արամը կտրուկ մերժում է, և սրանով բանակցություններն ավարտվում են: Թուրքերի և ադրբեջանցիների այս ռազմավարական երազանքը չմարեց նաև խորհրդային տասնամյակների ընթացքում, հայտնի է, որ կայսրության վերջին շրջանում այդպիսի խնդրանքով Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանին է դիմել Հեյդար Ալիևը, բայց Դեմիրճյանը ևս ազգային ու պետական մտածողությամբ օժտված գործիչ էր, հայ ժողովրդի կենսական շահերին դավաճանել չէր կարող և նույնպես մերժել է այդ առաջարկը: Հայաստանի անկախության շրջանում ճանապարհի նկատմամբ հետաքրքրությունը սկսում է աճել նաև Արևմուտքի մոտ, քանի որ այն, ինչին ցանկանում էր հասնել թուրքադրբեջանական տանդեմը որպես Նախիջևանը Ադրբեջանին կապող, միաժամանակ Թուրքիան Ադրբեջանին ու Միջին Ասիային կապող պանթուրանիզմի ճանապարհ, միաժամանակ դառնում էր ՆԱՏՕ-ի միջանցք: Այս տարիներին շրջանառության մեջ դրվեց ամերիկացի քաղաքական գործիչ և վերլուծաբան Պոլ Գոբլի առաջարկը, որը ենթադրում էր Լաչինի միջանցքը Հայաստանին զի-

ջելու փոխարեն Ադրբեջանին զիջել, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքը: Մինչ թուրք-բրիտանական դրածոների իշխանության գալը, Հայաստանի բոլոր իշխանությունները մերժել են նաև այս ծրագիրը, թեև տարբեր բանակցությունների ժամանակ արծարծվել է Հայաստանի լիարժեք պատկանելության և վերահսկողության ներքո Ադրբեջանի և Նախիջևանի միջև հաղորդակցական կապը վերականգնելու մասին:

Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ական իշխանախումբը, չգիտես ինչ վերերկրային իրավասություններ վերապահելով իրենց, Արցախը ծախելուց հետո այս անգամ Մեղրու՝ զուտ հայկական պատկանելություն ունեցող տարածքով անցնող ճանապարհի կառավարումը հանձնեցին (արտապատվիրակեցին) ամերիկացիներին: Իրեն հատուկ ստախոսությամբ ու ցինիզմով Նիկոլ Փաշինյանը տարածքի այս հանձնումը նախապես համեմատել էր Զվարթնոց օդանավակայանն արտաքին կառավարման հանձնելու անհամեմատելի օրինակի հետ: Միաժամանակ Ադրբեջանը ստացել է Նախիջևանի հետ անխոչընդոտ կապի իրավունք: Սա չի՞ նշանակում արդյոք, որ հայկական և նույնիսկ վերահսկողություն իրականացնող ամերիկյան կողմը իրավունք չեն ունենալու կանգնեցնելու և զննելու այդ ճանապարհով անցնող որևէ գնացք: Հարցերի և մանրամասների ողջ համալիրի մեջ շատ բան հայ ժողովրդի համար մնում է մութ: Դատելով, նախադեպերից, մենք լրջագույն մտահոգությունների պատճառ ունենք այս հարցում, քանի որ Հայաստանի, այսպես կոչված, թավշյա, ժողովրդավարական իշխանություններն արդեն յոթ տարի բանակցում և գրավոր կամ բանավոր հանձնառություններ են ստանձնում՝ դրանք թաքցնելով ժողովրդից: Մյուս կողմից, այլևս ակնհայտ է, որ Հայաստանի ճակատագիրը տնօրինողներն ի վերջո ընդունում են Ադրբեջանի ցանկացած պահանջը: Այստեղ հիշենք Իլհամ Ալիևի այն հայտարարությունը, որ Զանգեզուրի միջանցքով անցնելիս ադրբեջանցին չպետք է տեսնի որևէ օտար մաքսավորի դեմք: Մյուս կողմից, և այստեղ ընդհանրացնելով, կարելի է համոզված ասել, որ Նիկոլին իրեն ենթարկեցրած Ալիևը Խաղաղության պայմանագիրը դեռ երկար չի ստորագրելու՝ անընդհատ ավելացնելով ու խորացնելով իր նորանոր պահանջները:

Նիկոլ Փաշինյանը, խաղարկելով խաղաղության հաստատման սուտը, հասավ այնտեղ, որ հայտարարեց, թե պետական բյուջեում պաշտպանական նպատակով նախատեսվող ծախսերը հաջորդ տարի և ընդհանրապես ավելացնելու անհրաժեշտություն տրամաբանորեն չկա այլևս: Ակնհայտորեն հայ-ադրբեջանական հարաբերությունների և դրանց զարգացման հարցում Փաշինյանի և Ալիևի տրամաբանությունները հակասում են իրար: Ալիևն օրինակ կարծում է, որ ցանկացած պահի նոր պատերազմը կարող է սկսվել և այդ պատճառով ավելացնում է ռազմական ծախսերը, բանակի վերազինումն ու մարտունակությունը: Ինչ վերջնական խաղաղության մասին կարող է խոսք լինել, եթե Վաշինգտոնյան խաղաղության բանակցություններից ընդամենը օրեր անց ադրբեջանական զինված ուժերը դիրքային նոր առաջխաղացում իրականացրեցին Ջերմուկում, էլ չասած որ Ադրբեջանը ոչ թե պատրաստվում է դուրս գալ, այլ ավելի է ամրապնդում դիրքերը Հայաստանից գրված տարածքներում: Ինչ խաղաղության

մասին կարող է խոսք լինել եթե գնալով ոչ թե նվազում, այլ ավելի բարձրագոչ է դառնում Ադրբեջանի նախագահի ռազմատենչ հռետորաբանությունը, Բաքվում շարունակվում է Արցախի պատանդառված ռազմաքաղաքական ղեկավարության խայտառակ դատավարությունը, բացարձակորեն մերժվում է ճանաչել իրենց բնօրրանի նկատմամբ արցախահայության իրավունքների հարցը, իսկ Արցախում ամեն օր ոչնչացվում են հայության պատմական, հոգևոր ու մշակութային հետքերը: Դրա դիմաց Հայաստանի ղեկավարությունը վախից մերժում է հաղթանակ բառի գործածությունն առհասարակ, Նախիջևանը թուրքավարի անվանում է Նախճվան, ադրբեջանցիներից ավելի կատաղորեն պայքարում է Արցախի և արցախցիների իրավունքների համար ձայն բարձրացնողների դեմ՝ չգրգռելու համար ադրբեջանցիների զայրույթը: Ակնառու է, որ հայ-ադրբեջանական հարաբերությունների հարցում եթե Ալիևի տրամաբանությունը բխում է Ադրբեջանի շահերից, ապա Փաշինյանի տրամաբանության հիմքում իր և իր թայֆայի շահերն են: Մի շարք անգամ ազգային ուժերի ներկայացուցիչները Նիկոլ Փաշինյանին և նրա թիմակիցներին հարցրել են, թե կարո՞ղ են Ադրբեջանի օգտին արված զիջումների դիմաց նշել ինչ որ զիջում, որ կատարել է Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ: Իշխանական թիմը մշտապես պապանձվել է և չի կարողացել ոչինչ ասել: Այնպես որ, Հայաստանի ու Ադրբեջանի միջև ընթացող բանակցություններն ու պայմանագրերի կնքումը այլ բան չեն, քան միակողմանի զիջումների գործընթաց: Ով կասկած կունենա այս հարցում, թող փորձի հիշել, թե հայկական կողմի՝ 20 թվականից սկիզբ առած բազմաթիվ տարածքային զիջումների դիմաց Ադրբեջանը երբևէ կատարե՞լ կամ խոսե՞լ է իր կողմից արվող զիջման մասին: Նույն կերպ ադրբեջանական որևէ պաշտոնյա, Փաշինյանին հակառակ, երբեք չի խոսել երկու երկրների տարածքների չափերի մասին: Այս առիթով անդրադառնանք խնդրին առնչվող ևս մեկ միֆի մասին: Հայաստանի իշխանությունը փորձում է իր տարածքով Ադրբեջանին անխոչընդոտ երթևեկ տրամադրելու զիջումը իբրև թե հավասարակշռել այս գործընթացի փոխադարձությամբ: Իսկ հավատո՞ւմ է որևէ մեկը, որ Հայաստանը և նրա բնակչությունը ազատ և անվտանգ երթևեկության հնարավորություն կստանան Ադրբեջանի տարածքով: Եթե մարդիկ այս հեռանկարը պետք է համեմատեն անդառնալիորեն անցած ժամանակների նախադեպի հետ, ապա հիշեցնենք որ այն ժամանակ խորհրդային կայսրության սահմաններում էին ապրում բոլորը, և մետրոպոլիան էր ապահովում բոլոր տեսակի, այդ թվում նաև հաղորդակցական կապերի ազատությունը, օրինականությունն ու ապահովությունը ողջ կայսրությունում: Իսկ եթե ցանկացած փաստաթղթի ստորագրումից հետո, (ինչն առհասարակ որևէ կաշկանդիչ ուժ չի ունենում ո՛չ թուրքերի և ո՛չ էլ ադրբեջանցիների համար), Ադրբեջանի տարածքով անցնող հայերն այդպես էլ տեղ չհասնեն,

դրա համար որևէ պատասխանատվություն ոխերիմ հարևանը վստահաբար չի կրելու: Վկայությունը՝ Արցախի նկատմամբ դեռ երեկ իրականացված ցեղասպանությունն է: Այնպես որ, նրանք, ովքեր նման փափագներ ունեն, ճիշտ կանեն օր առաջ հրաժարվեն այդ անուրջներից:

Համաշխարհային աշխարհաքաղաքական մեծ տեղաշարժերի, տարածաշրջանի ու մեր ճակատագրի հետ կապված բախտորոշ ժամանակաշրջանում Նիկոլի և ՔՊ-ականների գլխավոր հոգսն այսօր դարձել են առաջիկա ընտրությունները: Փաշինյանը ներթիմային և ներքաղաքական նախապատրաստությունների մեջ է միաժամանակ անընդհատ խոչընդոտելով, կանխելով մինչև ընտրությունների նախօրյակը ազգային ուժերի ակտիվ գործունեություն իրականացնելու հնարավորությունը: Ազգային ուժերի նկատմամբ վերջին շրջանի հետապնդումները, քաղաքական ակտիվ կյանքից մեկուսացվածների կալանքի ժամկետների երկարաձգումները և նոր հետապնդումների, դատական գործընթացների ու ձերբակալությունների հավանականությունը բացատրվում է, նաև առաջիկա ամիսներին քաղաքական դաշտի հնարավոր ակտիվությունը վիժեցնելու ցանկությամբ: Ինչպես համոզվեցինք, Փաշինյանը դրսում փորձում է լուծել իր վերարտադրության երաշխիքների խնդիրը՝ այդ թվում նաև՝ երկրի ներսում սանձարձակ ու անօրինական գործունեության համար: Փաշինյանը գալիք ընտրությունների հետ է կապում իր հետագա ճակատագիրը և հանուն նպատակի գնում է «վա բանկ»՝ չխորշելով զոհաբերելու և՛ մարդկանց, և՛ երկրի ճակատագիրը, բոլոր հակառակորդների գլխին դամոկլյան սրի պես կախելով բռնի իշխանափոխության կասկածանքով բանտարկության սպառնալիքը: Նա ամեն օր ավելի ու ավելի դժվարացնում է իրենից հետո Հայաստանն ու Արցախը փրկելու հնարավորությունը: Փաշինյանը սրանով նաև ազգային ուժերին կանգնեցնում է սեփական անելիքն օր առաջ հստակեցնելու պարտադրանքի առաջ: ■

Թրամփ-Փաշինյան-Ալիև եռակողմ հանդիպման չհասցեագրված հարցերը

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն օգոստոսի 7-8-ը այց էր կատարել Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Սա գործող վարչապետի առաջին բարձր մակարդակի հանդիպումն էր ԱՄՆ նախագահի հետ: Նախկինում Փաշինյանին հաջողվել էր թռուցիկ հանդիպել ԱՄՆ նախագահին տարբեր գագաթնաժողովների ընթացքում, բայց սա առաջին հատուկ կազմակերպված այցն էր: Ինչ վերաբերում է Ադրբեջանի նախագահին, ապա ԱՄՆ վերջին նախագահը, ում հետ Ալիևը հանդիպել էր, եղել է Օբաման: Այսինքն՝ Սպիտակ տուն հրավիրված լինելու փաստն ինքնին թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի համար ներքաղաքական լուրջ «PR»-ի առիթ էր:

Վաշինգտոն այս այցի ընթացքում ստորագրվեց համատեղ Հռչակագիրը՝ Վաշինգտոնում տեղի ունեցած հանդիպման արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև նախաստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» համաձայնագիրը[1]: Սրան զուգահեռ Հայաստանի և ԱՄՆ-ի միջև ստորագրվեցին ևս երեք փոխըմբռնման հուշագրեր[2], իսկ Ադրբեջանի և ԱՄՆ-ի միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր՝ ստեղծելու ռազմավարական աշխատանքային խումբ, որն էլ, իր հերթին, պետք է կազմի ԱՄՆ-ի և Ադրբեջանի միջև ռազմավարական համագործակցության խարտիան: Այսինքն, Ադրբեջանը ևս կստանա ԱՄՆ ռազմավարական գործընկերոջ կարգավիճակ: Հիշեցնենք, որ Հայաստանը ստորագրել էր նմանատիպ խարտիա Ջո Բայդենի վարչակազմի օրոք՝ Բայդենի կողմից նախագահական պաշտոնը վայր դնելուց ընդամենը օրեր առաջ:

Թեև նախաստորագրված համաձայնագիրը ներկայացվում է որպես մեծ հաղթանակ, որի շնորհիվ Հարավային Կովկասում կհաստատվի խաղաղություն, կան մի շարք կարևոր հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնել՝ իրերի իրական դրությունը հասկանալու համար:

Հանգամանք 1. Ինչ վերաբերում է Վաշինգտոնում ստորագրված հռչակագրին, ապա այն ունի այնքան իրավաբանական ուժ, որքան, օրինակ նոյեմբերի 9-ի հայտարարությունը: Բացի դրանից, Սպիտակ տանը կայացած հանդիպման ժամանակ հայտարարության ստորագրմանը հետևեցին նաև բանավոր հայտարարություններ: Մինչդեռ, օրինակ հայ–թուրքական արձանագրությունների նախաստորագրումից հետո Հայաստանը հրաժարվեց հաջորդող բանավոր հայտարարություններից, որպեսզի Թուրքիան լրացուցիչ բանավոր նախապայմաններ առաջ չքաշի:

Վաշինգտոնյան հանդիպման ընթացքում Թրամփը երեք անգամ օգտագործեց «միջանցք» (corridor) եզրույթը: Այսինքն՝ որքան էլ որ գրավոր հայտարարությունում խոսվի հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման Թրամփի ուղու մասին, («Trump Route for International Peace and Prosperity» (TRIPP)) միևնույն է, Թրամփը դա անվանում է միջանցք, հետևաբար ընկալումը հենց այդպիսինն է: Ուստի «հայտարարության տեքստում «միջանցք» բառը չկա» փաստարկին կարելի է պատասխանել, որ այն առկա է դրան հաջորդած բանավոր հայտարարություններում, որոնք համարժեք են: Բնականաբար խնդիր է ծագում է այն հարցում, որ գրավոր տեքստի տակ Հայաստանը ներկայացնողը ստորագրել է, իսկ Թրամփի ասածի տերը միայն Թրամփն է: Այստեղ էլ անհրաժեշտ էր, որ Հայաստանի ներկայացուցիչը ուղղեր «միջանցք» տերմինն օգտագործողին՝ նշելով, որ դա «միջանցք» չէ, և այդ տերմինը վերաբերելի չէ այս դեպքին (եթե իհարկե դա այդպես է): Այսպիսով ստացվում է, որ Թրամփը համարում է, որ դա միջանցք է, և նրա ասածը մինչ օրս ոչ ոք որևէ կերպ չի հերքել:

Հանգամանք 2. Կարևոր է նաև հաշվի առնել, որ նախաստորագրված համաձայնագրում որևէ անդրադարձ չկա Ադրբեջանում պահվող հայ գերիների ճակատագրին: Այնուամենայնիվ, հայ-ամերիկյան փոխըմբռնման հուշագիրը ստորագրելու ժամանակ այս հարցը շոշափվեց բանավոր կերպով: Այս կարճ քննարկման ժամանակ նախագահ Թրամփը հետաքրքրվեց գերիների թվով՝ ի պատասխան ստանալով 23 թիվը և նշեց, որ ինքը պետք է Ալիևին դիմի այդ հարցով[3]: Սակայն, հռչակագրի ստորագրմանը հա-

ջորդած հարցուպատասխանի ժամանակ, երբ հարց հնչեց հայ գերիների մասին, այդ հարցը պարզապես արհամարհվեց բոլոր ղեկավարների կողմից:

Հանգամանք 3. Վաշինգտոնում Թրամփի, Ալիևի և Փաշինյանի միջև ստորագրված հռչակագրով արձանագրվեց ԵԱՀԿ Մինսկի խումբը լուծարելու որոշումը: Հռչակագրի երկրորդ կետով նշվում էր, որ Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարները ստորագրել են ԵԱՀԿ Մինսկի գործընթացի և կից կառուցակարգերի լուծարման վերաբերյալ համատեղ դիմումը, և կոչ էր արվում ԵԱՀԿ բոլոր մասնակից պետություններին ընդունել այդ որոշումը[4]: Օրեր անց համատեղ դիմումը և առաջարկվող որոշման նախագիծը շրջանառվեցին ԵԱՀԿ մասնակից պետությունների համար[5]: Սովորաբար նման նախագծերը քննարկվում են Մշտական խորհրդի կողմից Վիեննայում, որտեղ որոշման ընդունումից հետո ԵԱՀԿ Մինսկի խումբն արդեն պաշտոնապես կդադարի գործել: Այս մարմինը եզակի էր այն առումով, որ այստեղ ԱՄՆ-ն և ՌԴ-ն համագործակցում էին (առնվազն մինչ 2022 թ.) և այս շրջանակում Հայաստանի համար առավել մեծ հնարավորություններ կային ՀՀ շահերից բխող լուծումների հասնելու: Ֆրանսիան արդեն իսկ իր աջակցությունն է հայտնել խմբի լուծարմանը[6], Իսկ ՌԴ ԱԳ նախարարն առավել վաղ իր հրապարակած հոդվածում նշում էր, որ խումբը չկարողացավ ստեղծել պայմաններ Հայաստանի և Ադրբեջանի միջև երկխոսության համար և այժմ էլ ընդհանրապես կորցրել է իր իմաստը[7]: Այսպիսով, այս որոշումը, ամենայն հավանականությամբ, առանց խոչընդոտների կընդունվի:

Հանգամանք 4. ԱՄՆ-ը Հայաստանին և Ադրբեջանին դրեց նույն հարթության վրա՝ երկուսին էլ շնորհելով ռազմավարական գործընկերոջ կարգավիճակ: Ի տարբերություն Միրզոյան–Բլինկենի, այս փաստաթուղթը ստորագրվել է ավելի բարձր՝ Թրամփ–Ալիև մակարդակով: Եթե հայկական կողմը պրոդեմոկրատական կողմնորոշում չունենար, այն չէր ստորագրվի Բայդենի հեռանալուց օրեր առաջ, այլ կթողնվեր այսօրվան: Դա շատ ավելի ծանրակշիռ կդարձներ այդ հանգամանքը այս վարչակազմի համար:

Հանգամանք 5. Մեծ խնդիր է 907-րդ բանաձևի չեղարկումը, որից այդքան դժգոհում էր Ալիևը: Այս «բանաձևը» Կոնգրեսի կողմից ընդունված օրենքի հոդված է, որը կարող է չեղարկվել կամ ուժը կորցնել միայն Կոնգրեսի ընդունած նոր օրենքով: Նախագահն իրավունք ունի շրջանցել այն, ինչպես բազմիցս արվել է՝ Կոնգրեսի համաձայնությամբ: Չենք բացառում, որ Պալատում և Սենատում մեծամասնություն ունեցող Թրամփը գնա օրենսդրական փոփոխության, բայց դա երկար և բարդ գործընթաց է, որին դեմ կլինեն նաև Հայկական հանձնախմբում: Առավել հավանական է, որ շրջանցման նամակը Թրամփն ամեն տարի կստորագրի, բայց սա արդեն ադրբեջանական հանրությանը ներկայացվել է որպես ամբողջական չեղարկում:

Հանգամանք 6. 907-րդ բանաձևի չեղարկումը դեռևս ինքնին չի նշանակում զենքի վաճառք Ադրբեջանին (Հայաստանին ևս): ԱՄՆ-ը սովորաբար հակամարտող երկրներին զենք չի վաճառում, եթե կողմերից երկուսն էլ իրեն բարեկամ երկրներ են: Իսկ քանի դեռ խաղաղության համաձայնագիր ֆորմալ առումով չկա, վաճառք էլ չի լինի: Զենքի վաճառքը չափազանց բարդ գործընթաց է, որը պետք է անցնի ամերիկյան ներպետական իրավական և բյուրոկրատական ճանապարհներով՝ այդ թվում Կոնգրեսով (հիշենք, թե ինչպես էր Կոնգրեսն արգելափակում Թուրքիային ռազմական օդանավերի վաճառքը): Հարկ է նշել, որ ԱՄՆ-ը Հայաստանին և Ադրբեջանին երբեք էլ ռազմական օգնություն չի տվել և զենք չի վաճառել: Տրվել է անվտանգության օգնություն,

որն էապես տարբերվում է ռազմականից: Միացյալ Նահանգները երբեք էլ չի թաքցրել, որ Ադրբեջանին տրամադրվող օգնությունն ուղղված է Իրանի՝ ոչ թե Հայաստանի դեմ:

Հանգամանք 7. Հայաստանի համար հերթական ցավոտ դրույթ, որը ներառվել է համաձայնագրի մեջ՝ հոդված 15-ն է, որի համաձայն՝ կողմերը հետ կկանչեն, կչեղարկեն կամ այլ կերպ կլուծեն որևէ իրավական հարթակում ներկայացված բոլոր միջպետական հայցերը[8]: Հաագայի միջազգային արդարադատության դատարանում Հայաստանն ու Ադրբեջանը մեկական հայցեր ունեն միմյանց դեմ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի ունի 4 հայց, Ադրբեջանն՝ ընդդեմ Հայաստանի՝ 2 հայց, իսկ Հաագայի Արբիտրաժային դատարանում Ադրբեջանը Հայաստանի դեմ ներկայացրել է 2 հայց, մինչդեռ Հայաստանը Ադրբեջանի դեմ որևէ հայց չունի: Հայցերի հետկանչման մասին Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր դեռ 2024 թ. նոյեմբերին, այնուամենայնիվ, այս համաձայնագրով այդ փաստը վերահաստատվեց և ամրագրվեց:

Հանգամանք 8. Նախաստորագրված համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանվում է, որ երրորդ կողմի ուժեր չեն տեղակայվի Հայաստանի և Ադրբեջանի սահմանի երկայնքով[9]: Այսպիսով, օրինակ ՌԴ ուժերը չեն կարողանա տեղակայվել սահմանին, հնարավոր է նաև սահմանափակվի ԵՄ դիտորդների հասանելիությունը, որոնց ներկայությունը Ալիևի կողմից մշտապես բացասաբար է ընդունվել:

Հանգամանք 9. Ամերիկյան ուղեղային կենտրոնները փորձում են հասկանալ, թե ինչպես են իրականացվելու ներդրումները և ինչպես ու երբ է իրականում ստորագրվելու խաղաղության պայմանագիրը, քանի որ հռչակագիրը որևէ իրավաբանական ուժ չունի: Ամեն ինչ տեղի է ունեցել այնքան արագ, որ սկզբում ֆիքսվել է փաստացի իրավիճակը, իսկ հետո միայն նախատեսվել է մտածել մանրամասների մասին: Բացի այդ, կան մի շարք ռիսկեր, որոնք ամերիկյան որոշ փորձագետներ արդեն սկսել են առաջ քաշել: Տպավորություն է, որ այս պահին յուրաքանչյուր կողմ որոշ չափով ստացել է ուզածը, սակայն որոշ կարևոր դեպքերում հաշվարկներն արված չեն: ԱՄՆ-ը Հարավային Կովկասի վերաբերյալ ռազմավարություն չունի, կա բիզնեսի նախագծի միջոցով խաղաղության հասնելու ցանկություն, որը կարող է իրականացվել, օրինակ, 1996 թ. Իսրայելի և Հորդանանի համար ստեղծված Qualified Industrial Zone-երի նմանությամբ: Բայց ռազմավարական մոտեցում, որպես այդպիսին, չկա:

Հանգամանք 10. Դոնալդ Թրամփի այս նախագահական շրջանի գլխավոր նպատակներից է հակամարտություններ կարգավորողի դերը ստանձնելը և իրեն դիրքավորելը որպես աշխարհում խաղաղություն հաստատող ղեկավար՝ փորձելով հասնել վաղուցվա իր բաղձալի նպատակին՝ Խաղաղության Նոբելյան մրցանակի արժանանալուն: Ուստի, պատահական չէ, որ համաձայնագրի նախաստորագրման ժամանակ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարները բարձրաձայնեցին այս հարցը՝ պատրաստակամություն հայտնելով աջակցել Դոնալդ Թրամփին Նոբելյան մրցանակ ստանալու ճանապարհին: Ադրբեջանի նախագահ Ալիևը նախաձեռնողական գտնվեց այս հարցում՝ առաջարկելով Հայաստանի հետ համատեղ դիմել Նոբելյան կոմիտե նախագահ Թրամփին Նոբելյան մրցանակ շնորհելու համար: ■

Հղումներ

1. Հայաստանի և Ադրբեջանի միջև նախաստորագրված համաձայնագրի հրապարակում, https://www.mfa.am/hy/press-releases/2025/08/11/Initialed%20Arm-Az%20Peace%20Agreement%20text/13394?fbclid=IwY2xjawMHDq5leHRuA2FlbQIxMQABHonLL7wkaI2gE_t1dDWloI7OK0YJnqrlRfOM4MZ-ioDFtqffIJ9sTTk-tSIZ_aem_JIvztGqOGBktFbcLLi7sBw, (11.08.25).
2. Նիկոլ Փաշինյանը և Դոնալդ Թրամփը ստորագրել են Հայաստան-ԱՄՆ Փոխըմբռնման հուշագրեր, https://www.primeminister.am/hy/press-release/item/2025/08/09/Nikol-Pashinyan-US-meeting-Trump/, (11.08.25).
3. Nikol Pashinyan and Donald Trump sign Armenia-US Memorandums of Understanding, https://www.primeminister.am/en/press-release/item/2025/08/09/Nikol-Pashinyan-US-meeting-Trump/, (12.08.25).
4. Նիկոլ Փաշինյանի տարածած հայտարարությունը, https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/pfbid0289jh4aHFjypa4SGzZfZpANqsVykxL4NuSJWg7F16SsxV4CZdxwrWDXE6HWXeA3z8l?rdid=42s0L8fXtb7ngLED, (12.08.25).
5. ՀՀ արտաքին գործերի նախարարության տարածած հայտարարությունը, https://www.facebook.com/MFA.Armenia/posts/pfbid02RZiCNNnodE6LkgFre8Q76vQJHhhf6717p58DJ8XdcSNoTwEuxMVeECxEh4KiiaTgl?rdid=UmiEv0lvCB4PF4dy, (13.08.25).
6. Armenia/Azerbaijan - Agreement with a view to the normalization of relations between Armenia and Azerbaijan (8 August 2025), https://www.diplomatie.gouv.fr/en/country-files/azerbaijan/news/article/armenia-azerbaijan-agreement-with-a-view-to-the-normalization-of-relations, (13.08.25).
7. Лавров С., Полвека Хельсинскому акту: Ожидания, реальность, перспективы, https://rg.ru/2025/08/01/polveka-helsinskomu-aktu.html, (13.08.2025).
8. Հայաստանի և Ադրբեջանի միջև նախաստորագրված համաձայնագրի հրապարակում, նշվ. աշխ.:
9. Նույն տեղում:

Ինչպիսին կլինի մեր ապագան, եթե Նիկոլի իշխանությունը վերարտադրվի

Արտաշես Շահբազյան

Այս հոդվածով ցանկանում եմ ներկայացնել, թե ինչ է սպասվում մեր երկրին և մեզ բոլորիս, եթե առաջիկա ընտրություններից հետո Նիկոլ Փաշինյանը շարունակի ղեկավարել Հայաստանը: Կարող է թվալ, թե ասելիքս երևակայական մտավարժանք է, սակայն պատրաստվում եմ խոսել երևույթների մասին, որոնք արդեն իսկ ընթացքի մեջ են, որոնց մասին իշխանությունները հայտարարել են, ինչպես և պահանջների մասին, որոնք թուրք-ադրբեջանական և Արևմտյան ուժերի պարտադրանքն են, ու, ինչպես նախորդ տարիների փորձն է փաստել, Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հնազանդորեն կիրականացնի դրանք: Այո, շատ դեպքերում Հայաստանի իշխանությունը խնդրել է արտաքին ուժերին թույլ տալու հետաձգել նրանց պահանջների կատարումը, իսկ այլ դեպքերում սեփական նախաձեռնությամբ է հետաձգել իր ծրագրերի գործնականացումը վախենալով, որ դրանից հետո կարող է զրոյի հավասարվել գալիք ընտրություններում հաղթելու հավանականությունը կամ այնպիսի համաժողովրդական դժգոհության մթնոլորտ ձևավորվի, որ իր քաղաքական ճակատագիրը կվճռվի մինչև ընտրությունները:

Նախ անդրադառնանք արտաքին խնդիրներին, որոնց հետ ուղղակիորեն շաղկապված է Հայաստանի ինքնիշխանության հարցը: Ավելի քան ակնհայտ է, որ Նիկոլ Փաշինյանը վերջին տարիներին իրականացնում է Հայաստանի արտաքին քաղաքական կուրսն արմատապես փոխելու քաղաքականություն: Նա, մի կողմից, փորձում է դա անել ավանդական դաշնակիցներին համոզելով, թե ոչ մի արտակարգ բան տեղի չի ունենում, մյուս կողմից, սակայն, ենթարկվելով արտաքին թելադրանքին, ավանդական դաշնակիցների դեմ կատարում է կոպիտ քայլեր հովանավորներին հավաստիացնելու համար, թե չի շեղվում նախանշված կուրսից: Այսպիսի ամենաթարմ օրինակներից մեկը. սույն թվականի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ձեռք բերած եռակողմ պայմանավորվածություններից հետո Նիկոլը շտապեց զանգել Ռուսաստանի և Իրանի ղեկավարներին՝ հավաստիացնելու, թե այդ պայմանավորվածությունները որևէ կերպ չեն ազդելու իրենց երկրների միջև եղած փոխհարաբերությունների վրա, սակայն արդեն օգոստոսի 15-ին, անհեթեթ պատճառաբանությամբ (իբրև թե գտնվում է կարճատև արձակուրդի մեջ) Հայաստանի ղեկավարը չմեկնեց Բիշքեկ՝ մասնակցելու ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի նիստին: Ի դեպ, նա միակ ղեկավարն էր, որ ԵԱՏՄ երկրների ղեկավարների նախորդ հավաքին մասնակցեց հեռավար միացումով: Հայաստանն արդեն մի քանի տարի հիմնականում ներկայացուցիչ չի ունենում նաև ՀԱՊԿ ղեկավարների նիստերին, իսկ հենց այս տողերը գրելու պահին, Նիկոլի ակնհայտ թելադրանքով, իրեն ենթակա քաղաքական բախտախնդիրները հանրահավաք են անում Գյումրիում տեղակայված 102-րդ ռազմաբազայի դեմ՝ պահանջելով հեռանալ Հայաստանից: Նիկոլը հստակորեն տանում է Ռուսաստանին Հայաստանից քաղաքականորեն, ռազմական և տնտեսական առումներով դուրս մղելու քաղաքականություն, սակայն առայժմ դրան չի տալիս վճռական ընթացք՝ վախենալով նախընտրական շրջանում իր համար վտանգավոր հետևանքներից: Նույն քաղաքականությունն իրականացվում է նաև այն միակ հարևանի նկատմամբ, որը վճռականորեն պաշտպանում է Հայաստանի ամբողջականությունն ու սահմանների անձեռնմխելիությունը: Իհարկե, Իրանում վաղուց հասկանում են, որ Հայաստանի ղեկավարը խաբում է իրենց և խաղալիք է վերոհիշյալ ուժերի ձեռքին: Հարևան ու բարեկամ երկրի նախագահի օրեր առաջ Հայաստան այցից հետո իրանցիների արձագանքն այն եղավ, որ իրենց մտահոգությունները փարատված չեն, որքան էլ որ Նիկոլն իրեն բնորոշ գեղջկական ճարպկությամբ փորձել է հակառակը համոզել տարածաշրջանում մեր շահերի հետ իր շահերով համընկնող հարևան երկրի ղեկավարին:

ԵԱՏՄ-ին ու հատկապես Ռուսաստանին Հայաստանից դուրս մղելուց հետո կասկած չկա, որ այս տարածքն առանց ռազմական գերակայող ուժի չի մնալու, նախկինին փոխարինելու են Թուրքիան և Ադրբեջանը, Հայաստանի սահմանները դառնալու են նրանց առջև ամբողջովին բաց: Նույնքան անհերկբա է, որ որևէ եվրոպական երկիր իր զորքը չի բերելու

Հայաստանի սահմանները պաշտպանելու, այլ նրանց անունից են այդ դերը ստանձնելու Թուրքիան և, չի բացառվում, Ադրբեջանը: Այսինքն՝ որևէ մեկը թող չկասկածի, որ Հայաստանից ռուսական զինվորականության դուրս գալուց հետո Հայաստանը դառնալու է Թուրքիայի և Ադրբեջանի չհայտարարված գաղութը: Ի դեպ, հենց այս օրերին Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարները կատարեցին միանգամայն հակառակ հայտարարություններ. եթե Հայաստանի ղեկավարն ասում է, թե հնարավոր է 2026 թվականի պետական բյուջեում պաշտպանական ծախսերի էական ավելացում չլինի, ընդհանրապես չլինի, պատճառաբանելով, թե այլևս խաղաղություն է հաստատվել, Ադրբեջանի ղեկավարը նույն ժամանակ ասում է. «Մեծացնում ենք մեր ռազմական ներուժը: Մատակարարվել են ժամանակակից ԱԹՍ-ներ, հրետանային նոր համակարգեր: Պետք է ցանկացած պահի պատրաստ լինենք պատերազմի»: Ադրբեջանի ղեկավարը խոսում է վերջին տարիների իրենց մեծ հաղթանակների մասին, իսկ Հայաստանի վախվորած ղեկավարն իր վերջին հարցազրույցում ասաց, թե առհասարակ մեր բառապաշարից պետք է դուրս բերենք հաղթանակ բառը, հնարավոր չէ անընդհատ հաղթել: Փաստերը խոսուն ձևով վկայում են, որ Նիկոլ Փաշինյանը, բացառելով սեփական ուժերով Հայաստանի և նրա ինքնիշխանության պաշտպանության հնարավորությունը, երկիրը տանում է կամավոր ենթակայության: Ասվածի մասին հավելյալ փաստում են նաև անվտանգային, տնտեսական, էներգետիկ գործոնները: Դարձյալ այս օրերին խոսվում է այն մասին, որ Ազգային անվտանգության ծառայությունում տեղի է ունենում կադրային ջարդ: Բրիտանաթուրքական ուժերի տարիների պահանջն է Հայաստանի դրածո իշխանությանը ոչնչացնել ԱԱԾ համակարգը, որն, իրենց կարծիքով, թելերով կապված է Ռուսաստանի հետ: Մյուս կողմից՝ վերջին տարիներին ստեղծվեց և ուժեղացվում է բրիտանական ազդեցությանը ենթակա Արտաքին հետախուզության ծառայությունը: Այսպիսով, ընթացքի մեջ է Հայաստանի արտաքին և ներքին անվտանգության համակարգերի քանդման, դրանց վրա արտաքին ազդեցության լիարժեք հաստատման գործընթացը (հիշենք նաև, որ Պաշտպանության նախարարությունում ներկայումս աշխատում է ԱՄՆ ՊՆ պաշտոնական ներկայացուցիչը, իսկ Հայաստանի սահմաններին տեղի ունեցող ամենափոքր տեղաշարժը վերահսկվում է եվրոպական դիտորդների կողմից):

Նիկոլն ու նիկոլանմանները 10-15 տարի առաջ մեծ աղմուկ էին բարձրացրել ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության համար՝ կասկածելով դրա արդյունավետության մեջ և հատկապես համարելով, որ այն լինելու է Հայաստանի ինքնիշխանության կորստի հաշվին: Կարճ ժամանակ անց բոլորը համոզվեցին, որ տնտեսական առումով Հայաստանի համար այս շուկային այլընտրանք գոյություն չունի, մյուս կողմից դժվար է փաստելը, թե քաղաքական առումով ԵԱՏՄ-ն սահմանափակել է Հայաստանի,

Փաշինյանը Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ

տրամաբանորեն նաև միության մյուս անդամների, ինքնիշխանությունը: Եվրոպացիք միանալով նիկոլական նախընտրական հանկերգին՝ մյուս գարնանը գալու են Հայաստան և անորոշ ժամանակի համար խոստանալու են անդամակցություն Եվրամիությանը, սակայն ընտրությունների ցանկացած ելքի պարագայում մենք ստանալու ենք այն, ինչ ստացել են Վրաստանը, Ուկրաինան, Մոլդովան և էլի ուրիշներ:

Հզոր քաղաքական ու ռազմական դաշինքների հետ կապերի խզումը և անպաշտպան հայտնվելը թուրք-ադրբեջանական տանդեմի առջև նշանակելու է վերջնականորեն թաղել Արցախի հարցը, նշանակելու է սահմանադրական այնպիսի փոփոխություններ, որոնք ոչ միայն կարձանագրեն Արցախից, Հայոց ցեղասպանության հարցից, Արևմտահայաստանի հիշատակումից անգամ հրաժարումը, այլև կզրկեն պետությունը ազգային դիմագծից:

Սփյուռքն իր գրպանում տեղավորելու Նիկոլի ցանկությունները ջուրը լցվեցին, և այս անգամ նա պարզապես խզելու է Սփյուռքի և Հայաստանի միջև եղած բոլոր կապերն ու կամուրջները:

Նոր «հաղթանակից» հետո Նիկոլը վերջնականորեն լուծելու է եկեղեցու հետ ունեցած իր խնդիրները և 1700-ամյա ազգային եկեղեցուն փոխարինելու կգա Նիկոլին ենթակա մի սրբապիղծ աղանդ՝ ղեկավարվող այն անբարոյական դուրսպրծուկների կողմից, ովքեր որպես ինքնակոչ հոգևորականներ անարգանքներ են տարածում Մայր եկեղեցու հոգևոր առաջնորդների դեմ: Նա, ով կձգտի Նիկոլ Փաշինյանին կրկին բերել իշխանության, պետք է հստակ հասկանա, որ մասնակցում է 1700-ամյա Հայոց Սուրբ Եկեղեցու քանդման, Հայաստանի ինքնիշխանության ոչնչացման գործին, ինչպես որ 2021 թ. Նիկոլին բերածների խղճի վրա է ծանրացած Արցախի կործանման և հազարավոր հայորդիների նահատակման մեղքը:

Չպետք է կասկածել նաև, որ գալիք ընտրություններում Նիկոլի հաղթելուց անմիջապես հետո սկիզբ է առնելու Հայաստանի նոր տարածքների զիջման գործընթացը, որի մասին Նիկոլն ակնարկեց Վաշինգ-

տոնյան բանակցություններից անմիջապես հետո: Թերևս ավելորդ է հիշեցնելը, որ Ադրբեջանը, ամրանալով արդեն ստացած և գրաված տարածքներում, պահանջում է նորերը, ոչ մեկ անգամ չխոսելով այն մասին, թե ինքն էլ ինչ որ բան պիտի զիջի, կամ թե իր համար որևէ նշանակություն ունի Հայաստանի տարածքի չափերի մասին Փաշինյանի կողմից անընդհատ կրկնվող թիվը:

Փաշինյանի հաղթանակը կնշանակի 300.000 ադրբեջանցիների բնակեցումը հատկապես Սյունիքում և Հայաստանի հարավի փաստացի գրավումը:

ԵԱՏՄ-ի հետ կապերի խզումը նշանակում է կտրել այն ճյուղը, որի վրա նստած ենք: Անհեթեթություն է մտածելը, թե Եվրոպան իր դռները կբացի մեր ապրանքների առջև և մատչելի գներով կհոգա Հայաստանի տնտեսական կարիքները: Դրա փոխարեն Փաշինյանի վերընտրության, կամ արտաքին ուժերի աջակցությամբ վերանշանակման պարագայում, առաջին հերթին՝ Թուրքիան, Ադրբեջանը, ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան նպատակ են դնելու զավթել Հայաստանի հարավի հազվագյուտ և թանկարժեք բնական պաշարները: Որպեսզի ընթերցողին չթվա, թե սա արծարծված թեմա չէ և գուցե երևակայության արդյունք է, հիշեցնեմ 2025 թ. օգոստոսի 22-ին Հայաստանի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանի հայտնած միտքը «Արմենպրեսին». «Ինչ վերաբերվում է Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի միջև տնտեսական համագործակցությանը, Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է և հետաքրքրված է դրանով: Համագործակցության տրանսպորտային բաղադրիչն արտահայտված է հենց «Խաղաղության խաչմերուկ» նախագծում, որից բխող նախագիծն է նաև TRIPP-ը՝ «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» ծրագիրը: Մենք ակտիվորեն պատրաստվում ենք այս ծրագրի իրագործման մեկնարկին և Ադրբեջանի հետ տրանսպորտային հաղորդակցությունների բացմանը»: Գիշատիչ այս երկրների առջև Հայաստանի տնտեսության բացումը նշանակելու է Հայաստանի թե՛ արդյունաբերական և թե՛ գյուղատնտեսական արտադրության ոչնչացում, այս անգամ նաև տնտեսական հայաստանյան սահմանափակ շուկայի կլանում: Հիշենք, որ Սաակաշվիլու կառավարման շրջանում ադրբեջանաթուրքական տնտեսական աքցանի մեջ հայտնված Վրաստանի ազգային իշխանությունը ներկայումս դժվարությամբ փորձում է ետքայլ անել, ձերբազատվել այս կաշկանդումից:

Ռուսաստանի հետ ամեն տեսակի կապերի խզման բրիտանաթուրքական ծրագրի մաս պետք է համարել մի քանի անգամ հնչած այն հայտարարությունը, թե Հայաստանը կարող է գազ գնել Ադրբեջանից: Թուրք-բրիտանական պահանջների թվում է նաև Հայկական ատոմակայանի փակման պահանջը և Ամերիկյան, այսպես կոչված, Մոդուլային ատոմակայանի գործարկումը Հայաստանում: Սրանք քայլեր են, որոնց կատարմանը, վերընտրության դեպքում, վստահաբար մղելու են արտաքին ուժերը՝ մի կողմից՝ ոչնչացնելով Հայաստանի տնտեսական և էներգետիկ անկախությունը, և, մյուս կողմից, ամբողջովին երկիրը կախման մեջ դնելով արտաքին ուժերից՝ մասնավորապես Ադրբեջանից ու Թուրքիայից:

Հաջորդ ազգադավ և պետականաքանդ ծրագրերը, որոնք սկսեց Նիկոլ Փաշինյանը, բայց մինչև ընտրությունները ժամանակավորապես կասեցրեց, Հայաստանում կրթական և գիտական համակարգերի կազմաքանդումն էր: Այս տարի Հայաստանում արդեն իսկ փակման լուր էին ստացել հարյուրավոր դպրոցներ: Շատ հասկանալի պատճառներով ծրագիրն այս տարի չիրականացվեց: Սկսվեց, բայց ձգձգվեցին նաև Ակադեմիական քաղաքի կառուցման ծրագիրն ու դանդաղորեն երևանյան բուհական շենքերի դատարկումը, գիտական և ուսումնական հանրության մեծ բանակի դուրսբերումը մայրաքաղաքից: Հայտարարվեց, սակայն հետաձգվեց Հայաստանի Ազգային Ակադեմիայի լուծարման գործընթացը: Պաշտոնապես կառավարությունը ներկայացնում է՝ իբրև ակադեմիական ինստիտուտները կցվելու են

բուհերին, իսկ իրականում բուհերը կկարողանան կիսատ-պռատ չափով աշխատանքի տեղավորել ակադեմիական գիտնականների մոտ 10%-ին, իսկ մնացած թանկարժեք ներուժը կկորչի ակադեմիական գիտության հետ միասին:

Հայաստանը հումքային, սպասարկման և ծառայությունների շուկայի վերածելու, նրանում լուսավորության, ու ազատության ձգտումը մեռցնելու համար անհրաժեշտ է նիկոլական ժեխի վերածել ողջ հայությանը: Առանց դրա ոչ միայն արտաքին ուժերը, այլև հենց Նիկոլը, չեն կարողանա իրենց ենթարկել և ստրկացնել Հայաստանը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է ազգի մտավոր մակարդակն իջեցել այն աստիճանին, որ նրան կարողանան դաս տալ ոմն անգրագետ Նիկոլ և Աննա:

Անշուշտ այս նպատակին է ծառայում նաև դպրոցական և բուհական կրթական ծրագրերի փոփոխությունը, հայագիտական առարկաների դասավանդման սահմանափակումը, դրանց աղավաղումը, պարզունակացումը՝ պարպումը ազգային բովանդակությունից և ոգուց: Նիկոլ Փաշինյանն այս աշխատանքը կհասցնի իրեն ցանկալի ավարտի, եթե ապազգային ու տգետ զանգվածը իրականացնի գլոբալիզմի ճորտերի վերարտադրությունը: Դրանից հետո Հայաստանը կդառնա գաղութացված, ազգային դիմագծից զուրկ մի տարածք, որի ազգային տնտեսության փլուզման հետևանքով տեղի կունենա կենսամակարդակի խիստ անկում, դրամի արժեզրկում և այլն: Բնականաբար, գաղութատիրական շահագործումից բացի, տնտեսական այլ հարաբերություններ, ներդրումներ նման երկրում չեն կարող ակնկալվել: Նկատի ունենալով նաև արտաքին ուժերի առջև բաց դաշտի վերածվելու պարագան՝ Հայաստանը կհայտնվի ներքին ու արտաքին գործոններով պայմանավորված անկայունության ու ցնցումների տուրբուլենտ ընթացքի մեջ: Անկայունության ներուժով աղքատացող երկրում, աճող դժգոհությունները լռեցնելու համար ավտորիտար իշխանությունը պարտավորված է լինելու գնալու ընդլայնվող ու խորացող մշտական բռնությունների: Շահի ու մորթապաշտության վրա հիմնված ապազգայինների թիմը չի կարող մշտապես լինել միակամ ու միաձույլ և երկու-երեք տարուց նման իշխանությունը ճեղքվելու և պառակտվելու է մասերի: Ապագան ոչ մի լավ բան չի խոստանում ինքնանպատակ իշխանությունից կառչած խունտային, նրանք չեն կարողանալու խուսափել այն օրինաչափություններից, որոնց աշխարհն ականատես է եղել դարերի ու հազարամյակների ընթացքում: Նիկոլի ստեղծած հեղինակապետական վարչակարգը ինքնաոչնչացնող համակարգ է, և այն վերջ ի վերջո խժռելու է իր ստեղծողներին: Մեզ համար, սակայն, այս ամենն այլևս նշանակություն չի ունենա: Հայաստանը պետք է փրկել, թույլ չտալով, որ սկսվի քանդման վերջին փուլի աղետը: Վերջապես մեր երկրում մարդիկ պետք է սովորեն կատարել ոչ թե ընդդեմի, այլ հանունի ընտրություն, ոչ թե ատելության վրա հիմված հաճելի ստի, այլ ծրագրի ու գաղափարի ընտրություն, ոչ թե սեփական ստամոքսի, այլ հավաքական շահի ընտրություն՝ հայրենիքի և իրենց զավակների անկախ, ազատ և արժանապատիվ ապագայի ընտրություն: Նրանք, ովքեր մտածելու ընդունակություն ունեն, պարտավոր են լրջորեն խորհել այս ամենի մասին, գուցե չհամաձայնել ինչ որ բաների հետ, բայց և անել սեփական եզրակացությունները:

Վստահ եմ՝ այս երկրում դեռևս շատ են այն մարդիկ, ովքեր գիտակցության ու արժանապատվության առումով կապ չունեն կենդանական բնազդներով ապրող ամբոխի հետ: Ինչպես եղել է դարեր շարունակ, ազգային ինքնագիտակցությամբ օժտված նվիրյալների խաչն է հայրենիքի փրկության գործը: ■

Հայաստանը «միջանցքների պատերազմի» թատերաբեմ

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Վ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Սույն հոդվածը գրվել է Թրամպ-Ալիև-Փաշինյան վաշինգտոնյան հանդիպումից առաջ, այդ պատճառով էլ նրանում բացակայում է անդրադարձը հիշյալ հանդիպմանը՝ վերջինիս արդյունքներին ու հետևանքներին: Սրանով հանդերձ, իրողությունների վերլուծությունը բխում է աշխարհաքաղաքական առկա իրողություններից և դրանց հնարավոր զարգացումների հավանականությունից:

Ադրբեջանում աճում են հակառուսական տրամադրությունները, և դժվար չէ կանխատեսել, որ ռուս-իրանական ռազմավարական համաձայնագիրն Ալիևին դրել է այնպիսի վիճակի մեջ, որ նա ստիպված է կամ գնալ դեպի Ռուսաստան-Իրան առանցքի ուղեծիր, կամ պետք է գործի այդ առանցքի դեմ: Բայց ո՞ւր է գնում Ալիևը և ինչո՞ւ:

Հիշենք, որ ապրիլի 21-ին Վլադիմիր Պուտինը ստորագրեց Ռուսաստանի և Իրանի միջև համապարփակ ռազմավարական գործընկերության մասին պայմանագրի վավերացման մասին օրենքը: Իրանական կողմը վավերացրել է պայմանագիրը մայիսի 21-ին, իսկ Իրանի Պահապանների խորհուրդը՝ հունիսի 11-ին: Պայմանագիրը, որը երկու երկրների նախագահներ Վլադիմիր Պուտինը և Մասուդ Փեզեշքիանը ստորագրել են հունվարի 17-ին, ունի 47 հոդված: Այն ենթադրում է, որ կողմերից յուրաքանչյուրը, եթե մյուսը ենթարկվում է արտաքին սպառնալիքի, պարտավորվում է չաջակցել ագրեսորին և պետք է ձգտի նպաստել հակամարտության կարգավորմանը՝ ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա: Բացի այդ, Իրանի կառավարության պաշտոնական ներկայացուցիչ Ֆաթեմեհ Մոհաջերանին հայտնել է, որ Վլադիմիր Պուտինի այցը Իրան համաձայնեցվում է դիվանագիտական ուղիներով: Ավելի վաղ Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին հայտարարել էր, որ Թեհրանը հույս ունի, որ Ռուսաստանի առաջնորդը կայցելի Իրան 2025 թվականին: Թե ինչ կնշանակի նման այցը Ադրբեջան-Իսրայել զույգի համար, ինքնաբերաբար հասկանալի է: Մինչև ռուս-իրանական համաձայնագրի կնքումը, Ալիևն իրեն անվտանգ էր զգում Իրանի հետ հարաբերություններում՝ զգալով Ռուսաստանի պաշտպանությունը, կամ առնվազն չեզոքությունը: Սակայն հունվարի 17-ից հետո ակնհայտ դարձավ, որ Ռուսաստանը և Իրանը սկսում են երկարաժամկետ համագործակցություն: Այս դեպքում Ադրբեջանն արդեն սպառնալիք է զգում նաև Ռուսաստանի կողմից: Ալիևը, զգալով Ռուսաստանի ազդեցության թուլացումը Անդրկովկասի տարածաշրջանում, հակառուսական գործողություններով ցանկանում է ուշադրություն հրավիրել իր վրա՝ որպես տարածաշրջանում կշիռ ունեցող գործոն: Սակայն սա պատրանք է, և տարածաշրջանի քարտեզն ինքնին խոսում է դրա մասին:

Ադրբեջանը սահմաններ չունի Իսրայելի հետ, սահմաններ չունի Թուրքիայի հետ, սահմաններ չունի նույնիսկ իր էքսկլավ Նախիջևանի հետ: Նման աշխարհագրությամբ Ադրբեջանը լուրջ խնդիր չէ Ռուսաստանի համար: Հենց այդ պատճառով է, որ Իսրայել-ԱՄՆ-ը զույգը այժմ ստիպում է Հայաստանին բացելու այսպես կոչված՝ «Զանգեզուրի միջանցքը», Ադրբեջանը ՆԱՏՕ-ի դաշնակից Թուրքիայի հետ կապելու համար, այդպիսով հակադրվելով Ռուսաստանի շահերին՝ իրենց հեռահար հակառուսական ծրագրերով: Եվ սա կարող է լինել պատճառը, որ Հայաստանի վարչապետը կարճատև ուղևորություն կատարեց Միացյալ Նահանգներ և հանդիպեց հիմնականում իսրայելամետ ամերիկյան խմբերի հետ (Ատլանտյան խորհուրդ, «Հերիթիջ» հիմնադրամ և այլն): Իրանի սկզբունքային դիրքորոշման պատճառով ռուսական քաղաքական շրջանակներում արդեն իսկ հստակ ըմբռնում կա, որ Իրանի հարևան երկրներով և, ընդհանուր առմամբ, Արևմտյան և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններով ու Ռուսաստանով անցնող մի-

ջանցքները բաժանվում են երկու խմբի. կամ դրանք իրանական միջանցքների մրցակիցներ են, կամ էլ հակաիրանական նախագծեր: Հակաիրանական միջանցքները միտված են աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և աշխարհամշակութային ոլորտներում Իրանի համար բարդություններ ստեղծելուն: Այս միջանցքներում ապրանքների և առևտրի տարանցումը չէ իրական նպատակը, այլ հիմնականում հետապնդվում են անվտանգային նպատակներ, որոնք պատմականորեն հիմնված են Արևմուտքի տարածքային էքսպանսիոնիզմի վրա: Ադրբեջանի Հանրապետությունն իր հերթին ձգտում է ապահովել, որպեսզի միջազգային արևելք-արևմուտք և հյուսիս-հարավ տրանսպորտային ուղիներն անցնեն իր տարածքով: «Զանգեզուր» տեղանունը կիրառելով Հայաստանի հարավի նկատմամբ՝ Ադրբեջանի նախագահ Ալիևը բազմիցս սպառնացել է Երևանին, որ կբացի «Զանգեզուրի միջանցք»՝ կիրառելով քաղաքական կամ ռազմական գործիքակազմ, ինչն անմիջապես բացասական արձագանք է առաջացրել Հայաստանում և Իրանում: Բաքուն և Անկարան հետապնդում են Հարավային Հայաստանի զավթման նպատակը՝ համաձայն պանթուրանական տեսլականի: Իրականում, «Զանգեզուրի միջանցք» կեղծ տերմինի օգտագործումը «ՆԱՏՕ-ի Թուրանի միջանցքի» փոխարեն սխալ է պատմական, քաղաքական և իրավական տեսանկյունից: Քանի որ «Զանգեզուրի միջանցք» տերմինը, կամ, ավելի ճիշտ, Ալիևի կողմից հորինված «Արևմտյան Զանգեզուր» կեղծ հասկացությունը վերաբերվում է Սյունիքի մարզին, որը սահմանակից է Իրանին: **Իրականում, այս տեղանունը տարածքային պահանջ է Հայաստանի Սյունիքի մարզի նկատմամբ: Եթե այն իրականացվի, ապա կփոխի ամբողջ տարածաշրջանի տարանցիկ քարտեզը:** Հիշյալ միջանցքը միտված է Իրանի և Հայաստանի կապը ոչնչացնելուն (Սյունիքի մարզի փոխանցումն Ադրբեջանի Հանրապետությանը, ցանկացած անվան տակ, նույնիսկ որպես տրանսպորտային երթուղի), և կստեղծի պանթյուրքիզմի (պանթուրանիզմի) աշխարհագրական կապը Թուրքիա-Ադրբեջանի Հանրապետություն-Կենտրոնական Ասիա առանցքի երկայնքով՝ համաձայն միջազգային գլոբալ խաղացողների և ՆԱՏՕ-ի նպատակների և այդպիսով հիմք կհանդիսանա Չինաստանի, Ռուսաստանի և Իրանի հիմնական ու կենսական շահերին լուրջ հարվածներ հասցնելու հետևյալ չորս ոլորտներում:

1. Տարանցիկ գոտի. Ռուսաստանը, Չինաստանը և Իրանը ներկայումս կենտրոնանում են չորս խոշոր տարանցիկ նախագծերի վրա՝ «Մետաքսի ճանապարհի վերածննդի նախագիծը կամ «Գոտու ճանապարհ», «Հյուսիս-Հարավ միջանցք», «Պարսից ծոցը Սև ծովին կապող միջանցք» և «Տնտեսական համագործակցության կազմակերպության (ՏՀԿ) միջանցք»: ՆԱՏՕ-ի «Թուրանի միջանցքի» շրջանակներում Անկարան պատրաստվում է «միջանցք» բացել Թուրքիայից դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա, ապա՝ Աֆղանստան և Պակիստան (Գվադար): Այդպիսով, վերը նշված չորս միջանցքները ինչ-որ կերպ կկտրվեն, կխափանվեն կամ կթուլանան: Այս հարցի կարևորությունն այն է, որ ամերիկյան վերլուծական կենտրոնները հայտարարել են, որ Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի հետևանքները շատ ավելի մեծ կլինեն, քան Չինաստանի ռազմական սպառնալիքը Միացյալ Նահանգների համար: Այն փաստը, որ Թուրքիան և Ադրբեջանի Հանրապետությունը պնդում էին դարի և փաշտո լեզուներով խոսող Աֆղանստանի դիտորդ անդամակցության վրա, այսպես կոչված՝ թյուրքախոս երկրների համագործակցության խորհրդում, նույն հարցի արդյունք էր, այն է՝ Աֆղանստանի դիրքավորումը «միջանցքային պատերազմում»:

2. Էներգետիկ ոլորտ. «ՆԱՏՕ-ի Թուրանի միջանցքը» նախատեսված է Կասպից ծովով Ուզբեկստանից, Ղազախստանից և Թուրքմենստանից Բաքու գազ մատակարարելու համար: Ներկայումս գործում է Բաքվից Իտալիա գազատար (որը ներառում է Հարավային Կովկասի երկու հատվածները՝ Տրանսանատոլիական բնական գազի խողովակաշարը (TANAP) և Վերին գազատարը): Սակայն միայն Բաքուն բավարար գազ չունի այս խողովակաշարով մատակարարելու համար: Եթե «Թուրանի միջանցքը» իրականացվի և նշված երեք երկրների գազը միացվի այդ խողովակաշարերին, Եվրոպան լուրջ կարիք չի ունենա ռուսական գազի՝ ռազմավարական «Հյուսիսային հոսք» խողովակաշարերի, Իրանի (Նաբուկո նախագծի տեսքով) գազի, և Ռուսաստանի ու Իրանի աշխարհաքաղաքական կարողությունները էներգետիկ ոլորտում կթուլանան: Միևնույն ժամանակ, Չինաստանը նույնպես կբախվի Կենտրոնական Ասիայից, մասնավորապես Թուրքմենստանից, իր էներգետիկ կարիքները բավարարելու խնդիրների հետ:

3. Էթնիկական հարցերի ոլորտում. «միջանցքը» պետք է ստեղծի լայն էթնիկ ալիք՝ հիմնված պանթյուրքիզմի վրա, որպես միջոց ունենալով ադրբեջանցիներին և թուրքմենների Իրանում, Չինաստանի ույղուրներին և Ռուսաստանի թաթարական և թյուրքական շրջանները:

4. ՆԱՏՕ-ի ընդլայնման ոլորտում. «Թուրանական միջանցքը» պետք է ՆԱՏՕ-ն ուղղակիորեն

տանի դեպի Իրանի հյուսիսային սահմանները, Ռուսաստանի հարավային սահմանները և Չինաստանի արևմտյան սահմանները՝ Սինցզյան նահանգում, այդպիսով ավարտելով այդ երկրները շրջապատելու և դրանց փլուզման հիմքը դնելու ծրագիրը: Փաստն այն է, որ ՆԱՏՕ-ի արևելք ընդլայնվելու ցանկությունը չի մարել Խորհրդային Միության փլուզումից ի վեր, և վերահիմնավորելով իր հռչակված գլոբալ դերը՝ ՆԱՏՕ-ն երբեք չի հրաժարվի այնպիսի կարևոր տարածաշրջաններից, ինչպիսիք են Կովկասը և Կենտրոնական Ասիան: ՆԱՏՕ-ում Մեծ Բրիտանիայի նախկին ներկայացուցիչ Ադամ Թոմսոնն ընդգծում է, որ «Թուրանական միջանցքը» ՆԱՏՕ-ն կտանի դեպի Չինաստանի Սինցզյան նահանգի սահմանները: Մտածել, թե քանի որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, պարտադիր չէ, որ ՆԱՏՕ-ն անմիջականորեն ներկա լինի այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Կովկասը և Կենտրոնական Ասիան, կլիներ չափազանց միամիտ, քանի որ, նախևառաջ, նման տրամաբանությամբ ՆԱՏՕ-ն չպետք է շարժվեր դեպի Ուկրաինա, Շվեդիա և Ֆինլանդիա, քանի որ Ռուսաստանի մյուս հարևանները, ինչպիսիք են Էստոնիան և Լատվիան՝ 2004 թվականից, իսկ Լեհաստանը (ռուսական Կալինինգրադի հարևանը), ՆԱՏՕ-ի անդամ են 1999 թվականից: ՆԱՏՕ-ի երկրորդ նպատակը Ռուսաստանին, Չինաստանին և Իրանին շրջապատելն է, և ՆԱՏՕ-ի ներկայությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում, ըստ էության, լրացնում է Ռուսաստանին Սև ծովից, Չինաստանին Հարավչինական ծովից և Իրանին Պարսից ծոցից շրջափակելու ծրագիրը: Երրորդ, ՆԱՏՕ-ի նպատակների սահմանման մեջ ՆԱՏՕ-ի Թուրանի միջանցքը նախերգանք է այսպես կոչված՝ թյուրքալեզու երկրների կազմակերպական ամրապնդման և այս կազմակերպության տեսքով, այսպես կոչված՝ «թյուրքական ՆԱՏՕ»-ի ստեղծման համար (նման է արաբական ՆԱՏՕ-ի գաղափարին՝ Պարսից ծոցի համագործակցության խորհրդի տեսքով): Հենց այս հիմքի վրա է, որ վերջին տասնամյակներում, չնայած ՆԱՏՕ-ի դեպի արևելք շարժման նկատմամբ Ռուսաստանի զգայնությանը, ՆԱՏՕ-ն չի բավարարվել միայն Թուրքիայի անդամակցությամբ՝ մշակելով այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «Խաղաղություն հանուն գործընկերության», կամ «ՆԱՏՕ-ի հետ անհատական համագործակցության ծրագիրը», կամ «Բաց երկնքի ծրագիրը»՝ հետխորհրդային երկրների հետ:

Իրանը «Զանգեզուրի միջանցքի» (ՆԱՏՕ-ի Թուրանի միջանցք) գործարկումը դիտարկում է որպես տարածաշրջանում իր աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և աշխարհամշակութային կարողությունների թուլացում: Նախ, այս աշխարհաքաղաքական ցնցումները հետևանքում են սահմանային և աշխարհաքաղաքական փոփոխությունների, Իրանի և Հայաստանի միջև սահմանի կտրման և պանթյուրքիզմի ամրապնդման նպատակ: Միևնույն ժամանակ, Իրանը կորցնում է Ադրբեջանի Հանրապետության և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև կապող օղակ լինելու հանգամանքը: Երկրորդ, Թուրքիան, որպես ՆԱՏՕ-ի գործակալ, փորձում է իրականացնել Արևմուտքի՝ Իրանին, Ռուսաստանին և Չինաստանին զսպելու ծրագիրը՝ նոր տարածաշրջանային համակարգի ձևավորումը կանխելու նպատակով: Այս ծրագրի կենտրոնում է «Զանգեզուրի միջանցքը», որի նպատակն է համակարգել տարածաշրջանի երեք երկրների տարանցիկ և էներգետիկ հավասարումներն ու ծրագրերը, ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի Կասպից ծով և Կենտրոնական Ասիա, ինչպես նաև թուրան-անգլիական էթնոցենտրիզմի խթանումը: Երրորդ՝ Իրանը կորցնում է իր հիմնական դերը որպես միջնորդ Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի միջև: Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի միջև այս երթուղու գործելու դեպքում Արևելք-Արևմուտք միջանցքը կմղվի երկրորդ պլան: Կենտրոնական Ասիայի հետ Թուրքիայի առևտրի կարևոր մասը կախված է Ռուսաստանի և Իրանի միջով անցնող բեռնատարների տարանցումից: Ամեն տարի Իրանի տարածքով Կենտրոնական Ասիա է մեկնում 43.000 թուրքական բեռնատար, իսկ «Զանգեզուրի միջանցքի» բացմամբ Անկարան կունենա նոր այլընտրանք և կարճ ճանապարհ Կենտրոնական Ասիայի հետ առևտրի համար: Քանի որ Թուրքիայի առևտրային ուղին դեպի Կենտրոնական Ասիա անցնում է Իրանով, այս ուղին նույնպես կկորցնի իր կարևորությունը նոր միջանցքի բացմամբ: Չորրորդ՝ Իրանը կկորցնի Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետ ինտեգրման կետը, որը Հայաստանն է: Ներկայումս կան երեք երթուղիներ՝ Հայաստանով, Ադրբեջանով և Թուրքիայով, որոնք Իրանին հնարավորություն են տալիս մուտք գործելու Եվրոպա: Այս միջանցքի բացմամբ Հայաստանի երթուղին, որը Իրանի ամենահուսալի դարպասն է դեպի Եվրոպա, կհայտնվի վտանգի տակ:

Դրոշակ
Օգոստոս 2025
13

զուրի միջանցքը», եթե այն իրականացվի, ավելի կնվազեցնի Իրանի կարևոր դերը Արևելք-Արևմուտք տրանսպորտային ուղիներում, և վերջապես, Իրանի թիրախային շուկաները կտուժեն էներգետիկ մրցակցության ասպարեզում: «Հարավային Կովկասի անվտանգություն» գրքի հեղինակ, դոկտոր Ահմադ Քազեմին Իրանի արտաքին հարաբերությունների ռազմավարական խորհրդին տեղեկացրել է, որ «Ադրբեջանը ձգտում է ստեղծել երևակայական պանթյուրքական միջանցք Հայաստանի հարավում՝ Թուրքիայի և մնացած Եվրոպայի հետ կապ հաստատելու պատրվակով: Դրա փոխարեն Իրանն առաջարկել է «Արազի միջանցքը», որը երեք տասնամյակ շարունակ եզակի դեր է խաղացել Իրանի համար՝ Ադրբեջանի Հանրապետության և Նախիջևանի միջև ցամաքային կապ ապահովելու առումով:

Իհարկե, բացի Մեծ Բրիտանիայից, որպես պանթուրանիզմի լուրջ հովանավոր դեռևս 19-րդ դարից, մյուս եվրոպական երկրները չեն աջակցում «Զանգեզուրի միջանցքին»՝ նեոօսմանիզմից վախի պատճառով: Նրանք ավելի շատ ուշադրություն են դարձնում Միջին միջանցքին, որը բնույթով տարբերվում է «Զանգեզուրի միջանցքից»: Չինաստանը չի աջակցում «Զանգեզուրի միջանցքին» ույղուրների հետ կապված անվտանգության մտահոգությունների պատճառով, սակայն Պեկինը բացասական կարծիք չունի Միջին միջանցքի վերաբերյալ՝ որպես տարանցիկ միջանցքներից մեկի: Միջին միջանցքը որպես հաղորդակցության միջանցք վերջին մի քանի տասնամյակների ընթացքում գրավել է Կենտրոնական Ասիայի երկրների ուշադրությունը: Միջին միջանցքը սկսվում է Չինաստանի ծովային և ցամաքային նավահանգիստներից, անցնում Ղազախստանով մինչև Ակտաու նավահանգիստ, ապա, հատելով Կասպից ծովը, հասնում է Բաքվի նավահանգիստ, և այնուհետև երկաթուղով տեղափոխվում է Վրաստանի Փոթիի և Բաթումիի նավահանգիստներ, իսկ հաջորդ փուլում՝ Սև ծովով, Ռումինիայի Կոնստանցա և Բուլղարիայի Վառնայի նավահանգիստներ:

Երկրորդ տարբերակը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին է, որը մտնում է Թուրքիա և հասնում Մերսինի ու Ստամբուլի նավահանգիստներ, որպեսզի ծովային բեռնափոխադրումներով հնարավոր լինի ապահովել մուտքը Եվրոպայի տարբեր մասեր: Իսկ Հայաստանի հարավով նախատեսվող միջանցքը, որը պետք է անցնի Ադրբեջանի Հանրապետության տարածքով դեպի Նախիջևան և Նախիջևանից դեպի Թուրքիա, արգելափակում է Իրանի աշխարհաքաղաքական դիրքը և աշխարհագրական կապ է ապահովում պանթուրանիզմի համար:

2002 թվականից ի վեր, երբ իսրայելական լոբբին (AIPAC) օգնեց Ադրբեջանին չեղարկել «Ազատության աջակցության մասին» օրենքի 907-րդ հոդվածը, որը սահմանափակում էր ԱՄՆ-ի օգնությունը Ադրբեջանին պետական մակարդակով, Իսրայելը դարձել է Ադրբեջանի լավագույն բարեկամը: Ե՛վ Իսրայելը, և՛ Ադրբեջանը սպառնալիք են զգում Իրանի կողմից, ուստի նրանց համագործակցությունը շատ բնական է: Այդ ժամանակվանից ի վեր Բաքուն և Թել Ավիվը դարձել են մտերիմ գործընկերներ, հատկապես ռազմական և էներգետիկ համագործակցության կարևորագույն ոլորտներում: Ադրբեջանը Իսրայել հիմնական էներգակիր արտահանողն է՝ մատակարարելով նրա նավթի ներմուծման 55%-ը: Իր հերթին, Իսրայելը միլիարդավոր դոլարների զենք և ռազմական տեխնոլոգիաներ է վաճառում Բաքվին: 2016-2021 թվականներին իսրայելական զենքը կազմել է Ադրբեջանի զենքի ներմուծման 69%-ը: Այս մատակարարումները ներառել են հակահրթիռային համակարգեր և անօդաչու թռչող սարքեր, որոնք մեծ դեր են խաղացել Ադրբեջանի հաղթանակում Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմում: 2016-2023 թվականներին Իսրայելի ռազմական բազաներից Ադրբեջան իրականացվել է զենքի արտահանման 92 չվերթ:

Այս թռիչքներն ավելացել են 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի վրա Ադրբեջանի ռազմական հարձակումից անմիջապես առաջ: Գազայում շարունակվող պատերազմը չի խանգարել այս համագործակցությանը: Ադրբեջանը Մոսադին տրամադրել է Իրանի տարածքի մոնիթորինգի առաջնային բազա, և նույնիսկ վերակառուցել է օդանավակայան, որը Իսրայելը կարող է օգտագործել, եթե պլանավորի հարվածել իրանական միջուկային զենքի օբյեկտներին: Բանը հասել է նրան, որ Բաքվի որոշ վերլուծաբաններ այնքան վստահ են Իսրայելի հետ հարաբերությունների խորացման հեռանկարների մեջ, որ եզրակացնում են, թե. «եթե Միացյալ Նահանգները որոշի աջակցել Իսրայելի կողմից Իրանի միջուկային ենթակառուցվածքների վրա հարվածին, Ադրբեջանը կարող է նպաստող դեր խաղալ» (տե՛ս https://www.stimson.org/2025/azerbaijans-deepening-energy-ties-with-israel/): Սակայն նման եզրակացությունը խիստ վիճահարույց է: Տարածաշրջանում ցանկացած զինված հակամարտություն հատկապես հակացուցված է էներգակիրներ արտահանող երկրների համար, քանի որ նրանց արտադրական հզորությունները դառնում են հակառակորդ պետությունների հարձակումների պոտենցիալ թիրախ: Հատկապես, եթե Ադրբեջանը որպես «խթանող» կողմ, ուղղակիորեն



ներքաշվի հարևան Իրանի հետ ռազմական բախման մեջ, ինչպես խորհուրդ են տալիս Բաքվի որոշ փորձագետներ: Այստեղ արժե ուշադրություն դարձնել երկու կարևոր թեմաների: Մի կողմից՝ Ռուսաստանի, մյուս կողմից՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունները դժվար ժամանակներ են ապրում: Հայ հասարակությունը և քաղաքական վերնախավը խոցված են Լեռնային Ղարաբաղի կորստով, երկու լուրջ ռազմական պարտությունների հետևանքով, որի պատասխանատվությունը նրանք փորձում են բարդել Մոսկվայի վրա, և միևնույն ժամանակ փորձում են դիվերսիֆիկացնել իրենց արտաքին քաղաքականությունը՝ ամրապնդելով ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունները:

Ռուս-ադրբեջանական հարաբերությունների սառեցումը տեղի ունեցավ 2024 թվականի դեկտեմբերի 25-ին Ղազախստանի Ակտաու քաղաքի մոտ Բաքվից Գրոզնի թռչող AZAL ուղևորատար ինքնաթիռի կործանման ֆոնին: Նախագահ Իլհամ Ալիևի՝ Մոսկվայում Հաղթանակի շքերթին մասնակցելուց հրաժարվելը Բաքվում հպարտությամբ ընդունվեց և համարվեց արդարացված և արժանի քայլ, հատկապես վերջին միջադեպերի ֆոնին՝ AZAL քաղաքացիական ինքնաթիռի խոցումը, ադրբեջանական պաշտոնական ռեսուրսների վրա կիբեռհարձակումները և Միլլի մեջլիսի անդամի Ռուսաստան մուտք գործելու մերժումը: Այս իրադարձությունները, ինչպես պնդում են Ադրբեջանում, շքերթին մասնակցությունը դարձրին անտեղի: Ստորև բերված են Բաքվի որոշ քաղաքական գործիչների և փորձագետների մեկնաբանությունները: Քաղաքագետ և պատգամավոր Ռասիմ Մուսաբեկովը կարծում էր, որ Մոսկվայում կայանալիք միջոցառումներին ներկա պայմաններում մասնակցելը վտանգավոր և անտեղի է: Որպես պատճառ նա նշում է Ռուսաստանի կողմից խոցված AZAL քաղաքացիական ինքնաթիռի միջադեպը և այլ վիճահարույց հարցեր, այդ թվում՝ Ադրբեջանի պատգամավորին երկիր մուտք գործելու մերժումը: Նա ընդգծում է, որ Ռուսաստան բոլոր առևտրային չվերթները չեղարկվել են, և Մոսկվայում շքերթին մասնակցությունը կարող է մեկնաբանվել որպես «աջակցություն Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայի նկատմամբ անընդունելի քաղաքականությանը»:

Նրա խոսքերով՝ Ադրբեջանը միանշանակ աջակցում է Ուկրաինայի տարածքային ամբողջականությանը և համաձայն չէ Կիևում «ֆաշիստական ռեժիմի» մասին հնարավոր հռետորաբանությանը, ինչպես և շքերթին ԼԺՀ-ի, ԴԺՀ-ի, Աբխազիայի և Հարավային Օսիայի ներկայացուցիչների հնարավոր մասնակցության հետ: Շեշտելով, որ այդ կազմն ակնհայտորեն իրենց համար չէր, քաղաքագետը կարծում էր, որ Մոսկվան արդեն լավ գիտակցում է ինչպես Ադրբեջանի ուժը, այնպես էլ նրա տարածաշրջանային նշանակությունը: Նրա դեմ ուժով, քարոզչական հարձակումներով կամ տնտեսական վնասով գործելու փորձերը կհանգեցնեն Ադրբեջանի համաչափ արձագանքին: Նրա խոսքով՝ Ռուսաստանը պետք է հասկանար, որ աշխարհի երկրների 90%-ը իրեն լավ չի վերաբերվում. «Թուրքիայի նախագահը, որը Ադրբեջանի ռազմավարական գործընկերն է, չի գնում Մոսկվա: Իսրայելի վարչապետը և Հունգարիայի առաջնորդը, որի հետ մենք նույնպես լավ հարաբերություններ ունենք, նույնպես այնտեղ չեն գտնվելու: Հետևաբար, չարժե մտածել, որ Ադրբեջանը ինչ-որ կերպ կառանձնանա աշխարհի մնացած մասից»: «ՌԵԱԼ» կուսակցության նախագահ Նաթիգ Ջաֆարլին կարծում էր, որ չգնալու որոշումը ճիշտ է, և այս քայլը ևս մեկ անգամ ապացուցում է, որ Ադրբեջանը տարածաշրջանում Ռուսաստանից ամենաքիչ կախված երկիրն է, և որ վերջին 5-6 տարիների ընթացքում պաշտոնական Բաքուն մեծ դեր է խաղացել Հարավային Կովկասում Մոսկվայի ազդեցության թուլացման գործում: Baku Network-ի տնօրեն Էլչին Ալիողլուն կարծում էր, որ նախագահ Ալիևի բացակայությունը Մոսկվայում Հաղթանակի շքերթին ոչ ժեստ է, ոչ էլ դիվանագիտական բողոք: Սա ցույց է տալիս, որ Ադրբեջանը հրաժարվում է իրեն համարել ուրիշի աշխարհաքաղաքական ծրագրերի կցորդ: Պատերազմը վերապրած, տարածքային ամբողջականությունը վերականգնած և դիվանագիտական դժվար փուլերը հաջողությամբ անցած երկիրը այլևս չի ցանկանում մասնակցել խորհրդանշական միջոցառումների՝ թվացյալ հարգանքը պահպանելու համար: Վերջին ամիսներին



Բաքվի և Մոսկվայի միջև կուտակվել են բավականին լուրջ տարաձայնություններ: Եթե Մոսկվան դեռևս Բաքվին համարում է իր «փոքր եղբայրը», ապա ժամանակն է վերանայել Եվրասիայի ժամանակակից քարտեզը: Կրեմլը պետք է հասկանա, որ հիերարխիաների դարաշրջանն ավարտվել է: Նախագահ Իլհամ Ալիևը երկիրը տանում է արտաքին քաղաքականության այնպիսի ուղիով, որտեղ գործընկերներին գնահատում են ոչ թե նրանց անցյալի արժանիքներով, այլ այսօր ցուցաբերած վերաբերմունքով: Սա նոր աշխարհի կանոնն է. հարգանքը չի հայտարարվում, այն ապացուցվում է ոչ թե խոսքերով, այլ գործերով:

«Ատլաս» քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար Էլխան Շահինօղլուն կարծում էր, որ Իլհամ Ալիևի կողմից Մոսկվայի շքերթի բոյկոտը ճիշտ ռազմավարական որոշում էր: Նախ, շքերթի հյուրերի մեծ մասը Սուրբ Գևորգի ժապավեններ ունեին իրենց ուսադիրներին՝ ռուսական ագրեսիայի խորհրդանիշ: Երբ Ռուսաստանում շովինիստներն օկուպացրին վրացական հողերը, նրանք այդ ժապավենները կրում էին իրենց օձիքներին:

Նույն այդ ժապավենները «զարդարում» են նրանց Ուկրաինայի դեմ ագրեսիվ պատերազմի ժամանակ: Վրաստանի և Ուկրաինայի տարածքային ամբողջականությունը պաշտպանող Ադրբեջանի նախագահը չի կրի օկուպանտի խորհրդանիշը: Շատ երկրներում այն ճանաչվում է որպես ռազմական ագրեսիան խթանող խորհրդանիշ և արգելվում է օրենքով կամ անուղղակիորեն, կովկասյան երկրներից՝ Վրաստանում: Երկրորդ՝ Կարմիր հրապարակում ռազմական տեխնիկայի անցման ժամանակ հաղորդավարը հաճախ օգտագործում էր հետևյալ արտահայտությունը, առանց Ուկրաինայի մասին հիշատակելու. «այս ռազմական տեխնիկան օգտագործվում է «հատուկ գործողության» ժամանակ»: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ Կրեմլն այս շքերթն օգտագործել է քաղաքական նպատակներով: Շքերթը վերածվելու էր գաղափարախոսական հարթակի: Նախկին արտգործնախարար Թոֆիգ Զուլֆուգարովը, չունենալով հավաստի տեղեկատվություն, կարծիք է հայտնում, որ ինքնաթիռի վթարի հետ կապված ակնհայտ պատճառից բացի, կան նաև ռուս-ադրբեջանական հակամարտության այլ կետեր, որոնք դեռևս չեն բացահայտվել: Սա, առաջին հերթին, կապված է հայ-ադրբեջանական հակամարտության հետ: Անվտանգության փորձագետ, քաղաքագետ Արաստուն Օրուջլուն կարծում էր, որ շքերթին իր հողերը օկուպացիայից ազատած փառահեղ ադրբեջանական բանակի մասնակցությունը հանցավոր և օկուպացիոն ռուսական բանակի հետ միասին վիրավորանք է Ադրբեջանին, նրա բանակին և ժողովրդին: Մայիսի 2-ին «Կիբեռհարձակումներ ադրբեջանական լրատվամիջոցների վրա» թեմայով քննարկման ժամանակ Ադրբեջանի խորհրդարանի արտաքին միջամտության և հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարի հանձնաժողովի նախագահ Ռամիդ Նամազովը հայտարարել է, որ 2025 թվականի փետրվարի 20-ին մի շարք ադրբեջանական լրատվամիջոցների վրա իրականացված կիբեռհարձակումը կազմակերպվել է Ռուսաստանից: Նրա խոսքով՝ «հարձակումը բարձր տեխնիկական մակարդակով իրականացվել է APT29 կիբեռլրտեսական խմբի (խումբը հայտնի է «Հարմարավետ արջ», «Կեսգիշերային ձնաբուք» և «Դուքսեր» անուններով, որը կապված է ռուսական հատուկ կառույցների հետ): «Ադրբեջանի Global Media Group-ի դեմ իրականացված կիբեռհարձակումները համակարգված և նպատակային էին, որոնց հիմնական նպատակը «հասարակական կարծիքի մանիպուլյացիան և ազգային տեղեկատվական ինքնիշխանության խաթարումն էր», - ասել է Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Նագիֆ Գամզաևը: Նրա խոսքով՝ հարձակումների տևողությունն ու ինտենսիվությունը ցույց են տալիս, որ դրանք ինքնաբուխ չեն, այլ նախապես պլանավորված գործողություններ են: Ռուսաստանի տարածքից կիբեռհարձակումների թեման հատկապես զգայուն է երկկողմ հարաբերությունների համատեքստում: Այս խնդրի լուծումը պահանջում է հավասարակշռված մոտեցում: Նշենք, որ այս բացահայտ հակառուսական հայտարարությունների ադրբեջանցի հեղինակների ցանկը կարելի է շարունակել անընդհատ: Իր հերթին, ռուսական մամուլը նաև մեկնաբանել է Ալիևի Մոսկվա մեկնելուց հրաժարվելը:

Օրինակ՝ «Ամեն ինչի համար վրեժ լուծող Ալիևը ինչի՞ հետ փոխանակեց Հաղթանակի օրը» հոդվածում հեղինակը գրում է. «մինչդեռ Հաղթանակի օրվա անբարոյական անտեսումը Ալիևի կողմից կարող է դառնալ Կրեմլի համբերության վերջին կաթիլը, և իշխանությունները վերջապես կսկսեն կոշտ գործել»: Մեկ այլ հեղինակ գրում է. «մեր թշնամիներին (իմա՝ Ուկրաինա) զինող պետության հետ կասկածելի «բա-

րեկամությունը», կարծես, ոչ մեկին օգուտ չի տալիս, բացի ադրբեջանական օլիգարխիայի գործընկերներից: Այնպես որ, մեր հերթն է հարցեր տալու: Ի դեպ, մենք կարող ենք հարցնել ոչ միայն առևտրի օրինականության և երկրում միգրանտների մնալու մասին: Ժամանակն է պարզել, թե ինչ է պատահել Ղարաբաղում գտնվող ռուս սպաների հետ: Հիշենք, որ 2023 թվականի սեպտեմբերին մեր խաղաղապահների UAZ Patriot-ը կրակոցների ենթարկվեց ադրբեջանական զինվորականների կողմից Ջանյաթաղ գյուղի մոտ: Մեքենայում գտնվող բոլոր զինծառայողները զոհվեցին, այդ թվում՝ խաղաղապահ զորքերի հրամանատարի երկու տեղակալ և այլ սպաներ: Եթե մենք շարունակենք այսպես խաղաղ և անատամ վարվել՝ չարձագանքելով Բաքվի դեմարշներին, ապա նման միջադեպերը կշարունակվեն նաև ապագայում»: «Ներկայումս Ադրբեջանի պաշտոնյաները, - իր հերթին սպառնում է «Թուրան» լրատվական գործակալությունը,- պատրաստում են փաստաթղթեր միջազգային դատավարության համար՝ ձգտելով Մոսկվային պատասխանատվության ենթարկել Ղազախստանի Ակտաու օդանավակայանի մոտ ինքնաթիռի կործանման և 38 ուղևորների մահվան համար: Պաշտոնական դիրքորոշումը մնում է անսասան. Ռուսաստանը պետք է ճանաչի իր մեղավորությունը, փոխհատուցի զոհերի հարազատներին և ապահովի պատասխանատուների քրեական հետապնդումը: Ադրբեջանի պաշտոնյաները զգուշացնում են, որ դա չանելը կհանգեցնի հետագա դիվանագիտական սրացման»: «Երկխոսությունը մնում է տարբերակ, բայց Մոսկվան պետք է պատասխանատվություն կրի», - ասվում է հայտարարության մեջ, որն այժմ հրապարակվել է APA պետական լրատվական գործակալության կողմից: «Եթե Ռուսաստանը հրաժարվի, Բաքուն պատրաստ է հետագա միջոցառումների»: Բաքուն նման գործողություններով փորձում է շանտաժի ենթարկել Մոսկվային: Դրա մասին է վկայում, մասնավորապես, Կիևի աջակցության ցուցադրական գործողությունը՝ 1 միլիոն դոլարի «մարդասիրական օգնության» հատկացումը՝ տեղական լրատվամիջոցներում հակառուսական ակտիվ արշավի համապատկերին՝ «կայսերական նկրտումների», «Ադրբեջանի դեմ ագրեսիվ քարոզչական արշավ» վարելու և նույնիսկ այն բանի մեղադրանքներով, որ Ռուսաստանը գործել է Հայաստանի կողմից Բաքվի և Երևանի միջև հակամարտության ժամանակ՝ զինելով Հայաստանը, և փորձելով Կովկասյան տարածաշրջանում պահպանել իր ազդեցությունը: Հետաքրքիր իրավիճակ է ստեղծվել, երբ արևմտյան հրահանգիչների ջանքերով Ռուսաստանի հետ հարաբերությունները փչացել են թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի հետ: 2020 թվականից ի վեր արագ փոփոխվող ռուս-հայկական հարաբերությունների թեման Ռուսաստանում դիտարկվում է Ռուսաստանի և Արևմուտքի միջև առճակատման պրիզմայով: Ռուսները բազմիցս շեշտում են, որ Փաշինյանը Հարավային Կովկասում առաջին պետական գործիչը չէ, ով պատրաստ է արմատապես ոտնահարել սեփական պատմությունը, ոչնչացնելով անցյալը՝ անորոշ ապագայի անունից:

Միխայիլ Սաակաշվիլին չէր թաքցնում իր թշնամանքը վրացական սոցիալ-մշակութային բազիսը հանդիսացող ամեն ինչի նկատմամբ, քանի որ դրանք խանգարում էին նեոլիբերալ բարեփոխումներին: Սաակաշվիլիի գրեթե տասնամյա փորձի հետևանքը երկակի ստացվեց: Մի կողմից, ճնշումն ազդեցություն ունեցավ. նույնիսկ Սաակաշվիլիի թշնամիներն են խոստովանում, որ նա զգալի առաջընթաց է գրանցել վրացական պետական ապարատի վերափոխման գործում: Մյուս կողմից, վրացիներին «սպասարկող ժողովրդի» վերածելը, որպեսզի ազատվեն ազգի ներքին հպարտությունից և ծառայեն «սպասարկող տնտեսությանը», ինչպես հիմա են ասում, «չաշխատեց»: Հասարակությունը մերժեց ժանդարմական մեթոդներով «բարեփոխիչին», և նրա քաղաքական անկումն ընդունվեց թեթևությամբ: Ի պատիվ դեպի ազգայինը միտված Վրաստանի ակտիվ քաղաքական վերնախավի, ճիշտ դասեր քաղվեցին «պատմական Վրաստանից» բաժանվելու փորձերից, որոնց էությունն այն էր, որ ծնկի գալը ոչ մի լավ բանի չի հանգեցնում, լինի դա սոցիալ-տնտեսական, թե (աշխարհա) քաղաքական հարցերում: Դժվար թե ճիշտ լինի գրեթե քսան տարի առաջվա Վրաստանի փորձը տեղափոխել այսօրվա Հայաստան. իրավի-

ճակն աշխարհում, տարածաշրջանում և երկրներում շատ տարբեր են: Ռուսներին թվում է, որ Հայաստանում չկա որևէ գործիչ, որը հավասար լինի Միխայիլ Սաակաշվիլիին իր կործանարար ուժով: Իմ զրուցակիցները գտնում են, որ Փաշինյանն այս առումով չափազանց թույլ է և պակաս խարիզմատիկ ու վճռական: Արձանագրենք. սոցիալ-քաղաքական դարավոր ավանդույթների մերժումը ցավոտ և ռիսկային գործընթաց է: Նույնիսկ մերժման դեպքում այն հակված է բումերանգի պես վերադառնալու: Ընդ որում, Սաակաշվիլիի սոցիալական փորձերը ծավալվել են հետխորհրդային տարածքում ԱՄՆ-ի և ԵՄ-ի հարձակողական քաղաքականության ֆոնին և նրանց ակտիվ աջակցությամբ: Սաակաշվիլին ճակատագրական սխալ հաշվարկ կատարեց՝ որոշելով, որ այս աջակցությունը նույնիսկ ենթադրում է ռազմական երաշխիքներ Ռուսաստանի հետ հակամարտության դեպքում: Այո, այդ օրերին արևմտյան մայրաքաղաքները լրջորեն սպասում էին ամբողջ աշխարհաքաղաքական լանդշաֆտի արագ վերակազմակերպմանը՝ հօգուտ եվրաատլանտյան ինստիտուտների:

«Գունավոր հեղափոխությունների» դարաշրջանը, որին զուգահեռ իրականացվում էր Մերձավոր Արևելքում «ժողովրդավարության խթանման» կուրսը, դարձավ Արևմուտքի մասնակցության գագաթնակետը Ատլանտյան տարածքից հարավ և արևելք գտնվող տարածքների անմիջական վերակազմակերպմանը: Այս առումով, Սաակաշվիլին, ով ամբողջ երկրում կախել էր Եվրամիության և ՆԱՏՕ-ի դրոշները, որոշակի հիմքեր ուներ ակնկալելու «ոչ պատմական» Վրաստանի մերձեցմանը և ամրապնդմանը՝ մեկ այլ աշխարհաքաղաքական համայնքում: Սակայն խաղադրույքը չարդարացրեց վրացական էլիտայի անզուսպ պոռթկումների պատճառով, որոնք Վրաստանը համարում էին «Եվրոպայի կենտրոն»: Առաջացան խնդիրներ, որոնց սկսեց բախվել արևմտյան քաղաքականությունն ամբողջությամբ, և Վրաստանը այդ հարթության մեջ չէր տեղավորվում: Ռուսաստանի և Արևմուտքի առճակատման սրությունը բազմիցս աճել է: Սակայն, եթե Թբիլիսին այն ժամանակ կարող էր հույսը դնել Արևմուտքի համակարգային (թեև ոչ անսահմանափակ) աջակցության վրա, ապա այժմ ոչ ոք չի կարող որևէ կոնկրետ բան խոստանալ Երևանին: Բոլոր ուժերը նետված են այլ ուղղությամբ: Այսինքն՝ Հայաստանին առաջարկվում է շարժվել դեպի «կոլեկտիվ Արևմուտք»՝ իր սեփական պատասխանատվությամբ, վտանգներով և ռիսկերով: Ինչ վերաբերում է գլխավոր խնդրին՝ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրին և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորմանը, ապա այստեղ Երևանը ստիպված կլինի հույսը դնել իր վրա: Հայաստանը հրաժարվել է Ռուսաստանի ծառայություններից, իսկ ԵՄ-ի և հատկապես Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի ծառայություններն ավելի շուտ խրախուսական ճիչեր են, ոչ ավելին: Երևանը ոչ մեկի վրա հույս դնելու հնարավորություն չունի, և իր գծերը պաշտպանելու սեփական ռեսուրսը սահմանափակել է ինքը: Սակայն հարցերը մնում են բաց. ո՞վ է մեղավոր երկրի պաշտպանունակության անկման համար, և որքանո՞վ կարող էին (կամ չէին կարող) դաշնակիցները փոխհատուցել դրա պակասը:

Հայաստանի ղեկավարությունը հիմնականում մեղադրում է Մոսկվային կրիտիկական պահին օգնության բացակայության համար: Եվ նման իրողությունների անշրջելիությունն արդարացնելու համար Նիկոլ Փաշինյանի առաջադրած փաստարկների շարքը հենց այն է, ինչ անհրաժեշտ է. հավակնություններից և պատմական մեկնաբանություններից հրաժարվելը՝ հանուն հարևանների հետ խաղաղության: Բայց պարզ է, որ դա չի օգնում: Ժամանակը ցույց տվեց, որ Հայաստանի՝ ողջամիտ չափավորության սկզբունքով առաջնորդվելու ցանկությունը հակասում է ուրիշների, այդ թվում՝ ռազմատենչ Ադրբեջանի մտադրություններին: Հայկական ղեկավարության քաղաքականությունը հանգեցրել է նրան, որ չկա ոչ մեկի վրա հույս դնելու հնարավորություն, և «հավաքական Արևմուտքի» ներկայացուցիչը տարածաշրջանում Թուրքիան է: Գլոբալ փոփոխությունների դարաշրջանում փաշինյանական խմբակի՝ իրենց համար հարմար վարքագծի մոդել կառուցելու երազանքը դատապարտված է ձախողման: Իրական և պատմական Հայաստանի միջև սահմանազատման գործընթացը շատ ավելի ցավոտ է, քանի որ այս սահմանազատումը տեղի է ունենում մեզանից յուրաքանչյուրի ներսում», - ինչպես խոստովանում է ինքը՝ Փաշինյանը: ■

Սևրի սինդրոմը կամ հայոց պահանջատիրության ուրացման փաշինյանական քաղաքականությունը

Անի Մելքոնյան
Պատմաբան

Հայոց պատմության մեջ օգոստոսը նշանավորվում է երկու իրադարձություններով՝ 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրի կնքմամբ և 1990 թ. օգոստոսի 23-ին Անկախության հռչակագրի ընդունմամբ:

Այս երկու փաստաթղթերն արտացոլումն են հայ ժողովրդի պահանջատիրության, ազգային տեսլականների ու նպատակների:

«1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց անկախության գործընթացի սկիզբը:

Անկախության հռչակագրի ընդունումը հայոց պետականության զարգացման պատմության մեջ սկզբնավորեց նոր՝ Հայաստանի Երրորդ Հանրապետության շրջանը: Երկրի քաղաքական ղեկավարության առջև ծառանում էր կարևոր խնդիր՝ որոշել պետահիրավական համակարգի ռազմավարական զարգացման ուղղությունը: Անկախության հռչակագիրն ազդարարեց այդ ռազմավարության իրավական ամրագրումը և պաշտոնականացումը: Այն ամրագրում էր նաև այն հիմքերը, ռազմավարական խնդիրները, պատմաքաղաքական նախադրյալները, որոնք ընկած էին անկախության քաղաքական-իրավական գործընթացի հիմքում»[1]:

Հայաստանի հետագա զարգացման ռազմավարությունն ու Սահմանադրությունը, ըստ ամենայնի, պետք է բխեին Անկախության հռչակագրից, փաստացի Անկախության հռչակագիրը դարձավ այն վեմը, որի վրա բարձրացավ հայոց նորագույն անկախ պետականությունը, գոնե այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանի չափազանց «ինքնիշխան» վարչապետը հերթական նվերը չէր մատուցել Ադրբեջանին՝ հայտարարելով, որ «Հայաստանի անկախության հռչակագրի բովանդակությունն այն մասին է, որ Հայաստանի Հանրապետություն չի կարող գոյություն ունենալ»[2] - փաստորեն «հանուն խաղաղության» Հայաստանի ոչ բարով վարչապետը ոտնատակ է տալիս թե՛ օգոստոսի 23-ը, թե՛ սեպտեմբերի 21-ը:

Այս տրամաբանությամբ, նույն Փաշինյանին կարելի է հարցնել, եթե Հայաստանի Հանրապետություն գոյություն չունի, ապա ո՞վ է ինքը՝ Ադրբեջանի «ինքնիշխան» վասա՞լը, թե՞ Թուրքիայի «անկախ» վալին….:

Ինչևէ, Անկախության հռչակագրի և դրա դեմ փաշինյանական վարչակազմի հարձակումների մասին այսքանը, քանի որ առանձին այդ մասին խոսել ենք:

Այժմ, խոսենք մեկ այլ, ոչ պակաս կարևոր փաստաթղթի՝ Սևրի պայմանագրի մասին, որից մինչև օրս

թուրքական պետությունը ակնհայտ վախ ունի, որը բնութագրվում է «Սևրի սինդրոմ» անվամբ:

«Թեև հայտնի են թուրքական պնդումներն այն մասին, թե Սևրի պայմանագիրը վավերական չէ ու երբեք էլ չի եղել, այնուամենայնիվ, սույն դաշնագիրը 100 տարի շարունակ մղձավանջ է եղել թուրք ժողովրդի և հատկապես Թուրքիայի Հանրապետության քաղաքական ու գիտական շրջանակների համար:Այս ահը երբեմն այնքան ցայտուն է դրսևորվել, որ մինչև իսկ շրջանառության մեջ է մտել «Սևրի սինդրոմ» (թուրք.՝ Sevr Sendromu) արտահայտությունը»[3]:

Թուրքական Հանրապետության հիմնադիրը համարվող Մուստաֆա Քեմալը Սևրի պայմանագիրն անվանում էր «Թուրք ժողովրդի դեմ կազմակերպված մեծ մահափորձ»[4] - իսկ Հայաստանի դավաճանական իշխանությունը փորձում է ամեն կերպ մոռացության մատնել այն:

Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում Սևրի պայմանագիրը, որից այդքան վախենում են Թուրքիան ու Փաշինյանի կառավարությունը՝ այսպես.

Սևրի պայմանագիրը կնքվել է 1920 թ. օգոստոսի 10-ին Ֆրանսիայի Սևրում (Փարիզի մոտ), Թուրքիայի սուլթանական կառավարության և 1914-18 թթ. Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած դաշնակից պետությունների՝ Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Հայաստան, Չեխոսլովա-



կիա՝ Սերբերի, Խորվաթների և Սլովենների թագավորության և Հեջազի միջև: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրել է Ա. Ահարոնյանը: Սևրի պայմանագրի հիման վրա՝ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին հրապարակեց Թուրքիայի և Հայաստանի սահմանաբաժանման մասին իր վճիռը, որը պատմության մեջ մնաց «Վիլսոնյան իրավարար վճիռ» անունով:

Ըստ Սևրի պայմանագրի հիմքով կայացված այդ վճռի, Հայաստանի կազմի մեջ պետք է մտնեին Էրզրումի վիլայեթը, Վանի և Բիթլիսի վիլայեթների երկու երրորդը, Տրապիզոնի վիլայեթի մեծ մասը, ինչպես նաև Տրապիզոնի նավահանգիստը:

Հայաստանը ելք էր ստանում դեպի Սև ծով: Հայաստանին վերադարձվող տարածքները կազմելու էին 90.000 քառ.կմ: Հայաստանի Հանրապետության ընդհանուր տարածքը կազմելու էր 160.000 քառ.կմ, քանի որ 1918 թ. նոյեմբերից Հայաստանի փաստացի տիրապետության տակ էր գտնվում 70.000 քառ. կմ տարածք՝ ներառյալ Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը: Վիլսոնի իրավարար վճիռը վերջնական էր և պարտադիր կատարման համար, բայց թե՛ Սևրի պայմանագիրը (Հայաստանի մասով), թե՛ Վիլսոնի վճիռը մնացին թղթի վրա[5]:

Չնայած սրան, հայ ժողովուրդը Հայ դատի հանձնախմբերի միջոցով տասնամյակներ շարունակ պայքար է մղել իր իրավունքների վերականգնման համար: Կարելի է բացառություն համարել վերջին 6-7 տարիները, երբ Հայաստանի իշխանությունները փաստացի հրաժարվեցին պահանջատիրությունից՝ կամա թե ակամա խոչընդոտ ստեղծելով Հայ դատի հանձնախմբերի աշխատանքի համար:

Այս տարի լրացավ Սևրի պայմանագրի կնքման 105-ամյակը՝ պետական մակարդակով, ինչպես սպասվում էր, ոչինչ չարվեց, քանի որ Հայաստանի իշխանությունն առաջ է քաշել «իրական» Հայաստանը՝ «պատմական» Հայաստանին հակադրելու սնանկ գաղափարը:

Դեռևս հինգ տարի առաջ, Սևրի պայմանագրին անդրադառնալով, ՀՀ ԱԺ նախագահը գրել էր. «...Եվ, երբ նոյեմբերի 22-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի վճռով մեզ թղթով 90 հազար քառ. կմ Արևմտյան Հայաստան էր «տրվում», մենք կորցնում էինք իրական Արևելյանը»[6] - իհարկե «իրական Արևելյան» Հայաստանն այսօր դարձել է 29.400 քառ. կմ «ինքնիշխան» ՀՀ, որի մասին Հայաստանի ոչ բարով իշխանությունը պատրաստ է մոռանալ ճիշտ այնպես, ինչպես հայկական Արցախի ու Արևմտյան Հայաստանի մասին մոռացավ, մինչդեռ ազգերին ու պետություններին պահպանող գործոններից մեկը նաև պահանջատիրության ոգին է ու ազգային նպատակը:

Որպես օրինակ, շատ է խոսվել հրեաների մասին, ովքեր 2000 տարի շարունակ իրենց սերունդներին դաստիարակեցին Երուսաղեմ գնալու և հրեական պետություն ստեղծելու ոգով ու հասան իրենց ազգային նպատակին. թե ինչպե՞ս, կամ ի՞նչ գնով, այլ քննարկման թեմա է:

Ազգային նպատակին հետամուտ լինելու առումով սովորելու բան ունենք նաև մեր թշնամիներից՝ 1299 թ. հիմնադրվեց Օսմանյան պետությունը, որն ի սկզբանե նպատակ դրեց նվաճելու Կոստանդնուպոլիսը. ավելի քան 150 տարի անց օսմանյան զորքերը մտան երբեմնի բյուզանդական մայրաքաղաք:

Նույն թուրքերը 19-րդ դարի երկրորդ կեսից շրջանառության մեջ դրեցին պանթյուրքիզմի (համաթուրանականության) գաղափարը, որից չհրաժարվեցին անգամ թուրքական պետության համար ամենաածանր տարիներին՝ 1918-1923 թթ., երբ թվում էր, թե թուրքական պետության փլուզումը կամ ամենաքիչը մասնատումն անխուսափելի է: Այնտեղ որոշեցին ոչ թե հանձնվել, այլ հակառակը՝ իրենց չպատկանող տարածքների համար ավելի ուժգին պայքար ծավալել: Արդյունքում՝ Թուրքիան ստացավ Հայաստանի Հանրապետության միջազգայնորեն ճանաչված տարածքների մեծ մասը՝ (Կարսի մարզ, Սուրմալուի գավառ և այլն) ինչպես նաև կայունության հիմքերի վրա դրեց իր արբանյակ պետությանը՝ Ադրբեջանին, և այսօր էլ Հայաստանից խլելով հայկական Արցախն ու ԱՄՆ-ի դիմակի տակ

ծպտված ստանալով Մեղրիի միջանցքը՝ հետամուտ է եղել պանթյուրքիզմի երկրորդ փուլի իրականացմանը, որի համար գործիք են դարձրել հայկական շահերն ու պահանջատիրությունն ուրացած Հայաստանի իշխանություններին, ինչը գերազանցում է առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի՝ տարիներ առաջ մեր պատմությանը տված «վտանգավոր հայդատականություն» որակման տրամաբանությանը: Ասել է թե, մեր պատմության շատ իրադարձություններ, այդ թվում նաև՝ Սևրի պայմանագիրը, պետք է հիշել զուտ որպես պատմական իրողություն, բայց դրա նկատմամբ որևէ ակնկալիք չունենալ:

Հայաստանի ներկայիս ոչ բարով իշխանությունները շատ ավելի հեռուն են գնացել, նրանք իրենց ասած «իրական» Հայաստանը դարձրել են Թուրքիայի ու Ադրբեջանի վասալը, հայ ժողովրդին էլ՝ «պարարտանյութ» պանթյուրքիզմի իրագործման համար: Մինչդեռ թշնամի Ադրբեջանը, արցախյան առաջին պատերազմում պարտվելուց հետո, մոտ 30 տարի հանդես եկավ պահանջատիրության դիրքերից ու պետական քաղաքականություն դարձրեց, երբեք իրեն չպատկանած՝ այլ 1921 թ. հուլիսին ապօրինաբար իրեն կցված Արցախը վերազավթելու նպատակը. ինչին հասավ Հայաստանի իշխանությունների համաձայնությամբ: Վերջիններս էլ Արցախը հանձնելուց հետո լծվել են ուրացման քաղաքականության, որից բխում էին Հայաստանի անկախության հոչակագիրը կասկածի տակ դնելու, այն անվանարկելու Փաշինյանի քայլերը, որոնց մասին արդեն խոսել ենք:

Իսկ Հայաստանի իշխանության ուրացման քաղաքականության ու պահանջատիրությունից հրաժարվելու մասին վկայում է դեռևս 2020 թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրի 100-ամյակին Նիկոլ Փաշինյանի հղած ուղերձը, որի վերջում նա նշում է. «Չնայած Սևրի պայմանագիրն այդպես էլ կյանքի չկոչվեց, այն շարունակում է գոյություն ունենալ որպես պատմական փաստ, որն արտացոլում է անկախ պետականության վերականգնման համար անցած մեր ուղին: Մեր պարտքն է հիշել այն, գիտակցել և պահպանել նրա խորհուրդը»[7]: Մինչդեռ Սևրի պայմանագիրը զուտ պատմական փաստ չէ՝ այդ փաստաթղթից բխող Վիլսոնյան իրավարար վճռով, որն ի դեպ հաստատվել է Ազգերի Լիգայի կողմից (ՄԱԿ-ին նախորդող կառույցը): Միջազգային հանրությունը ճանաչել է Հայաստանի իրավունքները Արևմտյան Հայաստանի որոշ հատվածի նկամամբ, Սևրի պայմանագրով Թուրքիայի օրինական կառավարությունը, փաստորեն, իր համաձայնությունն է տվել, որ Արևմտյան Հայաստանից որոշ հատվածներ միացվեն իր կողմից պաշտոնապես ճանաչված Հայաստանի Հանրապետությանը: Հայ ժողովրդի կրած կորուստների փոխհատուցման հարցերին անդրադարձ է արված հենց Սևրի պայմանագրով:

Այս կարևոր փաստաթղթի կնքումից ավելի քանի 100 տարի է անցել, և այն արժևորելու, մեր հետագա անելիքները հստակեցնելու ու Սևրի պայմանագիրը մեր պահանջատիրության հիմքում դնելու ժամանակն է: Ցանկացած պետական այրի համար անպտուղ գործ է Սևրի պայմանագիրն ուրացության տալու փորձերն ու ազգային նպատակների զոհաբերումը՝ հանուն թուրքական շահերի:

Ի վերջո, իշխանություններն անցողիկ են, իսկ ազգային նպատակներն ու, առավել ևս, հայ ժողովրդի պահանջատիրությունը մնայուն այնքան ժամանակ, քանի դեռ հայ ժողովուրդը չի հասել իր գերագույն նպատակին՝ Ազատ Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացմանը: ■

Ծանոթագրություններ

1. http://www.old.ysu.am/files/01A_Vagharshyan-1450343348-.pdf
2. https://www.azatutyun.am/a/hayastani-ankakhoutyan-hrchakagribovandakutyunn-ayn-masin-e-or-hh-n-chi-karogh-goyutyun-unenal-pashinyan/33201882.html
3. https://www.arfd.am/new/news/29001/
4. Նույնը:
5. https://www.arfd.am/new/news/29106/
6. Նույնը:
7. https://news.am/arm/news/596104.html

Օգտագործված գրականության ցանկ

1. http://www.old.ysu.am/files/01A_Vagharshyan-1450343348-.pdf
2. https://www.azatutyun.am/a/hayastani-ankakhoutyan-hrchakagribovandakutyunn-ayn-masin-e-or-hh-n-chi-karogh-goyutyun-unenal-pashinyan/33201882.html
3. https://www.arfd.am/new/news/29001/
4. https://www.arfd.am/new/news/29106/
5. https://news.am/arm/news/596104.html

Ֆրանս-թրքական լարուածութիւն

Կարէն Շահէ Ճինպաշեան
Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի գործավար

Սուրիայէն Արեւմտեան Ափրիկէ, Լիպիայէն Իսրայէլ, թրքական ու ֆրանսական կառավարութիւնները ահռելի կրաւորական-յարձակողական հակամարտութեան մէջ են: Այնքան որ հարուածները կը հասնին Անգարա ու Փարիզ…

Թուրք–Ֆրանսական դիւանագիտական յարաբերութիւնները, որոնք սկիզբ առած են ԺԶ (16) դարուն, կը սկսին վատթարանալ այս անցած հինգ տարիներուն ընթացքին: 2020 թուականին ֆրանսական կրթական համակարգը վերատեսութեան կ՚ենթարկուի: Վերլուծումիս առանցքին համար յատկապէս կարեւոր է այն նիւթը որ այսօր կ՚անուանուի «Օտար Լեզուի» դասաւանդում՝ զեղչելով անոր վաղուց մաս կազմող «մշակութային» մասը: Այս մէկը պաշտօնապէս վերջ կը դնէ օտար մշակութային դասաւանդութեան ֆրանսական վարժարաններէն ներս, եւ անուղղակի ճնշում կը բանեցնէ թուրք իմամներուն դէմ, որոնք ֆրանսական դպրոցներու մէջ կը դասաւանդէին թրքական մշակոյթ: Կարծես այսքանը բաւարար չէր, այսուհանդերձ իւրաքանչիւր օտար ուսուցիչ որ պիտի դասաւանդէ ֆրանսական վարժարանի յարկին տակ, պարտադիր պիտի ցուցաբերէ ֆրանսերէն լեզուի բարձր տիրապետում (B2 մակարդակ): Ան որ չափահաս տարիքին փորձած է սորվիլ ֆրանսերէն լեզուն լաւ կը հասկնայ թէ այս որքան կը նսեմացնէ թուրքիայէն ժամանող ուսուցչութեան թիւը ֆրանսական դպրոցական հաստատութիւններէն ներս:

Անգարա այս կը համարէ որպէս թրքական ազդեցութեան դէմ աշխատանք՝ որուն նպատակն է տկարացնել թուրք սփիւռքը Ֆրանսայի հողին վրայ, դժուարացնելով թրքական մշակոյթին դասաւանդումը, ան կ՚օժտէ ու կ՚արագացնէ անոնց ձուլումի հեռանկարը: Առ այդ՝ թրքական կառավարութիւնը կը դիմէ փոխադարձութեան ռազմավարութեան: 2021 թուականին, այն ինչ կը պարտադրուի իր իմամներուն Ֆրանսայի մէջ, ան փոխադարձաբար կը պարտադրէ իր երկրի ֆրանսական վարժարաններուն ուսուցչական կազմին:

Որպէսզի ֆրանսացի դաստիարակները կարողանան նորոգել իրենց կեցութեան արտօնագրերը, պէտք է բարձր մակարդակի տիրապետում ցուցաբերեն թրքական լեզուին:

Ան, պատրուակ բռնելով թէ ֆրանսական կառավարութիւնը չ՚արտօնէր թրքական վարժարաններու բացումը Ֆրանսայի մէջ, կը սառեցնէ Անգարայի «Շարլ տը Կոլ» եւ Պոլսոյ «Փիեռ Լոթի» վարժարաններու աշակերտներու արձանագրումները:

Ահաւասիկ թէ ինչպէս թրքական կառավարութիւնը առանց վախի՝ նոյնիսկ արհամարհանքով կը նախաձեռնէ դիւանագիտական համարձակ քայլեր, գտնուելով դէմ յանդիման մարտահրաւէրներու, ուր զանազան պետութիւններ պիտի գլուխ ծռէին, ու հնազանդէին եւրոպական իշխանութեան:

Կրթութիւնը որպէս դիւանագիտական զինամթերք

Վերջին երկու տասնամեակներուն ընթացքին, թրքական դիւանագիտական զինամթերքը դարձած է բազմազան ու տարբերուող՝ կերտելու համար աւելի լայնածաւալ դիւանագիտական ազդեցութիւն: Վերջինս ի գործ կը դնէ զանազան ռազմավարութիւններ՝ մշակութային, տնտեսական, կրօնական, լրատուական հարթակներուն, մարդասիրական, եւ կրթական մարտադաշտերուն վրայ, կառուցելու համար այսպէս կոչուած «մեղմ ոյժ» (soft power): Անգարան նաև կը դիմէ թրքական սփիւռքեան համաշխարհային կառոյցներու. օրինակի համար TIKA (Agence Turque de Cooperation & de la Coordination), YTB (Presidence des turcs a l'etranger & des communautes apparentées), Agence Anadolou (Agence de presse turque officielle), կրօնական «Տիյանէթ» կազմակերպութեան ցանցը, թուրք

մշակութային կազմակերպութեան (Institut Yunus Emre) եւ «Մաարիֆ» հիմնարկը: Յաճախ ներքնապէս շաղկապուած, այս կազմակերպութիւնները կը ծառայեն որպէս լծակ թրքական կառավարութեան ազդեցութեան զարգացման համաշխարհային գետնի վրայ: Իսկ իրենց գործելաոճն ու նպատակները յարափոփոխ են՝ ըստ երկրի յարմարութեան եւ կարելիութիւններուն:

Բազմաճակատ ռազմավարութեան գծով, Անգարան հսկայական կարեւորութիւն կու տայ կրթական հզօրացման, անցած 10 տարիներուն ընթացքին, ըլլայ այդ թրքական հողին վրայ, թէ օտար երկրներու մէջ՝ հիմնելով թրքական կրթական կեդրոններ: Եւ այս գծով, ան կը հետապնդէ երկու հիմնական նպատակ:

Սկսելու համար, ան կը ջանայ թրքական կրթական համակարգն ու հաստատութիւնները դարձնել համաշխարհային մակարդակի լաւագոյններէն: Որուն ի հետեւանք պիտի կարողանար աւելի մեծ թիւով օտար երիտասարդ ուսանողներ ներգրաւել իր ծրագիրներով, եւ վերջապէս հիւրընկալելով զանոնք իր հողերուն վրայ, տալու համար իրենց թրքամէտ բարձրագոյն ուսումը: Գործնական գետնի վրայ արդեն կը տեսնենք նախաձեռնութիւններ (Study in Türkiye), ինչպէս նաեւ նիւթական օժանդակութիւններ եւ հիմնադրամներու յատկացում, առաւել եւս համալսարանական նիւթերու յատուկ ձեւաւորում, որպէսզի աւելի հրապուրիչ դառնայ օտար աշակերտութեան: Կը նկատենք նաեւ թէ այս ռազմավարութիւնը ունի որպէս թիրախ միջին արեւելքի, ենդ-սահարեան ափրիկեան ու Ասիական երկիրները, որոնց ժողովուրդներու կենցաղն ու մշակոյթը բաւականին ներդաշնակ է թրքականին հետ: Ապա այս վկայալները երբ վերադառնան իրեն երկիրները, աւելի հաւանականութիւն կ'ունենան արժանանալու կառավարական կամ ազդեցիկ պաշտօններու:

Ասոր լաւագոյն փաստը կրնանք ներկայացնել Սուրիոյ ժամանակաւոր կառավարութեան արտաքին գործոց նախարար՝ Ասատ Ալ-Շահպանին, որ Պոլսոյ Սապահըտին Ձայմ համալսարանի շրջանաւարտ ու դոկտորական թեկնածու է…:

Հարկ է նշել նաեւ որ թրքական YÖK կազմակերպութիւնը կ'արձանագրէ օտար հպատակութեամբ աշակերտներու թիւի եօթն անգամ բազմապատկում նախորդ տասը տարիներու ընթացքին՝ ըստ իրենց հանրային էջին[1]: Ռազմավարութիւնը բաւականին արդիւնաբեր է…

Իսկ երկրորդ գծով, ան ի գործ կը դնէ սփիւռքեան կազմակերպութիւններու ընկերական ցանցերը:

Նպատակը՝ պատրաստել ու մարզել թրքական սփիւռքի ընտիր խաւ մը: Այս աշխատանքի մեծամասնութիւնը իրագործելի կը դառնայ երբ թրքական կառավարութիւնը 2016-ին կը լուծէ կիլենիստական շարժումը, եւ կ'իրացնէ անոր բոլոր կառոյցներն ու հաստատութիւնները:

Կազմակերպութիւնը կենթարկուի անուանափոխութեան, ու կը գործէ «Մաարիֆ» անուան տակ: Երբ թրքական կառավարութիւնը ձեռք կը ձգէ այս գանձին, կազմակերպութիւնը արդեն տարածուած էր 120 երկիրներու մէջ, 1990-ականներէն սկսեալ: Նոյնպէս յատուկ կեդրոնացում նշմարելով Ափրիկէի եւ Ասիոյ վրայ:[2]

Ֆրանսայի Մաարիֆ կազմակերպութիւնը՝ թրքական ազդեցութեան լծակ Ֆրանսայի մէջ

2020-էն սկսեալ երկու տարիներ շարունակ անոր նստավայր՝ Սդրասպուրկ, ապա մասնաճիւղ մը բանալով Լիոնի մէջ, Մաարիֆ կազմակերպութիւնը շրջանցելու համար ֆրանսական վերոնշեալ դժուարութիւնները, կը գործէ որպէս անձնական/անհատական կազմակերպութիւն: Ան կը ձգտի ծառայել ազգութեամբ թուրք աշակերտութեան՝ օժանդակելով անոնց ակադեմիական յաջողութեան. անհատական դասընթացներով, ինչպէս նաեւ ներկայանալով որպէս սփիւռքեան երիտասարդութեան հանդիպման վայր մը, մաքառելու եւ դէմ գնալու ձուլումի եւ օտարամոլութեան: Այս նպատակի հետապնդման ուղիով՝ կը կազմակերպուին զանազան մշակութային ձեռնարկներ՝ օրինակի համար գեղարուեստական երե-

կոներ, իսլամական ծոմապահութեան ժամանակի խրախճանքներ, լուսաբանական կլոր սեղաններ, դաստիարակչական սեմինարներ, եւ այլն: Օրինակի համար՝ Լիոնի մասնաճիւղը կազմակերպած էր դասախօսական շարան մը վերնագրուած «Իրար հետ ապրելու մշակոյթը՝ Օսմանական Կայսրութենէն Թուրքիոյ Հանրապետութիւն»: Թուրքիոյ դեսպանատան միջնորդութեամբ, այս ձեռնարկին կը ներկայանան զանազան թուրք մտաւորականներ, որոնք քաջածանօթ են իբրեւ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտողներ:

Միջոցառման ներկայ գտնուեցան ոչ միայն աշակերտական խաւը, այլեւ բարձրաստիճան անձնակազմ, ինչպէս նաեւ թուրք դեսպանը, եւ ուրեմն Մաարիֆ կազմակերպութիւնը կ'իրագործէ երկու զուգահեռ ու իրար ամբողջացնող գործունէութիւն. մէկ կողմէ՝ առիթ ու միջավայր մը կը ստեղծէ ազգութեամբ թուրք երիտասարդութեան սփիւռքի մէջ շաղուելու եւ կապեր հաստատելու իրար միջեւ (դիմադրելով ձուլումի մարտահրաւէրին), եւ միւս կողմէն անոնց մտքերուն մէջ ուղղակի ձեւով դրոշմելու թրքական կառավարութեան օգուտին եկած մտածելակերպ՝ ժխտողական ու ենթակայական գաղափարաբանութիւն:

Այս բոլորով հանդերձ, Անգարա չբաւարարուի, ու մշտական ու կանոնաւոր կերպով կը ջանայ բազմապատկել Ֆրանսայի մէջ թրքական վարժարաններու թիւը: Ոչ միայն թրքական, այլ կառավարուած թրքական կրթական նախարարութեան կողմէ: Այսպէս ան կը ցանկայ աւելի եւս հզօրացնել թրքական ազդեցութիւնը Եւրոպայի եւ յատկապէս Ֆրանսայի մէջ[3]:

Այժմ Ֆրանսան ու Թուրքիան դէմ յանդիման կը գտնուին չափազանց նուրբ ու անկիւնադարձային իրավիճակի մը մէջ: Ֆրանսան եթէ կարիքը զգայ ներկայութիւն ըլլալու ՆԱԹՕ-ի կարեւորագոյն ճակատին, պէտք է կատարէ զիջումներ, իսկ Թուրքիան եթէ կը ցանկայ յառաջ տանիլ իր եւրամիութեան մուտքի օրակարգը, պէտք է զիջի իր ակն-ընդ-ակն քաղաքականութենէն:

Վերոնշեալ ռազմավարութիւնները վաղուց է որ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իրագործած է սփիւռքի մէջ, հիմնելով զանազան հայ ազգային վարժարաններ, հայ երիտասարդութեան եւ մանուկներուն դասաւանդելով ու ուսուցելով ազգասիրութիւն, քաղաքական աշխուժութիւն եւ Հայ Դատ: Այսօր, մեր թշնամին ուշքի եկած է թէ սփիւռքի կառավարման բանալին կը գտնուի իր գերագոյն թշնամուն մօտ, կ'օժտուի անոր տարիներու փորձառութենէն: Ան, որպէսզի կարողանայ ներթափանցել Ֆրանսայի պէս պետութեան մը մէջ, իբրեւ կազմակերպուած ու միակամ սփիւռք, կը հիմնուի Հ.Յ.Դաշնակցութեան նախագիծին, որպէսզի միջազգային հարթակի վրայ այդ հուժկու պետութիւնը դադրի ըլլալէ Հայոց արդարութեան ամենաբարձր ձայներէն մէկը: ■

Հղումներ

1 Istatistik.yok.gov.tr
2 Shs.cairn.info/revue-politique-africaine-2015-3-page-23?lang=fr
3 https://www.sciencespo-grenoble.fr/blogs/la-strategie-dinfluence-de-la-turquie-en-europe-travers-sa-diaspora

Մոսկվայի վրա Բաքվի հարձակումը նախապատրաստել են տարիներ շարունակ. բրիտանական հատուկ ծառայությունները գործում են. «քնած գործակալներն» արթնացել են

Առաջին Ռուսական
https://tsargrad.tv/articles/ataku-baku-na-moskvu-gotovili-godami-britanskie-specsluzhby-v-dele-spjashhie-agenty-prosnulis_1306180

Ռուսաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների սրումը՝ կապված Եկատերինբուրգում կազմակերպված հանցավոր խմբավորման ջախջախման հետ, երրորդն է վերջին մի քանի ամիսների ընթացքում: Եվ ամեն անգամ Բաքուն ակնհայտորեն միտումնավոր ընդլայնում է հակամարտությունը՝ մոտեցնելով այն անվերադարձության կետին՝ Մոսկվայի հետ հարաբերությունների խզմանը: Իրադարձությունների նման զարգացումն ակնհայտորեն ունի Արևմուտքում պլանավորված սցենար: 2024-ի կեսերից հաճախակիացան բրիտանական հատուկ ծառայությունների և քաղաքական էլիտաների ներկայացուցիչների այցերը Բաքու: Այն բանից հետո, երբ տնտեսական պատժամիջոցներով և Կիևի ռեժիմի ձեռքով Ռուսաստանին ջախջախելու ծրագրերը չաշխատեցին, գործի անցան ադրբեջանական «քնած գործակալները»:

2020-ի հոկտեմբերին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության գաղտնի հետախուզական ծառայության, որն ավելի հայտնի է որպես MI-6, տնօրեն դարձավ Ռիչարդ Մուրը: Մեր երկրին վնասելու անգլիական փորձերի պատմության մեջ նոր էջ է սկսվել: Այն մասին, որ հետախուզության ղեկավար Մուրի գլխավոր խնդիրները լինելու են Ռուսաստանի և Չինաստանի դիմակայությունը, բրիտանական մամուլը գրեց բաց տեքստով: Ի դեպ, MI-6-ի նոր գլուխը գործի անցավ նախանձելի խանդավառությամբ. Ռիչարդ Մուրի նշանակումից անմիջապես հետո Լոնդոնի Արքայազն Ալբերտի 85 հասցեում գտնվող հայտնի առափնյա շենքում Վլադիմիր Զելենսկուն «պրոֆեսիոնալ զրույցի» հրավիրեցին: Հայտնի է, Զելենսկին Ուկրաինայում մեկ տարի առաջ իշխանության էր եկել Մոսկվայի հետ երկխոսություն կառուցելու կարգախոսներով: Իհարկե, մի տեսակ նոնսենս էր, որ անկախ (տեսականորեն) երկրի ղեկավարն անձամբ մեկներ մեկ այլ պետության հետախուզության ղեկավարի մոտ՝ ընդունելության: Բայց այստեղ գաղտնիք չկա: Հենց Բրիտանիան 2014-ին Կիևում տեղի ունեցած պետական հեղաշրջումից հետո դարձավ Նեզալեժնյայի «համակարգողը»: Ուստի Զելենսկին կանչվեց, և նրան բացատրեցին խաղի կանոնները: Եվ նա համաձայնեց. այդ ժամանակից ի վեր Ռուսաստանի ղեկավարի նկատմամբ Կիևի ռեժիմի ղեկավարի քաղաքականությունը սկսեց կտրուկ փոխվել:

2022-ին Ռուսաստանը ջախջախելու Լոնդոնի ծրագիրը հիմնված էր այն հաշվարկի վրա, որ հավաքական Արևմուտքի կողմից աջակցվող Կիևյան ռեժիմը հաղթանակ կտանի: Ապրիլին Բրիտանիայի այն ժամանակվա վարչապետ Բորիս Ջոնսոնը Զելենսկուն ստիպեց հրաժարվել արդեն ստորագրված Ստամբուլյան խաղաղության համաձայնագրից, իսկ նույն թվականի հուլիսին Մուրը հրապարակավ վստահություն հայտնեց, որ Ռուսաստանը ջախջախիչ ռազմավարական պարտություն կկրի: Ռուսները առաջ շարժվելով ուժասպառ կլինեն: Նրանք ստիպված կլինեն դադար տալ, և դա ուկրաինացիներին հնարավորություն կտա պատասխան հարված հասցնելու: Նրանք սկսում են ավելի ու ավելի որակյալ արևմտյան զենք ստանալ: Ուկրաինայի հակահարձակումն օգուտ կբերի ողջ Եվրոպային:

Ռիչարդ Մուր

«Մեր երախտագիտությունը հավերժ է»

Սակայն անգլիական քաղաքական իսթեբլիշմենթի հույսերը չիրականացան. վերախմբավորումից և մասնակի մոբիլիզացիայից հետո Ռուսաստանը նախապատրաստվեց 2023-ի ուկրաինական «վճռական հակահարձակմանը» և Կիևի ծրագրածը վերածեց աղետալի տեսարանի: Պետք է արժանին մատուցել բրիտանացի հետախույզներին. նրանք հասկացել են իրենց ծրագրերի ձախողումը «հակահարձակման»

մեկնարկից մի քանի շաբաթ անց: Եվ այդ ժամանակ նրանց ջանքերի վեկտորն ուղղվեց այլ ուղղությամբ՝ դեպի հասարակության և պետության ներքին պառակտում: Եվգենի Պրիգոժինի հայտնի «Արդարության երթը» (2023-ի հունիսի 24) Mi-6-ի ղեկավարների մոտ հույս էր առաջացրել՝ Ռուսաստանի ներսում տիրող իրավիճակը նպաստում է բնակչության դժգոհության բորբոքմանը և երկիրը ներսից քանդելու 1917-ի սցենարի կրկնության փորձերին: Եվ ահա հուլիսի 21-ին Ռիչարդ Մուրը հրապարակավ դիմեց մեր երկրի քաղաքացիներին, ովքեր այս կամ այն պատճառով դժգոհ էին իշխանությունների գործողություններից՝ կոչ անելով հայրենիքի դավաճանության և անգլիական հետախուզության հետ համագործակցության. «Ես Ռուսաստանի քաղաքացիներին հրավիրում եմ համագործակցություն սկսելու. մեր դուռը միշտ բաց է: Մենք խոհեմությամբ կուսումնասիրենք նրանց օգնելու ռաջարկները: Դրանց գաղտնիությունը կապահովվի, և միասին մենք ամեն ինչ կանենք արյունահեղությանը վերջ տալու համար: Մեր սկզբունքն այն է, որ նվիրվածությունը գործակալներին ժամկետ չունի, և մեր երախտագիտությունը հավերժ է»:

Անգլիան և Ադրբեջանը՝ վաղեմի պատմություն

Իհարկե, հանրային տիրույթում տեղեկություններ չկան, թե որքան դավաճաններ են արձագանքել Մուրի կոչին: Այնուամենայնիվ, Ռուսաստանում հասարակական պառակտում և ապստամբություն տեղի չունեցան, և մի քանի ամիս անց Լոնդոնում հասկացան, որ այդ խաղադրույքը նույնպես չի գործել: Ժամանակն է, որ բրիտանական հատուկ ծառայություններն ակտիվացնեն հաջորդ՝ արդեն երրորդ տարբերակը՝ էթնիկ տարբերակը: Իսկ ավելի ճիշտ՝ կովկասյան:

Այն, որ MI-6-ում որոշել են հարձակվել Ռուսաստանի վրա հենց կովկասյան ուղղությամբ, զարմանալի չէ: Մինչ «գլխավոր հետախույզ» նշանակվելը Ռիչարդ Մուրը Թուրքիայում դեսպան էր՝ հայտնի լինելով թուրքերենի գերազանց իմացությամբ: Հենց նրա միջոցով էր Մեծ Բրիտանիան հարաբերություններ կառուցում Էրդողանի և տարածաշրջանում նրա գլխավոր դաշնակցի՝ Ադրբեջանի հետ:

Անգլիական արտաքին քաղաքականության և հատուկ ծառայությունների համար ադրբեջանական ուղղությունն ավանդական է: Քաղաքագետ Յուրի Սվետովը մեզ հետ զրույցում հիշեցրել է. «Բրիտանական ազդեցությունը Կովկասում ընդհանրապես և Ադրբեջանում, մասնավորապես, շատ վաղեմի պատմություն է: Դեռևս 20-րդ դարի սկզբին անգլիական դրամագլուխն ակտիվորեն ներթափանցեց տեղական նավթահանքեր՝ փորձելով դուրս մղել ռուս նավթարդյունաբերողներին: Բրիտանացիները փորձեցին խաղալ իրենց պարտիան այստեղ և՛ քաղաքացիական պատերազմի ժամանակ, և՛ նույնիսկ ավելին՝ Խորհրդային Միության փլուզումից հետո»:

2024-ի աշնանը իրադարձությունները սրընթաց զարգացան: Նախ, ըստ ամենայնի, իրավիճակը գնահատելու և հակառուսական սխեմային մասնակցելու համար տեղական իշխանությունների հետ նախնական համաձայնության հասնելու համար Կովկաս էր այցելել ԱՄՆ պաշտպանության նախարարության հետախուզական վարչության եվրոպական-եվրասիական տարածաշրջանային կենտրոնի ղեկավար Պատրիկ Պրայորը: Սեպտեմբերին նա ժամանել է Բաքու, իսկ հոկտեմբերի սկզբին այցելել է Երևան:

Աչքից շեղելու համար՝ մտահոգություն բնապահպանության համար

Հավանաբար, առնվազն Ադրբեջանում Պրայորն Արևմուտքի համար դրական պատասխան է ստացել, քանի որ հետո խաղի մեջ են մտել արդեն բրիտանացիները:

Յուրի Սվետովը նշում է, որ տվյալ դեպքում Վաշինգտոնն ու Լոնդոնն ավելի շատ դաշնակիցներ են, քան մրցակիցներ. Արևմտյան տերությունների ազդեցության գոտիները Կովկասում քիչ թե շատ բաժանված են: Ամերիկացիների համար այստեղ հենակետային բազան Հայաստանն է՝ ազդեցության այնպիսի գործիքի շնորհիվ, ինչպիսին ԱՄՆ-ում հսկայական հայկական սփյուռքն է:

Ամերիկացի էմիսարից մեկ շաբաթ անց ոչ պաշտոնական այցով Բաքու է ժամանել ինքը՝ Ռիչարդ Մուրը՝ իբր տեղի համալսարանում դասախոսություն կարդալու համար: Դասախոսությունը տեղի է ունեցել, իսկ ահա որտեղ է եղել MI-6-ի տնօրենը Բաքվում գտնվելու ընթացքում և ում հետ է հանդիպել, զարմանալիորեն դուրս է մնացել ԶԼՄ-ների տեսադաշտից: Ում հետ էլ բանակցություններ վարած լինեին (իսկ ակնհայտ է. հաշվի առնելով բրիտանացի հյուրի կարգավիճակը՝ նրանք կարող էին գործել միայն ամենաբարձր մակարդակով), դրանք հաջող են անցել, քանի որ նոյեմբերի 11-ին Բաքու էր ժամանել արդեն Մեծ Բրիտանիայի վարչապետ Սթարմերը: Այցի համար բրիտանական կառավարության ղեկավարը հարմար առիթ է մտածել՝ իբր շատ է ցանկացել մասնակցել կլիմայի փոփոխության և մթնոլորտ ածխաթթու գազի արտանետումների կրճատման հարցերին նվիրված միջազգային խորհրդաժողովին: Այնուամենայնիվ, նույնիսկ անգլիական մամուլի համար ակնհայտ էր՝ դա քողարկում էր կուլիսային քաղաքական բանակցությունների համար: Ոչ ոք իրականում լրջորեն չի քննարկել բնապահպանական օրակարգը. հենց համաժողովի բացման ժամանակ հայտարարվեց, որ գազն ու նավթը «Աստծո նվերն են» յուրաքանչյուր երկրի համար: Այսպիսով, ի՞նչ խոսք կա այնտեղ ածխաթթու գազի արտանետումների կրճատման մասին... Արևելագետ Դմիտրի Բրիջեի կարծիքով. «Արևմուտքը միշտ դիտարկել է Հարավային Կովկասը որպես եվրասիական ինտեգրման խզման կետ, որը կապում է Ռուսաստանը, Իրանը, Թուրքիան, Չինաստանը: Ադրբեջանը այս ճարտարապետության մեջ առանցքային դեր է խաղում որպես երկիր, որն ունի յուրահատուկ աշ-

խարհագրական դիրք, էներգետիկ ռեսուրսներ և էթնոմշակութային ազդեցություն Իրանի հյուսիսում, Հարավային Դաղստանում և թուրքական տարածքների մի մասում: Մեծ Բրիտանիան ավանդաբար գործում է «բաժանիր և տիրիր» ապացուցված ռազմավարության համաձայն, լարվածություն է ստեղծում Մոսկվայի և Բաքվի միջև՝ միաժամանակ թեժացնելով թյուրքական, պարսկական և անդրկովկասյան գործոնները:

Այսպիսի ժամանակակից «ողբերգություն»

Կլիմայի փոփոխության ֆորումը ճիշտ ժամանակին էր, որպեսզի միևնույն ժամանակ Բաքվում «պատահաբար» հայտնվի նաև Էրդողանը, ում հետ Սթարմերը նույնպես հանդիպել է, ընդ որում՝ փակ ռեժիմով՝ մամուլին չեն հրավիրել, լրագրողների համար ոչ մի հայտարարություն չի եղել:

Եվ այսպես, Մեծ Բրիտանիայի վարչապետն ու Թուրքիայի նախագահը հանդիպում են Ադրբեջանի մայրաքաղաքում, և այդ համադրության մեջ Ռուսաստանի սպառնալիքը տեսնելու համար պետք չէ լինել ոչ դավադրության տեսաբան, ոչ էլ հետախույզ: Առավելևս, որ հետագա իրադարձությունները հաստատեցին Լոնդոնի, Բաքվի և հաստատ Անկարայի համատեղ հակառուսական խաղի վերաբերյալ կասկածների և մտահոգությունների հիմնավորվածությունը:

2024-ի դեկտեմբերի 25-26-ը Սանկտ Պետերբուրգում նշանակվել էր ԱՊՀ երկրների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովը: Պուտինը հյուրընկալ տանտիրոջ կարգավիճակով նշել է ԽՍՀՄ նախկին հանրապետությունների միջև համագործակցության հաջողությունները և ազդարարել փոխշահավետ համագործակցության ընդլայնումը ամենատարբեր ոլորտներում: Ինչ վերաբերում է անմիջականորեն Մոսկվայի և Բաքվի հարաբերություններին, ապա համաժողովի շրջանակներում խոսվեց այն մասին, որ նախատեսվում է երկկողմ ռազմավարական գործընկերության հետագա ընդլայնում: Սակայն գագաթնաժողովի բացման ժամանակ Պուտինն արձանագրել է հրավիրված երկու հյուրերի բացակայությունը: Եվ եթե Հայաստանի վարչապետը նախապես ակտիվացրել էր առողջական անբավարար վիճակի մասին արդարացումը, ապա Ադրբեջանի նախագահն արդեն հասցրել է ժամանել Պետերբուրգ, բայց շտապ վերադարձել է հայրենիք:

Ի՞նչ պատահեց

Իսկ տեղի է ունեցել ադրբեջանական Azerbaijan Airlines ավիաընկերության ինքնաթիռի աղետը, որն իրականացնում էր Բաքու-Գրոզնի չվերթը: Ղազախստանի Ակտաու քաղաքի օդանավակայանում ինքնաթիռ է կործանվել: Ինքնաթիռում գտնվող 67 մարդուց զոհվել է 39-ը: Աղետի պատճառների մասին վերջնական եզրակացությունները կհրապարակվեն միայն մի քանի ամիս անց, սակայն Ադրբեջանի իշխանություններն անմիջապես սկանդալ են սարքել՝ ողբերգության մեղավոր հայտարարելով Ռուսաստանին: Ըստ նրանց, իբր թե մեր զինված ուժերի հրթիռը, կամ անօդաչու թռչող սարքը խոցել է քաղաքացիական ինքնաթիռ:

Ճիշտ է, աղետի պատճառների մասին 2025-ի փետրվարին հրապարակված նախնական զեկույցից հետո հակառուսական պաթոսը և Մոսկվայի հանդեպ ապաշխարության պահանջը Բաքվում ստիպված եղան նվազեցնել: Պարզվել է՝ ինքնաթիռի անսարքությունները գրանցվել են նույնիսկ ավելի վաղ, և Ակտաուում վայրէջք կատարելու որոշումը, չնայած ռուս դիսպետչերների առաջարկներին, ինքնաթիռ ուղարկել Մինվոդի կամ Մախաչկալա, ընդունել է «ճակատագրական» ինքնաթիռի անձնակազմը: Բացի այդ, աղետի իրական պատճառների մասին հստակ պատասխան այսօր էլ պաշտոնապես չկա. հետաքննության արդյունքներն այդպես էլ չեն հրապարակվել:

Այնուամենայնիվ, ռուսատյաց հիստերիայի մեջ Ադրբեջանի սրընթաց գլորվելու գործընթացի սկիզբը դրվեց: Պաշտոնական Բաքուն մի շարք հարձակումներ գործեց Ռուսաստանի դեմ, հետո հայտնի դարձավ, որ Ադրբեջանը ևս մեկ միլիոն դոլարի տրանշ է հատկացրել Ուկրաինային...

Ռուսաստանի հետ վիճելու 5 միլիարդ պատճառ

Հետագայում, չնայած վիճելի պահերը կարգավորելու և հանգիստ երկխոսության վերադառնալու Ռուսաստանի փորձերին՝ Բաքվում բոլոր ջանքերը գործադրեցին, որպեսզի կառուցողական համագործակցության վերսկսումն անհնարին դառնա: Եվ այդ ջանքերի Բրիտանական հետքը գնալով ավելի ակնհայտ է դառնում:

Այսպես, ընթացիկ տարվա մարտին Լոնդոն է մեկնել Ադրբեջանի նախագահի աշխատակազմի արտաքին քաղաքականության հարցերով բաժնի ղեկավար Հիքմեթ Հաջիևը: Նա հանդիպել է ոչ միայն Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի և անդրծովյան տարածքների հարցերով նախարար Սթիվեն Դոուտինի հետ, ինչը միանգամայն տրամաբանական է, այլև ազգային անվտանգության հարցերով խորհրդական Ջոնաթան Փաուելի և Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության պետական նախարար և ցմահ Պեր՝ Վերնոն Կոկերի հետ, ինչն արդեն այնքան էլ բնորոշ չէ. ուժային և հետախուզական բլոկի ներկայացուցիչների հետ դիվանագետները սովորաբար չեն խորհրդակցում…

Լոնդոնի և Բաքվի համագործակցության հաջորդ սիմպտոմատիկ դրվագը ապրիլի 30-ին կայացած Ադրբեջան-Մեծ Բրիտանիա միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստն էր: Այդ աննկատելի իրադարձության արդյունքում Լոնդոնը որո-

շում է կայացրել Բաքվին 5 մլրդ ֆունտ ստեռլինգ «փոխառել» «տնտեսության, տրանսպորտի և ենթակառուցվածքների ոլորտներում» տարբեր նախագծերի համար: Այլ կերպ ասած՝ այն ամենին, ինչին Ադրբեջանը հարկ կհամարի, առանց կոնկրետ նպատակի հետ կապակցման: Այն բանից հետո, երբ անդրկովկասյան հանրապետության իշխանությունները տեղեկացան բրիտանական միլիարդների հատկացման մասին, դրան հաջորդեց վիրավորական դեմարշ, որով Ալիևը հրաժարվեց մասնակցել մայիսի 9-ին Մոսկվայում կայանալիք Հաղթանակի 80-ամյակին նվիրված շքերթին: Իսկ հետո՝ տեղեկատվական առիթով ակնհայտորեն ոչ ադեկվատ Բաքվի սուր արձագանքը եղավ Եկատերինբուրգում ադրբեջանական սփյուռքի ներկայացուցիչների (Ռուսաստանի քաղաքացիներ, ի դեպ...) «իրավունքների ոտնահարմանը»: Արձագանք, որը երկու երկրների հարաբերությունները կանգնեցրեց խզման եզրին և կարծես նախապես ծրագրված վարքագիծ լիներ, որը միայն ֆորմալ պատրվակի կարիք ուներ:

Վերլուծելով Լոնդոնի հրահրած և Բաքվի ձեռքով խաղարկվող ճգնաժամի պատճառները՝ փորձագետներն առանձնացնում են տարբեր նրբություններ, բայց համամիտ են հիմնարար գնահատականի հետ՝ Բրիտանիան Ադրբեջանին օգտագործում է Ռուսաստանին հարվածելու համար:

Առաջին Ռուսականի՝ «Первого русского» համար բացառիկ մեկնաբանության մեջ «Մերձավոր Արևելք-Կովկաս» հետազոտական կենտրոնի տնօրեն Ստանիսլավ Տարասովը ենթադրել է. «Ադրբեջանի ներկայիս «խաղի» պատճառը արտաքին ուժի գործոնն է, առաջին հերթին՝ բրիտանական: Կարծում եմ՝ Բաքվին ինչ-որ բան են խոստացել: Հիմնական վարկածներից մեկն այն է, որ Իրանի կրիտիկական վիճակի խորապատկերին Ադրբեջանին կարող էին ակնարկել, որ այդ երկրի ապամոնտաժման դեպքում նա կստանա այն տարածքները, որտեղ պատմականորեն գերակշռում է ադրբեջանական բնակչությունը:

Ինքը՝ փորձագետը, ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ բրիտանացիների համար սկզբունքային նշանակություն ունի Ռուսաստանի ռազմավարական հաղորդակցությունների խաթարումը, որոնք անցնում են Ադրբեջանի տարածքով՝ ուղղվելով դեպի Իրան, ապա հարավ և արևելք:

Լոնդոնն աշխատում է ինչպես իր, այնպես էլ հավաքական Արևմուտքի շահերի համար. Անդրկովկասից հետո հրկիզելու է Միջին Ասիան, որը կարևոր նշանակություն ունի ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Չինաստանի համար:

Մասնագետները նշում են՝ Բաքուն խաղարկում է սեփական խաղաքարտը, և Մոսկվան պետք է գործի՝ հաշվի առնելով Ադրբեջանի գործոնը՝ որպես առանձին խաղացողի, թեկուզև արևմտյան համակարգողի մատուցմամբ գործող:

Քաղաքագետ Գենադի Պոդլեսնին կարծում է, որ ադրբեջանական գործողությունների համար վճռորոշ նշանակություն ունեն հանրապետության ղեկավարության քաղաքական և ֆինանսական շահերը: Այսինքն՝ Բաքվին պարզապես խամաճիկ նկատելը Լոնդոնի համար պարզեցում է, որը հղի է սխալներով: Միևնույն ժամանակ, Յուրի Սվետովը նշում է, որ սկզբունքային նշանակություն կունենա Ռուսաստանի արձագանքի համաչափությունը. պարզապես «վայրահաչելով սպառնալը, ինչպես կատաղած երեխան», ակնհայտորեն բավարար չի լինի:

Սակայն հետխորհրդային տարածքում ռուսատյացության հերթական սրման բուն պատճառը հենց հավաքական Արևմուտքի նպատակաուղղված գործողություններն են: Գործողություններ, որոնց նպատակը հակամարտության մեջ ներգրավված կողմերի հաշվին «քաղաքակիրթ աշխարհի» էլիտաների համար առավելագույն շահույթ ստանալն է: Դմիտրի Բրիջեն ամփոփում է. «Այսօր Արևմուտքի գլխավոր նպատակն է ճնշում գործադրել Ռուսաստանի վրա՝ օգտագործելով Ադրբեջանը որպես ճնշման գործիք: Արևմուտքը պատրանք է ստեղծում, թե Բաքուն ի վիճակի է դիմակայել Մոսկվային՝ նրան դրդելով ռիսկային քայլերի: Բայց Կովկասում ցանկացած հակամարտություն կհանգեցնի հզոր պայթյունի ամբողջ տարածաշրջանում՝ ապակայունացնելով ոչ միայն Ռուսաստանը, այլև հենց Ադրբեջանը և ողջ Եվրասիան:

Ինչ հետևություն դրանից

ԽՍՀՄ փլուզումից հետո լիբերալների իշխանության տակ հայտնված Ռուսաստանը հետխորհրդային տարածքը կամավոր հանձնեց Արևմուտքին, և այժմ մենք քաղում ենք այդ աղետալի որոշման պտուղները: Պուտինի իշխանության գալը թույլ տվեց շարժում սկսել ԱՊՀ երկրների հետ փոխշահավետ հարաբերություններ կառուցելու ուղղությամբ, սակայն, վերջին իրադարձությունները ցույց են տալիս՝ այդ քայլերը շատ առումներով ուշացած էին: Ռուսատյաց գաղափարախոսության հողի վրա մեծացած և արևմտյան հատուկ ծառայությունների հետ կապված ազգային «էլիտաները», առայժմ քողարկվելով համագործակցության մասին հայտարարություններով, իրականում իրենց երկրներն առաջնորդել են դեպի այն նպատակը, որն իրենց համար պատրաստել էր Արևմուտքը՝ դիմակայությունը Ռուսաստանին:

Նրանք, ըստ էության, դարձել են գլոբալիստ լիբերալների «քնած գործակալները», որոնց համար մեր երկիրը գլխավոր և հաստատ անհաշտ թշնամիներից մեկն է: Այժմ Ադրբեջանի գործողությունների օրինակով մենք տեսնում ենք այնպիսի «քնած գործակալի» ակտիվացում, որին դեռ երեկ մենք համարում էինք (և շարունակում ենք անվանել մինչև հիմա) ռազմավարական գործընկեր: ■

Թարգմանությունը՝ Գայանե Մանուկյանի

Պատասխանատվության բացակայության ավերիչ հետևանքները

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Կարող է մի պահ զարմանալի թվալ, բայց շատ մարդիկ նույնիսկ չեն ընկալում «պատասխանատվություն» բառի բուն իմաստը: Հասարակությունը բավական խորամանկ է, նա կարողացել է «ավերել» «պատասխանատվություն» գեղեցիկ բառը՝ հաղորդելով նրան խեղված նշանակություն: Սովորաբար բառարաններում «պատասխանատվություն» բառը մեկնաբանվում է որպես պարտքի զգացում, կատարված գործողություն այնպիսի մեխանիկական եղանակով, որը մարդուց ակնկալում են ուսուցիչները, ծնողները, քաղաքական գործիչները, հասարակությունը և այլն: Մեր պատասխանատվությունն այն է, որ կատարենք մեզնից մեծերի և հասարակության ավանդած թելադրանքները:

Եթե դուք գործում եք ըստ այդ հրամանների, նշանակում է ներդաշնակ եք այս ու այն վարդապետությանը, նորմերին և առկա հանգամանքներին: Պարզ է նաև, որ մարդիկ, այս դեպքում, հիմնականում վախենում են անկեղծ ու ինքնաբուխ լինելուց: «Պատասխանատվություն» բառը տրոհելու դեպքում ստանում ենք երկու բառ՝ «պատասխանատվության ստանձնում» և «տվություն», այսինքն՝ «արձագանքում»: Արձագանք նշանակում է, որ մեր ուշադրությունն այստեղ է, ներկայում, այս պահի մեջ: Սա այն դեպքն է, երբ մենք հետևում ենք ոչ թե այս կամ այն ճշմարտությանը, բարոյական և իրավական նորմատիվ պահանջներին և նույնիսկ սուրբ գրքերի հորդորներին, այլ մեր ներքին ձայնին, և մեր գործողությունը համահունչ ենք դարձնում կյանքի իրական պարտադրանքներին: Կրկնում ենք՝ իրական: Սա արդեն պատասխանատվության ստանձնումն է և խոհեմորեն արձագանքելու կարողության: Ըստ ժամանակակից քաղաքագիտական մտքի՝ «ազատություն» և «պատասխանատվություն» հասկացությունները դրվում էին նույն հարթության վրա, սակայն իրականում ազատությունը պատասխանատվության ածանցյալն է: Քանի դեռ անհատը, հասարակությունը, ազգը չեն ստանձնել իրենց վիճակի փրկության, փոփոխության և բարելավման պատասխանատվությունը, նրանք ազատություն ձեռք չեն բերի. դա անհնար է: Դրա ականատեսն ենք մենք նաև այսօր: Իսկ պատասխանատվությունը ծնվում է այն պահից, երբ դրվում է նպատակ՝ կոնկրետ, հասկանալի և իրագործելի: Նպատակի հանգամանքն ամենակարևորն է, քանի որ երբ այն չկա, անհատը և ողջ հասարակությունը սկսում են խարխափել անորոշությունների և կեղծիքների լաբիրինթոսում:

Տեսեք, մեր ժողովուրդը, հասարակությունը և անհատը խորությամբ չգնահատեցին իրավիճակի ողջ



լրջությունը, ազգի և պետության գլխին կախված վտանգները, չդրվեց դրածոների կառավարությանը հեռացնելու նպատակ, դրանից սկիզբ առան մեկը մյուսից աղետալի իրողություններ և կեղծիքներ: Շփումներում հաճախ մարդիկ կաղապարված մտքերի տարափ տեղալուց հետո կանգ են առնում, զգում ես, որ նրանք դատարկության մեջ են, և դա նրանց խենթացնում է: Ասես, մարդն արմատներից պոկված է: Սա նույնն է, եթե ասենք մարդը հանգի նրան, որ Աստված չկա: Նպատակի կորուստը արմատից զրկվելու չափ վտանգավոր բան է: Պատահական չէ, որ մարդիկ այդքան հեշտ հայտնվում են ստի և փուչ պատրանքների գերության մեջ: Իրականում՝ սուտը սկզբում է միայն քաղցր, իսկ ճշմարտությունը՝ դառը: Հիշենք նիկոլական «թավշյա հեղափոխություն» ասված այլանդակությունը, դա նույն այդ մխիթարություն բերող քաղցր սուտն էր, որը հետո դարձավ պատուհաս ողջ ժողովրդի համար: Սովորաբար, երեխաների համար նախատեսված դեղահաբերի վերին շերտը պատված է լինում քաղցրով. դա մանկանը տալիս են իբրև կոնֆետ: Նա սկզբում հաճույքով վայելում է քաղցր համը, բայց ահա մի պահից վրա է

հասնում դեղի դառնությունը, և նա այլևս անզոր է լինում չընդունել, այն ներծծվում է երեխայի օրգանիզմում: Մեզ հետ նույն ձևով վարվեցին անգլոթուրքական և մյուս ուժերը: Իսկ քաղցրահամ դեղահաբի դերում հայտնի ստահակն էր: Միայն ու միայն ծախված ստահակը կարող էր գնալ ԱՄՆ, թուրքի հետ նստել բանակցությունների, ոչինչ չստանալ դրանցից, բայց գալ Հայաստան և շնորհավորել ժողովրդին «փայլուն արդյունքների» համար: Նա նաև հասավ նրան, որ իր տերերի աջակցությամբ «խաղաղություն» բառին հաղորդեց մոգական իմաստ, իսկ ո՞վ չգիտի, որ բազմիցս կրկնվելու դեպքում սուտը ընկալվում է որպես ճշմարտություն կամ ճշմարտանման մի բանի: Կրկնվենք, դա մխիթարություն բերելու ստի երանելի հատկությունն է: Ընտրական գործընթացներից հայտնի խոսք կա՝ «**Մինչև ուսերից դեն կնետես պատասխանատվությունը, գտիր մեկին, ում ուսերին կդնես այն...**»: Մեր երկրի գլխավոր դուրսպրծուկը և նրան շրջապատողները իրենց ձախողած գործերը այլոց վրա բարդելու անգերազանցելի վարպետներ են: Պատասխանատվության զգացումը գիտակցության և վարքագծի փունջ է, նրանում մեկտեղված են մի քանի որակներ, առանց որոնց այս զգացումը թույլ, ոչինչ չնշանակող բան է: Եթե մեր միջավայրում մարդիկ մերկացնում, քննադատում կամ անիծում են Նիկոլին, բնավ չի նշանակում, որ իրենք դարձել են պատասխանատու էակներ: Բոլորովին: Կարելի է անպատասխանատու կերպով թե՛ խնկարկել ու փառաբանել մեկին, և թե՛ անիծել: Արարքի խորքը, արմատը նույնն է, թիրախն է տարբեր: Մտաբերենք, թե ինչ վարքագիծ են դրսևորում ծնողները երեխաների դաստիարակության գործում: Բոլոր ճոռոմախոս խրատները առ ոչինչ են նրանց իրական վարքի համեմատ: Պատմում են, թե ինչպես մի պրոֆեսոր մտել է համալսարանի լսարան և ասել՝ «Սիրելի ուսանողներ, վեր պարզեք ձեր ցուցամատը, - բայց ինքը բարձրացրել է բթամատը, հետո թե՝ ավելի բարձր, ավելի բարձր....»: Եվ ուսանողները առանց գիտակցելու հրահանգը վեր են պարզել բթամատերը: Այսինքն՝ ընդօրինակել են պրոֆեսորի շարժումը: Այս փոքրիկ օրինակը ցույց է տալիս, թե ինչ է նշանակում «ասել, և ինչ անել»: Մի կրթական գործի մարդ, որը Ռուսաստանում ամենուրեք մերժվում էր իր նորարարական գաղափարների համար, արել է մի այսպիսի գիտափորձ: Նա ստեղծել է հատուկ դպրոց և բուհերի ընդունելության քննություններից հետո այնտեղ է հավաքել Մոսկվայի կոնսերվատորիայից և մյուս երաժշտական կրթօջախներից կտրված դիմորդների՝ թվով երեք տասնյակից ավելի ուսանողների: Ուղիղ երկու տարի նա չի թույլատրել, որ ուսանողները մոտենան երաժշտական գործիքների: Նրան պետք էր, որ ուսանողները նախ դառնան կազմակերպված և պատասխանատու մարդիկ: Դրան էր ուղղված նրա մեթոդիկան: Երկու տարի անց, երբ ուսանողները, իրոք, դարձել էին կազմակերպված և պատասխանատու մարդիկ, նա թույլ է տվել, որ իրենց ձեռքը վերցնեն երաժշտական գործիքները: Մի քանի տարի անց այս «ապաշնորհ, անտաղանդ», մյուս բուհերում մրցույթները չանցած սաները դարձել են փայլուն երաժիշտներ, տարբեր մրցույթների դափնեկիրներ և այլն: Ինչի՞ մասին է սա վկայում. երբ մարդը կազմակերպված է և պատասխանատու, նա ի զորու է հասնելու լուրջ հաջողությունների ցանկացած բնագավառում: Ահա սա էր ուզել ապացուցել կրթական գործի մասնագետը: Եկեք իրար չխաբենք, ի՞նչ նկարագիր ունեն մեր դպրոցների մանկավարժներից շատերը և երեխաների ծնողները: Տեսել ենք ու համոզվել, որ ճիշտ կլիներ նրանց հարյուրավոր կիլոմետրերով հեռու պահել նոր սերնդից, քանի որ եթե նրանք այդքան հիմնավոր զուրկ են պատասխանատվության զգացումից, ապա ինչպես կարող են երեխա դաստիարակել: Եվ այսքանից հետո մենք դեռ ուզում ենք, որ մեր հայրենակիցը պատասխանատու վա՞րք ցուցաբերի իր պետության և հայրենիքի ներկայի ու վաղվա օրվա հանդեպ: Այդպես չի լինում, եթե կրողը չես այդ որակների: Նույնիսկ ամենափոքրիկ կենցաղային դրվագը կարող է լույս սփռել շատ բաների վրա: Օրինակ, ինչպե՞ս են մարդիկ Երևանում պայմանավորվում հանդիպել՝ «Վաղը կտեսնվենք հինգի մոտերքը, Օպերայի կողքերքը...»: Հաջորդ օրը նրանցից մեկը կգա ժամուկես ուշացումով, նախ՝ ներողություն չի խնդրի, իսկ դիմացինն էլ չի ասի՝ «Լսիր, ախր, ահագին ժամանակ գողացար իմ կյանքից»: Այսքան դեստրուկտիվ և իռացիոնալ է մեր ժամանակակից մարդը և իրականությունը: Հիմա ինչո՞ւ ենք զարմանում, որ մարդը բացարձակ պատասխանատվություն չի զգում երկրի վիճակի հանդեպ և չի ձգտում օր

առաջ վոնդել կյանքն ապականող դրածոյին և նրա դուրսպրծուկներին: Եթե ծառը չէտես, չջրես ու չխնամես, ինչպե՞ս կարող ես լավ միրգ ունենալ աշնանը: Այդպես չի լինում: Ուշագրավ է, որ կայացած համակարգերում նոր ձևավորվող մարդուն պատասխանատու դարձնելու խնդրում ճշտված և փորձարկված խելացի մոտեցումներ կան, և դրանք անվերջ կատարելագործվում են կյանքի փոփոխություններին համահունչ: Նայեք, թե ինչպիսի դպրոց ունեն գերմանացիները, չինացիները և էլի շատ ազգեր: Ինչքան լրջորեն են վերաբերում նոր ձևավորվող մարդուն հղկելու և կատարելագործելու գործին: Օրինակ, չինացի երեխաներին դպրոցներում զանազան տեղեկատվական կոյտերով ծարաբեռնելու փոխարեն սովորեցնում են նախ չստել, լինել կարգապահ և պատասխանատու: Եթե քպականները իրենց շեֆի հետ նորմալ կրթություն ստանային, մենք այս օրին կլինե՞ինք, այսքան ցինիկ ստախոսություն չէր լինի: Եթե իհարկե մի պահ մոռանանք նրանց սորոսական ծագումը: Պատասխանատվությունը և ճշտապահությունն այն որակներն են, որոնք ամենաշատն են խրախուսվում այնտեղ: Ցավալի է, բայց փաստ. հայ մարդը, (չընդհանրացնենք, հասարկության գոնե մի պատկառելի զանգված) հակված չէ կանգ առնելու, հասկանալու, գիտակցելու իր վիճակը, պրկել միտքը, մկանները և գնալ իրական փոփոխությունների ճանապարհով: Նա առաջին իսկ հարմար առիթի և հնարավորության դեպքում ուզում է իրեն դուրս նետել երկրից և գնալ ապրելու այլոց ստեղծած համակարգերում: Իսկ երբ մնում է երկրում, առանց բողոքելու ապրում է հասարակական հոռի բարքերի ցեխաջրերի մեջ: Ահա այսպես էլ չի ստեղծվում որակյալ համակարգ և պատասխանատվության մեջ ապրելու միջավայր: Ավելին՝ նույնիսկ այդպիսի խնդիրներ չեն դրվում: Եթե մեր հասարակությունը պատասխանատվության ուժեղ կամ գոնե բավարար զգացում ունենար, ի՞նչ հրաշքով 44-օրյա պատերազմի պարտությունից հետո դրածոն կմնար կառավարության շենքում կամ էլ՝ ձայներ կհավաքեր 2021 թ. ընտրություններում: Սթափ միտքը, արժանապատվության զգացումը, կատաղության, վիրավորանքի և անհանդուրժողականության ալիքը մի վայրկյանում նրան պատով կտար ու քարշ կտար Նուբարաշենի քրեակատարողական մեկուսարան, ուրեմն՝ դա չկար: Սա ծանր փաստ է, դժվար մարսվող: Առհասարակ, Ճիշտ չի լինի ասել, թե հայը պատասխանատվության զգացում չունի, կամ այն շատ թույլ է: Ոչ, այդպես չէ, պարզապես մեր ժողովրդի պատասխանատվության զգացումը քաղաքական ու քաղաքացիական չէ, նաև ազգային և իրավական չէ: Խորհրդային երկրի փլուզմանն արագ հաջորդեց լիբերալ արժեհամակարգը: Մարդը նույնիսկ չհասցրեց իր անկախ պետության քաղաքացին դառնալ, նրան խցկեցին գոյատևման և սոցիալական վանդակի մեջ՝ ստիպելով, որ նա կապիկի պես վազվզի բանանի հետևից: Սա նշանակում է, որ մարդու պատասխանատվության տիրույթն



այլևս սեփական ընտանիքն է, թվացյալ բարեկեցիկ կյանքը, հեղինակությունը և նմանատիպ բաները: Ազգային ու հասարակական պատասխանատվության ընկալումներն ինքնաբերաբար ստորադասվում են վերը նշված պատկերացումներին: Հայ մարդը միանգամից դարձավ անձնական և իր ընտանիքի շահերի գոյակռվի «կատարյալ մարտիկը», իսկ ազգային ու պետական հարցերում, ավա՜ղ, չի ուզում կամ չի կարողանում պատասխանատվություն կրել: Սա իսկական պարադոքս է: Պատասխանատվությունն ինչքան էլ վերացարկված բան թվա առաջին պահին, անասելի կոնկրետ է իր դրսևորումների մեջ: Այն շարժում է, ինչպես հոդվածի սկզբում նշեցինք՝ լավ գիտակցված արձագանքն է ուղղված իր կյանքին, ներկային ու ապագային: Երբ հասարակությունը ստանձնել է պատասխանատվությունը, պետք է առաջ գնա: Սա շատ նման է հեծանիվ քշելուն, եթե վարողը ոտնակը չսեղմի, վայր կընկնի: Այդպես պատահում է սկսնակների հետ: Միայն շարժվող հեծանիվն է գտնվում ճիշտ հավասարակշռության մեջ, իսկ հեծանվորդը գիտի՝ դեպի ուր է գնում և ինչու: Նույն կետում դոփելը ու գալարվելը, նույնն է թե՝ սպասել գազանի երախի փակվելուն, որտեղ արդեն հայտնվել ենք ծախու մարդկանց պատճառով: Ու չի կարելի գազանի երախում նստած ապավինել մի ինչ որ գերբնական ուժի կամ Աստծուն: Հանգիստ թողեք Աստծուն, նա այստեղ անելիք չունի, նա մեզ տվել է ամենակարևորը՝ բանականություն, միտք ու կամք: Համազգային ու հասարակական պատասխանատվության զգացումն այն լույսն է, որ պարզություն կմտցնի մեր բոլոր քայլերում ու նպատակների մեջ:

«Է»-ն իբրեւ ազգային խորհրդանշան
Ինչո՞ւ «Է»-ն եւ ոչ թէ ուրիշ մը...

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Խօսքը չի վերաբերիր այն երեք խորհրդանիշերուն (դրօշ, զինանշան եւ հիմն), որոնք պետութիւնը կը խորհրդանշեն, այլ անոնց, որոնք իբրեւ ազգային միասնականութեան խորհրդանիշ, իբրեւ Ազգային սրբութիւն կը զետեղուին նաեւ պետական դրօշներու վրայ:

Էջմիածին, 1978. Յունուար

«Թարգմանչաց Տօներ»ու ծիրէն ներս, տարին երկու անգամ, տիկիններու եւ ընկերուհիներու ուղեկցութեամբ Վազգէն Ա. Վեհափառին կ'այցելէինք, մէկը Յունուարին, ծննդեան տօնի, միւսը՝ Մայիսի սկզբին Համբարձման տօնի առիթներով, որոնց պարտադիր միշտ ներկայ կ'ըլլար նաեւ՝ Խորհրդային Հայաստանի «Կրօնից Նախարարը»: Վեհափառ Հայրապետը այնքան ջերմութեամբ ու մտերմաբար կ'ընդունէր ու կը հովանաւորէր մեզ, որ նոյնիսկ իր ներկայացուցիչները կը դրկէր «Թարգմանչաց Տօներ»ու միջոցառումներուն: Երբեմն մեզ հետ կու գար նաեւ Սիլվա Կապուտիկեանը որ շատ մօտ էր Վեհափառին: Այդ օր Վեհափառը իր հիւրասրահին մէջ ըստ արժանւոյն մեզ ընդունելէ ետք, տարաւ եւ ցոյց տուաւ վեհարանի նախասրահի պատին մէջ ամրացուած, միջին մեծութեամբ (մօտաւորապէս 70x50սմ) եւ իր պատուէրով իրագործուած կիրառական արուեստի երկու գեղեցիկ նմոյշ, որոնցմէ առաջինը խաչքար (աւելի ճիշդը՝ «խաչոսկի») մըն էր, իսկ երկրորդը՝ այբուբենը, երկուքն ալ ոսկեձոյլ ու ադամանդակուռ թանկագին քարերով նաշխազարդ: Սակայն մեզ համար մեծագոյն անակնկալն ու առաւել ցնցիչը այն եղաւ որ Վեհափառը մեզ ցոյց տուաւ նաեւ համեմատաբար փոքր (մօտաւորապէս 14 կամ 15սմ բարձրութեամբ) բրգաձեւ ոսկեձոյլ առարկայ (obelisk), մը որուն վրայ եւս ուղղահայեաց կերպով դրոշմուած էր այբուբենը, դարձեալ նաշխազարդուած՝ ադամանդակուռ թանկագին քարերով: Մենք համախմբուած էինք իր շուրջ եւ մեզմէ իւրաքանչիւրը կը փորձէր աւելի մօտէն տեսնել այդ փոքր մասունքը: Վեհափառ Հայրապետը բացատրեց, թէ Պոլսոյ պատրիարքարանը այցելելու առիթով, օրուայ պատրիարքը նուիրեր է իրեն այդ բրգաձեւ այբուբենը ըսելով. *«Տար Էջմիածին, փրկէ այս մասունքը, որովհետեւ ասիկա նախաձեռնած ու շինել տուած են Դանիէլ Վարուժանը, Սիամանթօն, Ռուբէն Սեւակն ու անոնց ընկերները, Այբուբենի ստեղծման 1500-ամեակի առիթով»*: Վեհափառը ատկէ ներշնչուած, Էջմիածնի գանձատան մէջի գոհարեղէնները կը հաւաքէ ու կ'որոշէ շինել տալ ոսկեձոյլ խաչքարն ու այբուբենը: Մեր տպաւորութիւնը մեծ էր ու ոգեշնչող, մենք կախարդուած էինք...: Յանկարծ, այդ գերլարուած պահուն, ան կանգ առաւ, գլուխը բարձրացուց, թեթեւ մը մօրուքը շփեց ու նշանակալից հայեացք մը պտտցնելէ ետք ներկաներուն վրայ, մատնացոյց ընելով «Է» տառը ըսաւ.

- Մեր ոսկերիչ արուեստագէտները, աւելի քնքշութեամբ ու նրբութեամբ են հիւսել 7ոդ տառը՝ «Է»-ն, որովհետեւ դա մեր ազգային հոգեւոր արժէքների ու հաւատքի Էութիւնն է, Սուրբ է ու խորհրդանշում նաեւ Աստուծոյ ներկայութիւնը մեր մէջ...:

Յանկարծ յիշեցի որ Էջմիածնի եղեռնի յուշարձանի վրայ նոյնպէս **«Է»** տառը կայ: Չկրցայ ինքզինքս զսպել եւ ընդմիջելով հանդերձ զինք, ըսի.

- Վեհափառ Տէր վանքի բակում զետեղուած Եղեռնի յուշարձանի վրայ եւս «Է» տառը քանդակուած է... ի՞նչ կապ ունի ցեղասպանութեան հետ...:

Անգամ մը եւս իր պատկառելի հայեացքը պտտցուց մեր վրայ, խոր շունչ քաշեց, ու ամենայն հանդարտութեամբ շարունակեց.

- Այո, Եղեռնի յուշարձանի վրայ «Է» տառը դրուել է, որովհետեւ յանուն Է-ի, յանուն մեր ազգային հոգեւոր արժէքների ու ինքնութեան, յանուն մեր հաւատքի ու էութեան պահպանման, մէկ ու կէս միլիոն զոհ տուինք 1915-ին: «Է»-ն դրոշմուած է նաեւ Սուրբ Էջմիածնի խորանի ճակատին, որ մեր եկեղեցին պահպանել ու պաշտպանել է դարերու ընթացքին, որպէս ազգային Սրբութիւն Սրբոց:

Այդ օրը միայն տօնական չէր մեզ համար, այլեւ Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ կայացած

խորհուրդներով լի հոգեպարար պահ մը, որուն առաջին անգամ ըլլալով Խորհրդային Հայաստանի «Կրօնից նախարարը» կը բացակայէր... բախտով:

Հոգեպէս լիացած, հաւատքով ամրապնդուած, ու աստիճան մը աւելի հայացած... համբուրելէ ետք Վեհափառ հօր օրհնեալ աջը, թէեւ հրաժեշտ տուինք իրեն, սակայն ան դուրս եկաւ մեր հետ, տարաւ Եղեռնի հուշարձանի դիմաց, եւ բացատրելէ ետք անոր վրայի «Է»ի պատկերուած Կենաց ծառի, Արծիւի ու քանի մը տեսակի խաչքարերու իմաստն ու բովանդակութիւնը, ցոյց տուաւ մեզ յուշարձանի կողքին զետեղուած եւ Խրիմեան Հայրիկի յիշատակին նուիրուած կոթողը եւս, եւ մեր ուշադրութիւնը հրաւիրեց անոր վրայ փորագրուած հայրենի հողի մասին մակագրութեան, զոր անհրաժեշտաբար նոյնութեամբ կը մէջբերեմ.

«Ահա Թողում ձեզ մշտաիւսս կրակ, որ Հայն իր հայրենապուր հողէն չբաժնուի, զի հողն պէտք է: Կենաց եւ մահու օր պինդ գրկէ Հողն» *Հայրիկ:*

Ապա Վեհափառը աւելցուց.

*- Հայրիկի այս խօսքերից յետոյ նրա «**Երկաթէ Շերեփի**» պատգամը աւելի իմաստալից ու այժմէական է հնչում...:*

Այսպէս էր Վազգէն Վեհափառը, որ իր ջինջ հայրենասիրութեամբ, ջրդեղուած ազգային դարաւոր հաւատքով, ամուր անհատականութեամբ, բանիմացութեամբ ու հայրական վարուելակերպով, բնազդաբար յարգանք ու ակնածանք կը «պարտադրէր» մեզ... եւ ոչ միայն մեզ...: Այս բոլորէն ետք ինծի կը մնար ուսումնասիրել Է տառի իմաստն ու դերը Հայ մշակոյթի մէջ:

Այդպէս ալ ըրի: Պարզուեցաւ որ Ուխտասարի եւ Գեղամայ լեռներու ժայռապատկերներու վրայ պարբերաբար կը հանդիպինք Է տառին, սակայն մեզ համար ամէնէն յատկանշականը Մեծամորեան աստղադիտարանի փոքր բլուրի կողքի ժայռապատկերներու վրայ դրոշմուած «Է»-ն է, պատկերուած այլ երկու կարեւոր խորհրդանշաններու (Եռանկիւնի եւ հաւասարակողմ վարդեակի) կողքին:

Հոս փակագիծ մը բանալով պէտք է տեղեկացնեմ հետեւեալը. երբ Երեւանի «Նեմեսիս» հուշարձանի զետեղումը նախաձեռնող տղաքը՝ Արմէն Գէորգեանն ու Կարէն Արիստակէսեանը խնդրեցին ինձմէ «Է» տառը մեկնաբանել. չէի կրնար մերժել: Անոնք Նեմեսիսէն ետք որոշած են (դարձեալ իրենց նախաձեռնութեամբ) կառուցել այս անգամ Սողոմոն Թեհլիրեանի յիշատակին նուիրուած յուշարձան մը, որուն մանրակերտը պատրաստ է արդէն տաղանդաւոր քանդակագործ՝ Յակոբ Ճանպազեանի հեղինակութեամբ, զոր կոթողի ճիշդ ճակատին դրոշմած է «Է» տառը: Որովհետեւ յատուկ պատասխանատուութիւն կ'ենթադրէ «Է» տառը հանգամանօրէն վերլուծելն ու մեկնաբանելը, որոշեցի անգամ մը եւս այցելել Էջմիածինն ու Մեծամորեան ժայռապատկերները: Խորհրդային տարիներէն ու նոյնիսկ թանգարանի կառուցումէն ետք ՀՀ նախկին փոխնախարար Նարինէ Թուխիկեանի հետ փորձած էինք, սակայն իշխանութիւնները թոյլ չէին տուած մօտենալ Մեծամորին «ապահովական» նկատառումներով: 2024-ի Յունիսին դարձեալ Նարինէի հետ էի, նախ այցելեցինք Էջմիածին լուսանկարելու համար Եղեռնի յուշարձանն ու Վազգէն Վեհափառի դամբարանը եւ ապա ուղղուեցանք դէպի Մեծամօր: Այս անգամ հեշտութեամբ տեղ հասանք: Թանգարանը, լաւ կազմակերպուած էր ու ներկայանալի: Մեզ ընդունեցին ջերմութեամբ, բացատրելէ ետք ամէն ինչ ցոյց տուին նաեւ ժայռապատկերներու տեղը: Ինչ ըսեմ, սրտի կսկիծով պիտի նշեմ որ ժայռապատկերները կիզիչ արեւու ու հողմերու քմայքին տակ լքուած վիճակի մէջ են, եւ անյապաղօրէն ֆիզիկապէս զանոնք պաշտպանելու ու փրկելու կարիքը կը զգացուի... յատկապէս «Է» տառը իր յարակից երկու միւս խորհրդանշաններով...:

Վազգեն Ա. Կաթողիկոսը Միլվա Կապուտիկյանի և այլ մտավորականների հետ

Յետագային իմացանք, որ Վազգէն Վեհափառը այնքան բարձր կը գնահատէր «Է» տառի սրբութիւնը, ու կը կ'առնչէր զայն Հայ քրիստոնէական հաւատքին, իր կտակին մէջ կը թելադրէ, որ իր մահէն ետք իր դամբանաքարին վրայ փորագրեն Խաչը, իսկ Խաչին վրայ քանդակէն «Է» տառը: Իսկ 2016-ին երբ Զանգեզուր գացինք տիկնոջս՝ Էլոյին, հնագէտ-պատմաբան Վազգէն Գէորգեանին եւ անոր մէկ ընկերոջը հետ, այցելելու համար «Քարահունջ»ի հազարամեայ աստղադիտարանն ու Ուխտասարի ժայռապատկերները. Վազգէնը Գորիսէն դէպի Մեղրի տանող ճանապարհին կանգնեցուած յուշարձան խաչքար մը ցոյց տուաւ մեզի, որուն վրայ եւս «Է» տառը կար: Մեր միջնադարեան բազմաթիւ ու բազմատեսակ խաչքարերու վրայ յաճախ կը հանդիպինք տարբեր ոճաւորումներով Է տառերու, սակայն այս մէկը իւրայատուկ էր ու յատկանշական, որովհետեւ Խաչքարը զետեղուած էր Վազգէն Վեհափառի այդ տարածաշրջանը այցելելու առիթով, իսկ «Է» տառը անոր վրայ դրոշմուած էր Վեհափառի յատուկ թելադրանքով: Այո, Վազգէն Վեհափառն այսքան բարձր կը գնահատէր ու կ'արժեւորէր Է տառն ու անոր խորհուրդը: Եւ բնաւ պատահական չէ, որ մինչեւ այսօր «Է» տառին կը հանդիպինք բազմաթիւ թէկուզ ժամանակակից կոթողներու վրայ եւս... իբրեւ ազգային միասնականութեան խորհրդանշանի:

Թէեւ այլ խորհրդանշաններ եւս (ինչպէս. Արարատ լեռը, Նուռը, Անմահութեան Նշանակը, Վիշապաքարը, Խաչքարը, Որդան Կարմիրը...) կարելի է առաջարկել իբրեւ Հայկականութեան ազգային խորհրդանիշ, այնուամենայնիւ, սակայն, իր իմաստային բովանդակութեամբ, ցեղային պատկանելիութեամբ, եւ մանաւա՜նդ իր ուրոյն բնոյթով յարմարագոյնը **«Է»** տառը կը թուի ըլլալ: Հակառակ անոր որ **«Է»**-ն հինէն ի վեր, պատմական խորքերէն՝ մեր ցեղային արմատներէն բխող, ազգային մեր գոյութեան գրաւականն ու մեր հաւատքի Էութիւնն իսկ հանդիսացած է, դեռեւս կը շարունակէ լուսանցքի վրայ մնալ... մեր մշակոյթի մէջ: Չես գիտեր ինչո՞ւ շատերու կողմէ նոյնի՜սկ կ՚անտեսուի... ու մոռացութեան կը մատնուի:

Ինչո՞ւ Գանատայի (Մէյփլլ ծառի տերեւը), Թուրքիոյ (Մահիկն ու հինգթեւանի աստղը), Սինկափուրի (Օրգիտէ ծաղիկը), եւ կամ Լիբանանի (Մայրի ծառը) նման խայտաբղէտ ազգաբնակչութիւն ունեցող, առանց ազգային պատմական հիմքի կրցած են գտնել իրենց միասնականութիւնը ամրապնդող խորհրդանշան մը իսկ մենք ոչ...

Ինչո՞ւ պատմութեան ընթացքին հայութեան նման հալածուած ու տառապած, նորակազմ պետութեան տէր, սակայն աշխարհի հնագոյն ժողովուրդներէն մէկը, հրեաները պիտի կարողանան ունենալ իրենց ազգային միասնական խորհրդանշանը իսկ մենք՝ ոչ... հակառակ անոր որ պատմականօրէն մենք շատ աւելի հարուստ ենք ազգային եւ հոգեւոր խորհրդանշաններով քան՝ իրենք:

Հակառակ անոր որ հրեաներու ազգային պատկանելիութիւնը առաջին հերթին եւ ամէն բանէ վեր, պայմանաւորուած է կրօնքով՝ Մովսիսականութեամբ, անոնք իրենց կրօնական խորհրդանշաններէն որեւէ մէկը (Matzevot. Challah, Mezuza, Shofar, Torah, Memorah...) չորդեգրեցին իբրեւ ազգային միասնութեան խորհրդանշան: Այլ որդեգրեցին Դաւիթ թագաւորի զինուորներուն վահանին վրայ պատկերուած վեց թեւանի աստղը՝ (իրարու մէջ ագուցուած երկու հաւասարաթեւ եռանկիւնին), որ Սողոմոն Իմաստունի կնիքին վրայ եւս ի յայտ կու գայ: Հակառակ անոր որ պատմականօրէն հրէական ազգային խորհրդանշանը չէ եղած եւ նոյնիսկ Հին Կտակարանի՝ «Թանախ»ի մէջ եւս չի յիշուիր վեց թեւանի աստղը, անոնք 17րդ դարուն յատուկ որոշումով ընդունեցին զայն իբրեւ «Դաւիթի Աստղ», որ ոչ միայն դարձաւ իրենց ազգային միասնականութեան խորհրդանշանը, այլեւ երբ անկախութիւն ձեռք բերին, զետեղեցին զայն նաեւ՝ իրենց պետական դրօշին վրայ: Այսօր հրեաները փոխան խաչի կամ մահիկի իրենց վիզէն կը կախեն «Դաւիթի Աստղ»ը, որ կը խորհրդանշէ. ***«Ապրուծոյ փոխարէն Ապրուծոյ օծեալի թագաւորութիւնը ամբողջ աշխարհի եւ ողջ մարդկութեան վրայ»***: Անոնք նոյնիսկ կրցան վերականգնել իրենց մեռած մայրենի լեզուն: Ի՞նչը կը խանգարէ մեզ որ մենք չկարողանանք ընդունիլ **«Է»** տառը, իբրեւ մեր ազգային հաւատամքի եւ աստուածային *Էութեան* խորհրդանիշ, իբրեւ ազգային միասնականութեան սիմպոլ, զետեղել զայն ՀՀ պետական դրօշի վրայ ու հպարտութեամբ կախել զայն նաեւ մեր վիզերէն... Թէկուզ հայկական խաչի հետ եւ կամ անոր վրան... ինչո՞ւ չէ նաեւ՝ զիրար ճանչնալու համար: Մանաւանդ որ պատմականօրէն ապացուցուած է թէ մեր ցեղային արմատներէն՝ դարերու խորքերէն յառնած **«Է»** տառը մեր եկեղեցին ընդունած է իբրեւ Սրբութիւն Սրբոց, եւ իբրեւ աստուածային լոյս կը դրոշմէ զայն Հայ Առաքելական եկեղեցւոյ խորաններու ճիշդ ճակատին, եւ կամ եկե-

ղեցիներու մուտքի ճակտոնապատին, եռանկիւնի մէջ, որմէ կը ճառագայթէ տիեզերաստեղծ աստուածային Լոյսը, որը սակայն արեւը չէ: Տիեզերական այն լոյսն է, որ ուղիղ կը համեմատի քրիստոնէական վարդապետութեան, որովհետեւ քրիստոնէական տիեզերաստեղծ աստուածութիւնը եւս, իր երրորդութեամբ հանդերձ համակ Լոյս է, Սէր ու Բարութիւն...:

Հաստատելու համար «Է»-ի աստուածային բնոյթը, մեր մեծագոյն մատենագիրներէն մէջբերենք քանի մը վաւերական վկայութիւններ:

Ա - Կրնա՞յ պատահական ըլլալ Մեծն Նարեկացիի կարծիքը, որ ուղղակիօրէն կ՚ըսէ.

«Ինքնագոյ «Է»-ի անունը Ապրուած է»:

Բ- Մոլեռանդ հակահեթանոս եւ քրիստոնէական ջինջ հաւատքի տէր՝ Եզնիկ Կողբացին եւս կը յիշէ որ.

«Է - կատը եւ Մի Էութիւնը մշտնջենական է եւ բոլորի Գոյացման Պատճառը»:

Գ- Իսկ իր ժամանակի մեծագոյն գիտնականներէն ըլլալով, Անանիա Շիրակացին կ՚աւելցնէ .

«Ի սկզբանէ Էր «Է»-ն, անսիզելի եւ բացարձակ...»:

Եւ ի վերջոյ մեր միջնադարեան հոգեւորականները հետեւեալ կերպով կը բացատրեն ու կ՚իմաստաւորեն **«Է»** ն:

«Է Տատը անեղ (անեղծանելի)***է ու անակիզբ, անծին ու անժամանակ, Անեզր եւ անմահ»:***

Ահաւասիկ թէ ինչու «Է» տառը մինչեւ հիմա մեր հոգեւոր հայրերու կողմէ կը գնահատուի ու կը մեծարուի իբրեւ ազգային հաւատքի Սրբութիւն Սրբոց...

Ահաւասիկ թէ ինչու մէկ ու կէս միլիոն հայեր նահատակուեցան յանուն «Սրբութիւն Սրբոց **«Է»**-ի:

Ահաւասիկ թէ ինչու Հայ Արդարահատոյց հերոսները ոչ միայն ձեռնարկեցին պատժել ու ոչնչացնել «Չար»ն ու աշխարհը վնասազերծել «Չարութենէ», այլ նաեւ՝ պահել ու պահպանել Աստուածային Սիրոյ եւ Բարութեան մարմնացումը հանդիսացող՝ Սրբութիւն Սրբոց **«Է»**-ն, որ մեր ազգային հաւատքն ու ինքնութիւնը է...:

Ահաւասիկ թէ ինչու Է-ն արդարօրէն զետեղուած է նաեւ Սողոմոն Թեհլիրեանի յիշատակին նուիրուած յուշակոթողի վրայ, որուն մանրակերտը պատրաստ է արդէն. կը մնայ նախաձեռնել ու իրագործել այն:

Յ.Գ.- **«Է»**- տառի եւ կամ առհասարակ **«Է»**- հնչիւնի մասին եղած վերլուծումներն ու մեկնաբանութիւնները այսքանով չեն սահմանափակուիր: Եթէ խորանանք հարցին մէջ պիտի նշմարենք որ **«Է»**-ի մեծարանքն ու պաշտամունքը տարածուած կը թուի ըլլալ նաեւ այլ մշակոյթներու մէջ: Օրինակի համար Շումեր-Աքքատական Էրիտու, Էնգին, Էյա կամ Հայա աստուածութիւնները, հին յունական Դելփեան սրբարանի մէկ պատին վրայ փորագրուած է «**E ydos**» բառը, որ կը նշանակէ. «Ծանիր զքեզ «Է» ով»: Եւ կամ հին կտակարանի եփրայերէն այն նախադասութիւնը որ կ՚ըսէ. **«Էհիա Աշիր Էհիա»,** որ կը թարգմանուի. «*Ես այն եմ որ Է-ն է*»: Այս բոլորը եւ ուրիշներ եւս իրենց հնչիւնագրերով ու իմաստներով թէ ի՞նչ կապ կամ առնչութիւն կրնան ունենալ**«Է»**-ի հետ, մանրազնին եւ մասնագիտական ուսումնասիրութեան կը կարօտի: Յատուկ ուսումնասիրման ու մեկնաբանման կը կարօտին նաեւ հին յունարէն «Ego», լատիներէն «Elementa», եւ հայերէն էակ, էգ, էք - (արարած իմաստով), Էութիւն, Էական, Էացում եւ Անէացում բառերը. յատկապէս վերջին երկուքը, որոնց հոմանիշները գոյութիւն չունին այլ լեզուներու մէջ, ինչպէս կը հաստատեն հայ լեզուաբաններէն շատեր:

Նոյնիսկ գոյութիւն ունի բաւականին բարդ ու կնճռոտ ընկալելի ***«Միզէ»*** կրօնափիլիսոփայական (իմաստասիրական) հասկացութիւնը, որուն մասին գրուած են բազմաթիւ յօդուածներ, մենագրութիւններ եւ նոյնի՚սկ գիրքեր: Այս մասին գուցէ այլ առիթով մը անդրադառնանք... հանգամանօրէն:

Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության արտացոլումը «Ճակատամարտում»

Արմեն Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հրապարակագիր

Պատմության սկզբնաղբյուր են հանդիսանում նաև պարբերական մամուլի օրգանները, որոնք ոչ միայն ժամանակին արձանագրում են փաստերն ու իրողությունները, այլև անհրաժեշտ չափով գնահատում և իմաստավորում են դրանք:

Հայոց պատմության նոր և նորագույն շրջանի վավերացման, գնահատման ու իմաստավորման շուրջ մեծ ծավալի նյութ է ամբարված հայկական օրաթերթերի և հանդեսների էջերում: 20-րդ դարի երկրորդ տասնամյակում հայ պարբերական մամուլի այդ կարգի կարևոր օրգաններից մեկն էր Կ. Պոլսում լույս տեսնող «Ճակատամարտ» օրաթերթը: Այն թեև համարվում էր ՀՅԴ ոչ պաշտոնական օրգանը (նրա նախորդը հանդիսացել էր «Ազատամարտը», որը լույս էր տեսել 1909-1915 թթ. և փակվել էր Թալեաթի կարգադրությամբ), սակայն շնորհիվ լայնախոհության, դարձել էր հայ հանրության սիրված և բարձր ժողովրդականություն ունեցող պարբերականներից մեկը: «Ճակատամարտ» պարբերականը Բոսֆորի հեռուներից աչալրջությամբ հետևում էր նորանկախ Հայաստանի Հանրապետությունում և նրա շուրջ ընթացող դեպքերի և իրադարձությունների ծավալմանն ու զարգացմանը:

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, վաստակաշատ գիտաշխատող Մարիամ Հովսեփյանը սույն թեմայով իր մի քանի տարիների ուսումնասիրությունը հրատարակել է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ (1918-1920 ԹԹ.)» խորագրով: Այն տպագրվել է ՀՀ ԳԱԱ

պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Գրքի խմբագիրն է ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Խառատյանը:

246 էջ ընդգրկող աշխատությունը հիմնավորապես ներկայացնում է Հայաստանի Առաջին Հանրապետության և հայաստանաբնակ ժողովրդի առջև ծառացած հիմնախնդիրների ու մարտահրավերների քննական վերլուծությունը, դիտարկումներն ու մո-

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

ՕՐԱԹԵՐԹ

ՀՈՒԼԻՍ 27 1922

Djagatamart

Journal Quotidien Arménien

PÉRA, RUE CANKITAN, 57

Téléphone: Péra 927

ՄԵՐ ԽՕՍՔԸ

ՈՒՇԱՑԱԾ ՓՈՐՁ ՄԸ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՄԵՐ ՄԱՄՆԱՎՈՐ ԼՈՒՐԵՐԸ

ԱՆԳԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԾՈՒՍ ՍԻԼԱՀԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԴ ԵՎ ՀԱՅՈՑՆ

տեցումները, Սփյուռքի հայության վերաբերմունքն ու դիրքորոշումները «Ճակատամարտ» պարբերականում: Ըստ այդմ, քննության են առնվում թերթի էջերում հետևյալ հիմնահարցերը. հայ տարագիրների հանդեպ քաղաքականությունը, գաղթականների և որբերի ներգաղթի խնդիրները, խնամատարության գործը, հայոց խորհրդարանի աշխատանքները, կառավարության գործունեությունը, Միացյալ, Ազատ և Անկախ Հայաստանի մասին հայտարարությունը, հայ-վրացական պատերազմը, Միլլի շարժումը, «Հայրենիքի տուրք»-ը, Սևրի պայմանագիրը, Մոսկվայի պայմանագիրը և հայ ազգային կյանքի շուրջ այլ կարևոր հարցեր ու հարցականներ:

Առաջաբանում հեղինակը գնահատելով իր կատարած աշխատանքը նշում է, որ մեզանում առաջին անգամ ընթերցող լայն հասարակայնությանը և գիտական շրջանակներին ներկայացվում է Օսմանյան Թուրքիայի մայրաքաղաք Կ. Պոլսում Մեծ եղեռնից հետո հրատարակված և այդ օրերին բարձր վարկանիշով աչքի ընկած «Ճակատամարտ» օրաթերթի խմբագրակազմի դիրքորոշումները՝ կապված 1918-20 թթ. հայ ազգային կյանքի կարևորագույն շրջադարձերի հետ: Ընդ որում, սկզբնաղբյուր ծառայելուց բացի, «Ճակատամարտի» էջերում արտահայտված տեսակետները, վերլուծական նյութերն ու հաղորդումները անտարակուսելիորեն ունեն արևմտահայ մտավորականության մի շրջանակի վավերացված տեսակետների և դիրքորոշման արժեք և նշանակություն:

Աշխատության հեղինակի խորին համոզմամբ մենագրության մեջ ամփոփված վերլուծական կոնտենտը՝ որպես առաջին հանրապետության գոյատևման տարիների մասին հավաստի սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող նյութ, «առավել կամբողջացնի 1918-1920 թվականների անցուդարձի, պետական ու դիվանագիտական ծանր աշխատանքի, ինչպես նաև խորհրդայնացման առաջին տարիներին դրանց և Հայկական հարցին առնչվող հանրային կարծիքի ու մոտեցումների վերաբերյալ մեզանում առկա պատկերացումները» (էջ-5):

Մենագրությունը բաղկացած է 16 բաժիններից, տեղանունների և անձնանունների ցանկերից:

Աշխատությունը գրված է վերլուծական շարադրանքով՝ պատմահամեմատական մեթոդի հմուտ և իմաստալից կիրառումով:

Հայ ազգային կյանքի մի շարք կարևորագույն հիմնահարցեր ներկայացված են այնպիսի նորովի մոտեցումներով, որ ոչ միայն թարմ ասված խոսքի, այլև նոր հայտնաբերված փաստի տպավորություն են թողնում ընթերցողների վրա: Հատկապես այդպիսի զգացողություն են ծնում այն թեմաների արծարծումները, որոնք կապված են Հայկական հարցի, հայ-թուրքական հարաբերությունների ընթացքի, Սևրի դաշնագրի, Մոսկվայի հակահայ պայմանագրի, Հայաստանի խորհրդայնացման, Հայոց ազգային տան գաղափարի հետ:

Ներկայացնելով «Ճակատամարտ» պարբերականի դիրքորոշումներն ու տեսակետները, հեղինակն այս ամենին ավելացնում է սեփական դիտարկումներն ու դիրքորոշումները, զուտ անձնական պրիզմայով անցկացրած վերլուծություններն ու բնութագրումները, որոնք շատ հետաքրքրական են և յուրովի մտածողության արգասիք: Այսպես, ներկայացնելով Ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի պոլիս այցելությունը օրաթերթի վկայություններով, միաժամանակ արտահայտում է սեփական տեսակետները, տողատակում քննադատության ենթարկելով այլևայլ հնչող տեսակետները. «Անկախ այն հանգամանքից, թե իրականում ինչ հեռահար նպատակներ էին հետապնդում խորհրդային իշխանությունները ՀՕԿ-ի (Հայաստանի Օգնության կոմիտե - Ա. Կ.) և դրա միջոցով սփյուռքյան կառույցների հետ կապ հաստատելիս, Հովհ. Թումանյանը դրանց հետ որևէ առնչություն չէր ունեցել, այլ ստանձնել էր ՀՕԿ-ի նախագահի պաշտոնը՝ ցանկանալով օգնել առաջին հերթին

ԱԶԱՏԱՄԱՐՏ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

AZATAMART

Hebdomadaire Arménien

2013

28-60

"ԵՍ ԵՄ, ԵՍ ԵՄ, ԻՄ ԱՆՈՒՆՆ Է ՊԱՏՓԱՐ ԵՒ ՎԱԽՃԱՆՆ ՅԱՂԹԱՆԱԿ,, — ՍԱՄԱՆԹՈ

ԱԶԱՏԱՄԱՐՏ

1290-56

MULTA PAUCIS

ԳՐՈՒԱԳ ՄԸ ՋԱՂՈՒՈՒ ԿՈՒԻՆԵՐԷՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

բնօրրան-հայրենիքից, տուն ու տեղից զրկված հայ որբերին և գաղթականներին...» (էջ-172):

Շատ հետաքրքրական են «Ճակատամարտի» դիտարկումները Հայաստանի հանրապետությունում սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքի զարգացման միտումների ու ուղղությունների վերաբերյալ: Թերթի ուշադրության կենտրոնում, Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի դժվարություններից ու ոլորտի զարգացման ծրագրերից ու միտումներից բացի, եղել է հատկապես հայոց նորաստեղծ պետության անկախությանը նպաստող հայացման քաղաքականությունը: Թերթում բազմաթիվ իրար հաջորդող հրապարակումներ եղան, որոնցում դրվատվում էր հայերենը պետական լեզու հռչակելու, պետականաշինության մեջ գրագրությունը լիովին և լիակատար կերպով մայրենի լեզվով իրականացնելու, հայկական նորանոր դպրոցներ բացելու և մեծ հոգատարություն դրսևորելու, ինչպես նաև Հայաստանի պետական համալսարան ունենալու քաղաքականությունը: Այսպես, 1919 թ. հունիսի 21-ին թերթը հայտնում էր, որ Երևանի քաղաքապետարանում տեղի էր ունեցել հայ մամուլի ներկայացուցիչների առաջին ժողովը, որտեղ հիմնվել էր Հայացման կոմիտեն, և ընդունվել էին մայրենի լեզվին վերաբերող կարևոր որոշումներ:

Ընդգծվում էր, որ Հայացման կոմիտեն ուժերի ներածին չափով պիտի նպաստեր երկրում գործող տարբեր հիմնարկների և հաստատությունների արագ հայացման գործընթացին:

Գրքի վերջին բաժինը վերաբերվում է հայոց ազգային տան գաղափար-տեսլականին: Օրաթերթի խմբագրությանը մշտապես մտահոգում էր միջազգային տարբեր խորհրդաժողովներում շարունակ քննարկվող արևմտահայության հետագա ճակատագրի և այդ համատեքստում Հայոց ազգային տուն հիմնելու գաղափարին կողմ և դեմ տեսակետների բախման վերջնական արդյունքը: Հետազոտողը նշում է, որ «Հայկական հարցը Լոզանի մեջ» ենթավերնագրի ներքո 1922-1923 թթ. համարյա ամենօրյա կտրվածքով ներկայացվող նյութերը պատկերացում են տալիս Հայոց ազգային տան առաջարկի շուրջ ծավալվող քննարկումների, կարծիքների և տեսակետների ծավալման, բախման և, առհասարակ, ընդհանուր տրամադրվածության մասին:

Սակայն թուրքերը մտադիր չէին որևէ զիջում կատարել ցեղասպանված հայությանը: «Ճակատամարտը» թուրքական թերթերից թարգմանաբար տպագրել էր Հայոց ազգային օջախի հետ կապված մի հոդված, որում բացահայտ կերպով հետևյալն էր ազդարարվում. «... Մենք այս երկրին մէջ չենք կրնար յոյներուն և հայերուն հետ ապրիլ» (էջ- 234):

Ամփոփելով ասվածը, պետք է անվարան արձանագրել, որ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Մարիամ Հովսեփյանին հաջողվել է ստեղծել գիտական չափանիշներին համապատասխան մի աշխատություն, որը կարդացվում է չթուլացող հետաքրքրությամբ: Աշխատությունը գրված է անթերի հայերենով, գեղեցիկ և գրագետ շարադրանքով:

Թերությունների ու թերացումների մասին առանձնապես ծավալվելու հարկ չկա: Թերևս որոշ կրկնություններ են նկատվում, փոքրիկ վրիպակներ կամ մտքի անհարթություններ, որոնք ոչնչով չեն ստվերում կամ նսեմացնում սույն աշխատության պատմագիտական արժեքն ու խորհուրդը:

Թարմությամբ, ասելիքի կարևորությամբ և գիտագործնական նշանակությամբ աչքի ընկնող այս մենագրությունը նախատեսված է ոչ միայն հայ մամուլի մասնագետների, պատմաբանների, քաղաքագետների, նաև բանասերների, այլև թեմայով հետաքրքրված ընթերցողների լայն շրջանակի համար: ■

Աւելի արդիւնաւէտ քարոզչական կառոյցի մը ի խնդիր

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Մեր ունակութիւններէն մէկն է դժգոհիլ մեր կառոյցներէն, ըլլան անոնք կազմակերպական, տնտեսական թէ այլ, բայց մեր ունակութիւններէն մէկն է նաեւ անդին չանցնիլ դժգոհելէն եւ սպասել, որ տեղ մը մէկը բան մը կը բարեփոխէ. ոեւէ մէկը՝ բացի մեզմէ:

Ներկայ յօդուածով չեմ կրնար անդրադառնալ մեր բոլոր կառոյցներուն, բայց կ՚ուզեմ կեդրոնանալ քարոզչականին վրայ, որուն նուազագոյն բարելաւումը կրնայ նպաստել մնացեալ կառոյցներուն ալ յառաջացումին, զարգացումին:

Բայց նախ քանի մը յստակացում կատարեմ:

- Այստեղ գործածուած «մեր» դերանունը կը վերաբերի բոլորիս, ոչ միայն մեր կուսակցութեան, այսինքն կը պատկանի մեր ազգային ընդհանուր հաւաքականութեան. առաջարկները կրնան վերաբերիլ մէկուն կամ միւսին կամ բոլորին:

- Երկրորդ՝ չեմ յաւակնիր այնքան գիտակ ըլլալ հայրենական քարոզչական միջոցներու իրավիճակին, ուստի նկատի պիտի ունենամ առաւելաբար Սփիւռքի կարելիութիւնները, թէեւ անխուսափելիօրէն հայրենիքն ալ իր դերակատարութիւնը կրնայ ունենալ այդ առնչութեամբ:

- Եւ երրորդ՝ քարոզչութիւն բառը չեմ ուզեր հասկցուի որպէս համազօրը propaganda-ին, այլ տեղեկատուութեան (information), որ կը բովանդակէ գիտութիւն, սակայն քարոզչութիւնը այսօր սկսած է գործածուիլ որպէս այդ գիտութիւնը, տեղեկութիւնը տարածելու միջոց կամ գործընթաց, ուստի զայն այդ առումով է, որ նկատի պիտի ունենամ:

Արդարեւ, ինչ կրնանք ըսել քարոզչութեան մասին. անոր բնոյթին, ձեւին կամ տեսակին, մակարդակին կամ աստիճանին, նպատակներուն եւ տարբեր երեսներուն մասին, որոնք լաւապէս հասկնալով է միայն, որ կրնանք նաեւ բարելաւումներու մասին խօսիլ:

Յստակ է, որ քարոզչութիւնը կը կատարուի բազմաթիւ ձեւերով: Առաջին հերթին մեր միտքը կու գայ մամուլը՝ իր գրաւոր (թերթի ու գիրքի), բանաւոր ու ձայնային (ձայնասփռումի) կամ լսատեսողական (պատկերասփռումի ու այլազան ընկերային առցանց հարթակներու) ձեւաչափերով: Այս բոլորը կրնան պատկանիլ անհատներու, կազմակերպութիւններու կամ հաստատութիւններու, ինչպէս նաեւ պետութեան ու պետական մարմիններու: Բայց նոյները, մանաւանդ առեւտրական բնոյթ ունեցողները կրնան դիմել նաեւ պաստառներու, ցուցանակներու եւ բազմաթիւ այլ միջոցներու, ներառեալ ինքնաթիռներով երկինքի վրայ ցուցադրութիւնները:

Քարոզչութիւնը կրնայ ունենալ ներքին թէ արտաքին հասողութիւն: Ներքին, օրինակ՝ ուղղուած հայութեան, կամ արտաքին՝ ուղղուած հայութեան բարեկամներուն կամ թշնամիներուն, ընդհանրապէս աշխարհին: Կամ՝ ներքին, ուղղուած կազմակերպութեան մը անդամներուն կամ հաստատութեան մը պաշտօնէութեան թէ յաճախորդութեան, դպրոցի մը աշակերտներուն ու անոնց ծնողներուն, կամ արտաքին՝ իրենցմէ դուրս գտնուող շրջապատին:

Կայ նաեւ մակարդակներու պարագան. տեղական (շէնքի մը, թաղի մը, թաղամասի մը, քաղաքի մը վերաբերեալ), շրջանային (նահանգի մը, պետութեան մը վերաբերեալ), գերշրջանային (ցամաքամասի մը, պետութիւններու դաշնութեան մը վերաբերեալ) կամ համաշխարհային (համայն մարդկութեան վերաբերեալ):

Քարոզչութեան նպատակներն ալ բազմաբնոյթ են: Ճշգրիտ, հետաքրքրական տեղեկութիւններ հաղորդել, սեփական համոզումները ծանօթացնել ու տարածել, նոր համակիրներ սիրաշահիլ, սխալ տեղեկութիւններու հակազդել, հակառակորդը կամ թշնամին քննադատել, դատափետել, արտադրանքին բարեմասնութիւնները գովաբանել եւ այլն:

Այս բոլորը կ'ենթադրեն որոշ տուեալներ, առանց որոնց շատ բան կը կաղայ, չ'արդիւնաւորուիր, ի զուր, յումպէտս կը վատնուի:

Ի՞նչ տուեալներու մասին է խօսքը:

Առաջին հերթին՝ պատրաստուած մարդուժի: Մեր գլխաւոր հարցերէն մէկն է այս: Այնպէս կ'ենթադրենք, օրինակ, թէ առանց անհրաժեշտ մասնագիտական ու մանաւանդ լեզուական պատրաստութեան, մեզմէ ոեւէ մէկը կրնայ դառնալ թղթակից, լրատու, հրապարակախօս կամ խմբագիր: Ասոր սրբագրութիւնը ամենէն առաջ կը պահանջէ մտայնութեան առողջացում, նիւթականի հաստատում, գործող անձերու աշխատանքի մասնագիտական քննարկում ու գնահատում եւ այլն, եւ այլն:

Այս հարցը վեր է մէկ կազմակերպութեան կամ մէկ հաստատութեան ուժերէն: Շատեր միասնաբար, օրինակ կուսակցական տարբեր շրջաններ, նոյնիսկ մէկէ աւելի կուսակցութիւններ կամ կազմակերպութիւններ կրնան համագործակցաբար հիմնադրամներ յառաջացնել, դասընթացքներ հաստատել կամ առկայ դասընթացքներու յղել իրենց թեկնածուները: Նախկին շատ լաւ ուսուցիչ մը անպայման չի կրնար լաւ խմբագիր դառնալ եւ կամ այլ պաշտօն ստանձնել քարոզչական կառոյցին մէջ: Նոյնիսկ ան կարիք կ'ունենայ վերապատրաստութեան: Այս առումով կարելի է ապահովել Հայաստանի կրթական հաստատութիւններու ներդրումը:

Բայց ուրիշ կարիքներ ալ կան: Առնենք լրատուութիւնը: Այս կը պահանջէ ընդհանրական համագործակցութիւն: Պէտք ունինք կեդրոնական տեղի մը, ուր կրնան հաւաքուիլ բոլոր լուրերը: Եթէ կը խօսինք Սփիւռքի մասին, ապա բոլոր գաղութներէն թղթակիցներ հոն կ'ուղարկեն իրենց գրածները, որոնք անյապաղ կ'ենթարկուին լեզուական սրբագրութեան, վերածուելով անսխալ արեւմտահայերէնի,



արեւելահայերէնի, անգլերէնի ու այլ լեզուներու ու կը խմբագրուին: Նաեւ կը կատարուի անոնց ամփոփումը՝ տեղին համաձայն այդ տարբերակը օգտագործելու համար: Այս աշխատանքը կը կատարուի առանց կուսակցական նախընտրութեան, կը կատարուի օրը 24 ժամ: Լրատու գործակալութիւն մըն է, որ կ'աշխատի, կ'աշխատի բոլորին գործակցութեամբ ու նիւթական մասնակցութեամբ: Անմիջապէս այդ բոլորը տրամադրելի կ'ըլլան բոլորին ու կրնան լոյս տեսնել՝ ըստ թերթերու հայեցողութեան: Այդ գործակալութիւնը կրնայ ստանձնել նաեւ հայրենի լուրերու նոյնանման պատրաստութիւնը: Նոյնը՝ յօդուածներու պարագային: Առանց բացառութեան մեր թերթերու մէջ լոյս տեսնող յօդուածները նուազագոյնը լեզուական սրբագրութեան կը կարօտին: Ոչ մէկ լուր եւ ոչ մէկ յօդուած կրնայ լոյս տեսնել կամ այլապէս հաղորդուիլ առանց այս գործընթացէն անցնելու:

Հարցը այստեղ կանգ չ'առներ: Ըլլան աշխատակիցները, ըլլան խմբագիրները պէտք ունին տեղեկութիւններու, որոնք ժամանակի ընթացքին հաւաքուած են, կուտակուած են մեր մամուլի էջերուն մէջ: Սա արխիւ է, որ մնայուն պահպանման, թուայնացման ու մատչելիութեան պէտք ունի: Այս եւս առանձնաբար տարուելիք աշխատանք է, ու մարզերէն մէկն է, ուր Հայաստանի ազգային գրադարանը կամ այլ հաստատութիւններ կրնան իրենց ներդրումը ունենալ:

Վերջապէս, հասկնալի է, որ նիւթական խարիսխի մը կարիքը կայ այս բոլորը իրականացնելու համար: Այդ խարիսխը կրնայ յառաջանալ միայն համահայկական գործակցութեամբ: Վերոյիշեալ իւրաքանչիւր աշխատանք ինքնաբերաբար չի կատարուիր: Բայց երկարաժամկէտ ծրագրումով կարելի կ'ըլլայ քայլ առ քայլ հասնիլ նման կատարողութեան:

Պէտք է պատասխանենք այն հարցումին, թէ պատրա՞ստ ենք մեր քարոզչական կառոյցի բարելաման ի խնդիր գործելու...

ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Վաշինգտոնում կայացած Ամերիկայի Միացեալ Նահանգների, Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների եռակողմ հանդիպման և համատեղ յայտարարութեան վերաբերեալ

2025թ. Օգոստոսի 8-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի միջնորդութեամբ Վաշինգտոնում ստորագրուած ԱՄՆ, Հայաստան, Ադրբեջան համատեղ յայտարարութիւնը ո՛չ միայն չի արտացոլում Հայաստանի Հանրապետութեան պետական և ազգային շահերը, այլև հարուած է Հայաստանի ինքնիշխանութեանը:

ՀՀ իշխող վարչակազմի որդեգրած քաղաքականութիւնն ու անհաւասարակշիռ որոշումներն ընդունուել են գաղտնիութեան պայմաններում: Դրանք ոտնահարում են հայ ժողովրդի հաւաքական իրաւունքներն ու կենսական շահերը, ստեղծում են անվտանգային նոր մարտահրաւէրներ և սպառնալիքներ, խաթարում են տարածաշրջանի ռազմաքաղաքական հաւասարակշռութիւնն ու ՀՀ տարածքային ամբողջականութիւնը՝ կասկածի տակ դնելով ՀՀ պետականութեան գոյութիւնը:

Շարունակական կեղծիքների, սուտ խոստումների և ամբոխավարութեան քողի ներքոյ ոտնատակ են տրուել Հայաստանն ու հայ ժողովրդի շահերը: ՀՀ իշխող վարչակազմի որդեգրած ապազգային և անհեռանկար քաղաքականութեան արտացոլանք հանդիսացող, իր էութեամբ հակապետական յայտարարութիւնը մէկ նպատակադրում ունի՝ ի գին ՀՀ իրաւունքների՝ օտար շահեր սպասարկող ՀՀ իշխող վարչակազմի վերարտադրութիւն՝ Հայաստանը դարձնելով աշխարհաքաղաքական շահերի բախման թատերաբեմ:

Ադրբեջանի շարունակական նախապայմանների, արցախահայութեան նկատմամբ իրականացուած ցեղասպանական գործողութիւնների, Արցախի էթնիկ զտման և ամբողջական հայաթափման, ՀՀ տարածքների բռնազաւթման, Բաքւում ընթացող կեղծ դատավարութիւնների և արցախահայութեան վերադարձի իրաւունքի ոտնահարման և յանուն շահի այս ամէնի վրայ մեծ տէրութիւնների աչք փակելու պայմաններում՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև վստահութեան մթնոլորտի ձևաւորումը ո՛չ միայն իրատեսական չէ, այլև՝ բնոյթով կապիտուլյացիոն:

Ըստ այդմ.

- Յայտարարում ենք, որ Արցախի հակամարտութիւնը լուծուած չէ և միջազգային հանրութիւնը, մասնաւորապէս ԵԱՀԿ-ն, որպէս այս խնդրի կարգաւորման միջազգային օրինական մանդատ ունեցող միակ հարթակ՝ պարտաւոր են գործել այն յանգուցալուծելու ուղղութեամբ:
- Ընդգծում ենք, որ ստորագրուած յայտարարութիւնը, ըստ էութեան, օրինականացնում է միջանցքի գաղափարը և ուղղուած է բացառապէս ադրբեջանական շահերի սպասարկմանը:
- Հաստատում ենք, որ ցանկացած անուամբ և կարգավիճակով՝ Ադրբեջանին Հայաստանի Հանրապետութեան տարածքով «անխոչընդոտ հաղորդակցութիւն» տրամադրելը, իրականում «թուրանական միջանցք»-ի իրացում է և Հայաստանի ինքնիշխանութեան ոտնահարում:
- Պահանջում ենք՝ ՀՀ տարածքից Ադրբեջանի զինուած ուժերի դուրսբերում, Արցախի ռազմաքաղաքական պատանդների անյապաղ ազատ արձակում, Արցախի հայութեան հաւաքական, անվտանգ, երաշխաւորուած և արժանապատիւ վերադարձի համար պայմանների ստեղծում:
- Համոզուած ենք, որ ռազմական գործողութիւնների և ցեղասպանական յանցագործութիւնների հետևանքով ձևաւորուած ստատուս քվոն չի կարող յանգեցնել կայուն խաղաղութեան:

Հ.Յ.Դաշնակցութիւնը հաւատարիմ է մնում ժողովրդավարութեան, արդարութեան և արժանապատիւ խաղաղութեան հաստատման միջազգային սկզբունքներին:

ՀՅԴ ԲԻՒՐՕ

09 Օգոստոսի, 2025 թ.

ԴՐՕՇԱԿ

1990 թվականի օգոստոսի 23-ին
Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը
ընդունեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը: